

ԻՐ ՏԵՏՐԱԿՆԵՐ — ԹԻԻԻ

Ա Ց Ո Մ

ՄԵՐ ՀԱՒԱՏԱՄՔԸ

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ



ՃԱԽՃԱԽՈՒՏՔԸ

1910

ՀՐԱՏ. ԱՐՄԻԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ

Կ. ՊՈՒԻՍ

ՄԵՐ ՀԱՒԱՏԱՄՔԸ


23.1(47.925) Ա.Տ.ՈՄ

Ա-81

ՄԵՐ ՀԱՒԱՏԱՄՔԸ

A $\frac{I}{9672}$

~~1-466~~



Հրատարակուրիւն


1910

ԱՐՄԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱՎԱՃՍՈՒԱՆՈՑԻ

Կ. ՊՈՒԼԻՍ



ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԷՆ



ՓՈԹՈՐԻԿԷՆ ՅԵՏՈՅ ԵՈՐ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ



1908ին, Օսմանեան Սահմանադրութեան վերջայտարարութենէն յետոյ, Օսմանեան Խորհրդարանի առաջին պատգամաւորական ընտրութիւններու նախօրեակին ու ընթացքին, սուր կերպով հրապարակ եկած ազգային հարցի առիթով գրած էի «Միութիւն քե Լուծում» յոգեւածներու շարքը:

Իսկ Ճախնախոսքի շարքը՝ «Ախտաւոր ընկածները» Խորագրով գրած եմ 1909ի երկրորդ կիսամեակի սկիզբները, երբ Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ե. Գուրեան արքեպիսկոպոսի հրատարականի և նոյն օրերուն զուգարկազ յետաշրջական տարրերու դէմ Օսմ. Սահմանադրութեան պաշտպանութեան համար, Թուրք Իթթիհատ-Թէրագղը և Հայ Յ. Դաշնակցութեան միջև կայացած համաձայնութեան պաշտօնական յոյսաբարութիւնը տեղի ունեցաւ, ու այդ առիթով գործ դրուեցաւ Հայ-Ազգային ժծիրներէն մէկը՝ արշաւանքը Հայ-Յեղափոխական Քաղաքական կազմակերպութիւններուն դէմ ընդհանրապէս, և Հ. Յ. Դաշնակցութեան դէմ մասնաւորապէս:

Այդ երկուքը միասին մէկ սրակի մէջ ամփոփելով իբրև սոսկ պատմական վերջիչողութիւն մը հրապարակ նետելու նպատակ չենք ունեցած :

Երկու հարցերը կամ նիւթերն ալ թէ՛ ուղղակի և թէ՛ անուղղակի իրարու հետ անհշուժիւն ունեցող իրարմէ բզխող սկզբնապատճառներն ու կեանքի մէջ խոր արմատներն ունին :

Ահա՛ այդ անհշուժիւնն ու սկզբնապատճառներու փաստացի մերկացումն և ժողովրդական գիտակցութեան մէջ տեղաւորումն է եղած այս հրատարակութեան շարժառիթը :

Եթէ այսօր մեղմացած ըլլալու երևոյթն ունի հակայեղափոխական ոճրագործ արշաւանքը, այդ չի նշանակեր որ փոթորիկը անցած է և չպիտի նորոգուի :

Պարզուեցան, յայտնուեցան Աղթամարեան («աւարառութիւններ») ու, Իթթիհատական-Պաշնակցական («ազգադաւ») համաձայնութիւններու ևն. դիւային յերիւրանքներն ու զրպարտութիւնները, բռնուեցան գողցուած, թազցուած վանական իրերը Կաթողիկոսական փոխանորդ գառնազգեստ արքակրօնի մօտ, բայց այդ չի նշանակեր որ վազը չպիտի ստեղծուին նոր զրպարտութիւններ, չպիտի լարուին մութին մէջ նոր դժոխային մեքենայութիւններ բոլոր այն հարստահարող տարրերուն կողմէ՛ որոնք հոգեւորական, փողատէր, «մտաւորական» կը կոչուին :

Այդ շահագործողները՝ իրենց էութեամբն իսկ կը ներկայացնեն ազգային ներքին կեանքի մէջ նոյնքան տիրապետող-հարստահարող տարր դէպի համազգակիցները՝ որքան պետական կեանքի մէջ, բռնապետական կամ ո՛չ-ուամկաւար սէժիմի տակ տիրապետող ցեղերու շահա-

գործող, հարստահարող տարրերը՝ սահասարակ տիրապետուած ցեղերու հանդէպ :

Այդ երկու շահագործող, հարստահարող տարրերու գործ դրած շահագործման, հարստահարութեանց ձեւերուն և սատիճաններուն տարբերութիւնը հետեւանք են անոնց ունեցած և բռնած քաղաքական ու տնտեսական դիրքերուն ու պայմաններուն :

Երկու կողմերու մտաւորականութիւնն ալ, կամ աւելի ճիշդը՝ մտաւորականութեան ոչ-ուամկալար մեծամասնութիւնը իր նախապաշարունակներովն ու ստեղծագործելու անընդունակութիւնովը զիտակցարար կամ բնազդաբար իր գոյութեան, բռնած դիրքերուն պահպանութիւնն ու ապահովութիւնը կը գտնէ շահագործողներուն ծառայելու, անոնցմէ նպաստաւորուելու, պաշտպանուելուն մէջ, ուստի և իբրև ուղղակի կամ անուղղակի վարձկանը՝ այդ մտաւորականութիւնն ալ բնական մեղսակիցն է հարստահարող դասակարգերուն և տարրերուն :

Անոնց բոլորին դասակարգային շահերն ու այդ շահերէն բոլորով ըմբռնումները հիմնապէս հակառակ են աշխատաւոր դասակարգերու, ազգերու, ժողովուրդներու հարստահարուող, շահագործուող մեծամասնութեանց, զանգուածներու — որոնք միայն իրաւունք ունին «Ա.ԶԳ.ԼՄԵՆԻ ԵՆԻ» ըսելու և էապէս ալ են — շահերուն, բայց թէ տիրապետողներուն և թէ տիրապետուածներուն այդ շահագործող դասակարգերն ու տարրերը՝ որոնք չնչին փոքրամասնութիւն կը կողմն հանդէպ իրենց պատկանած ազգի աշխատաւոր ՀՍԿՍՅ ՄԵՄՈՒԹԵԱՆԸ, կը շահագործեն նոյն իսկ Ա.ԶԳ. և ՀԱՅՐԵՆԻԻԻ գաղտփարները, պահելով զանգուածները նախապաշարումի մէջ :

Մինչև և նախապաշարումները չջնջուին, մինչև և աշ-

խատաւոր դասակարգերը չազատուին ըմբռնումներու խեղաթիւրումներէն, մինչեւ որ «Ազգ» և «Հայրենիք» գաղափարները իրենց զտուած ըմբռնումներով զանգուածներու սեփականութիւնը չդառնան, մինչեւ որ աշխատաւոր դասակարգերը գիտակցութեան չհասնին, վերջ չեն գտներ յեղափոխական - քաղաքական կազմակերպութիւններու դէմ դաւերն ու հալածանքները, կոխն ու ոճրագործին քնասպան արշաւանքները, զեղծումները :

Ահա՛ այդ նախապաշարումներու ֆնջումն է, աշխատաւոր դասակարգերու գաղափարական ըմբռնումներու խեղաթիւրումի ազատագրութիւնն է, ԱԶԳ և ՀԱՅՐԵՆԻԿ զտուած գաղափարներուն զանգուածներու սեփականութիւն դարձնելն է, աշխատաւոր դասակարգերու գիտակցութեան հասցնելն է եղած Հ. Յ. Գաշնակցութեան անմիջական գործունէութեան առարկան սահմանադրական հռչակուած Թուրքիոյ մէջ :

Այդ պէտք էր և պէտք է ըլլայ բոլոր առաջադէմ քաղաքական կուսակցութիւններու ո՛չ միայն գործունէութիւնը՝ այլ և դուքէ նպատակը. որովհետեւ այդ միջոցով՝ եթէ շատերու կէտ նպատակը եղող քաղաքացիական-քաղաքական ազատութիւններ-իրաւունքներ կ'ապահովուէին, աւելի արմատականներու՝ ընկերվարական կուսակցութիւններու համար կը հարթուէր ճանապարհը, կը ստեղծուէր հնարաւորութիւնը շահագործուող աշխատաւոր դասակարգերու անտեսական ազատագրութեան, առանց որու գոյութիւն, իրականութիւն չի կրնար ունենալ ո՛չ մէկ կատարեալ Ազատութիւն, Արդարութիւն և Հաւասարութիւն :

Բայց հէնց այդ գործունէութեան սկիզբն էր՝ որ պատրաստուեցաւ ու յուզուեցաւ թէ՛ Պետական և թէ՛ Ազգային ներքին կեանքի մէջ յետաշրջական փոթորիկը, ո-

քովհետև այդ գործունէութեան իբրև բնական հետեւանք, պիտի պատառուէին գիմակները, շահագործող օգեղծանող տարրերը պիտի դառնան հասարակական զեկալար շարքերէ: պատասխանատուութեան պիտի կոչուէին կատարուած զեղծումներու համար:

Տարաբաղդարար, ինչպէս Պետական կեանքի՝ նոյնպէս Ազգային ներքին կեանքի յետաշրջական տարրերուն օգնութեան հասան քաղաքական ուրիշ կուսակցութիւններու և մտաւորական կոչուածներու այն շարքերը՝ որոնց համար գերագոյն սրբութիւնը չէ եղած սկզբունքն ու մաքուր և ազնիւ միջոցները, հասարակական շահերուն անձնուիրութիւնը, այլ գիրք ու ասպարէզ գրուելը:

Ի՞նչ կը պահանջէինք մինք և կը պահանջենք Պետական կեանքի համար.—

Ա. Ռաւիբալար-ժողովրդապետական կարգեր՝ ուր պետական-հասարակական ծառայութեան կոչուածները ըլլալին ո՛չ թէ իշխողներ, այլ իրապէս ծառայողներ, ամենաքարձրէն, նախարարապետէն սխաւ մինչեւ յետին ուսիկսն ու զիւրի Ռեսը կամ Տանուսերը:

Բ. Ռաւիբալար (skolnyas)—ժողովրդապետական սանձակաւորական, ժողովրդապետական-ներկայացուցչական ըլլալու համար՝ թէ Խորհրդարանի եւ թէ պետական-հասարակական հիմնարկութիւններու մեջ մասնակցութիւնը Օսմանեան միութիւնը կազմող բոլոր ազգերուն, առանց կրօնի խտրութեան, իրենց բուն համեմատութեամբ:

Գ. Հիւ ու ընդ աւաստակութիւններու իրականապէս ջնջումն ու քախտաւորչիկ, կիսաքախտաւորչիկ ցեղերու մշտական քնակութիւն հաստատելու եւ սեփական աշխատակցութիւնը պարտաւորից դրութիւնը:

Դ. Համաձայն օրէնքի, աւաստակութեան խոշոր հոլասիրութիւններու ջնջումն ու անհող կամ սակաւահող

բոլոր բնիկ երկրագործներուն բաւարար ֆանակութեամբ փարեքահողաքաւիկներ տրուիլը:

Ե. Համիտեան ղեկավար ֆաշաշերութեամբն ու հովսևաւորութեամբն անընդհատ կ'ստանան բացառիկ-միտակաւորիկ ոճիւրներու հեղինակներուն՝ աշխրեքապետներու, քոնուկներու օրինակաւ ամենախիստ պատժի ենթարկուիլը:

Զ. Օսմանցիութեան գաղափարի եւ շահերու ընթրուումը ո՛չ քի համաքրֆախսն կ'աւ համաքաւախսն ձուռնի՝ այլ իրապետն ու իրապետուած բոլոր ազգերու միութեան վրայ հիմնաւորումը:

Է. Այդ Միութեան եւ շահերու ներդաշնակութեան համար Միութեան բոլոր անդամներու անհաստակութիւնը հաւասարապէս յարգելով՝ անոնց ամէն մէկին Ազգային-կուշտուրախան ինքնուրոյն զարգացման պետական հովսևաւորութիւնը:

Ընչ կը պահանջէինք, ի՞նչ կը պահանջենք ազգային ներքին կուշտուրախան կեանքի համար:

Ա. Ազգութիւնը Պետութեան եւ Մարդկութեան ներքոյնդակութիւնը՝ եւ հետեւաբար Ազգային Միութեան շահերը Պետութեան եւ Մարդկութեան շահերու ներքոյնդակութիւնը կ'ազնուելով, այդ շահերու ներդաշնակութեան համար յարգել իւրաքանչիւր կրօնի եւ յարսնուսնութեան պատկանողներու հաւաստակաւ անհաստակութիւնը հաւասարապէս, բայց համախառն ազգային-կուշտուրախան կեանքի, հիմնաւորութիւններու շուրջը:

Բ. Ազգային Սահմանադրութիւնը՝ որ հիմնը դրած է ներքին կուշտուրախան ինքնապարտութեան՝ ուսմախար-ժողովրդական սկզբունքներով, իր ամբողջութեամբ կ'իրաւորութեան դնել, ու ընտրողներուն եւ ընտրուողներուն միջեւ իրական համարադրութիւնն ու պատասխանատուութիւնը իրագործել:

Ուսի եւ իրականապէս ազգային Սահմանադրական ժողովրդապետական ներկայացուցչական ընտրու համար՝ քե Ազգ. պատգամաւորական Կեդրոնական եւ Գաւառական ընդհանուր ժողովներու, օժանդակ Խորհուրդներու մէջ եւ քե Ազգային-հասարակական բոլոր հիմնարկութիւններու մէջ, բոլոր յարանուանութիւններու ու կրօններու պատկաւնոյ Հայերուն՝ առանց խտրութեան մասնակցելու նախապահները հարթել, հնարաւորութիւնը ստեղծել:

Գ. Ո՛չ միայն իբրեւ ակզրունք՝ այլեւ իբրեւ միջոց ու հետեւանք ազգային կուշտութեան Միութեան, կրթական ծրագիրը, կրթութիւնը անբողոքովի աշխարհականացնել:

Կրթական միեւնոյն յարկի մէջ համախմբուող ամեն մեկ կրօնի ու յարանուանութեան պատկաւնոյ աշակերտ ու աշակերտուհիներուն համար, անկախ կրթական ընդհանուր ծրագրէն, միայն դասացուցակներու մէջ մտցնելով, կրօնի աւանդութիւնը յանձնել պատկաւնեալ կրօնի կամ յարանուանութեան իրաւաստ պաշտօնական մարմնին:

Դ. Ընդունիլ եւ իրագործել ազգային բոլոր ժողովներուն, փարչական բոլոր Մարմիններուն անդամակցողներու անհասապէս ո՛չ միայն բարոյական՝ այլեւ նիւթական պատասխանատուութիւնը, դասատուանի ենթարկուելու, պետական օրէնքներով կանխատեսուած զեղծումներու եւ յանցանքներու համար պատիժներ սահմանելու ակզրունքը:

Ե. Իրականապէս ջնջել ազգային կեանքի վրայ հին ու նոր ամիրայական, էֆենտիական, հոգեւորական տիրապետութիւնները եւ ազատել անոնցմէ ազգային բոլոր հիմնարկութիւններու շահագործումը՝ նոյնպէս եւ ջնջել հակասահմանադրական Խնամակալ Մարմինները:

Զ. Վանկերը՝ փոխանակ դասարկապորտներու որչ որչելու, վերածել իրենց ակզրական նպաստիին, դարձնել կրթական-գիտական հիմնարկութիւններ: Զնչեղ վանական

միասնութեանց անդամներու սեփականութեան իրաւունքը եւ փանախան սնտախան սեպուրքիւնը կամ սնտաուրքիւնը յանձնել անձնապէս եւ նիրապէս աշ պատասխանատու Սահմանադրական մարմիններու :

Է. Դատի եւ պատասխանատուութեան ենթարկել Համիտեան ռեժիմի օրով ինֆնակոյ ու ինֆնակաւ Ազգ. կեանքի վարիչները :

Մենք կը պաշտպանէինք ու կը պաշտպանենք ուրեմն, նախապաշարուններով ու թիւրքիմաց հակամարտ շահերով բաժանուած, պատտա պատտա եղած, իրարմէ խորթացած Լուսաւորչական, Կարոյիկ, Բողոքական, Հայ-Հոռոմ ևն. «կրօնական» հասարակութիւններու փոխարէն՝ թիւրքիմացութիւններէ, նախապաշարուններէ ազատուած, իրենց շահերը ներդաշնակուած Միտքիւն մը, որ Հայութիւնը՝ Ողջ Ազգութիւնը կը կազմէ ու կը ներկայացնէ :

Մենք կը պաշտպանէինք և կը պաշտպանենք ուրեմն, նախապաշարուններով, թիւրքիմաց հակամարտ շահերով բաժանուած, պատտա պատտա բլլալու խնթութիւնը ունեցող կեդրոնախոյս տարամերժ ազգութիւններու, նոյնիսկ տիրապետող ցեղի համար վտանգաւոր համայնակուլ և համայնաջինջ Օսմանցիութեան փոխարէն՝ շահերով ներդաշնակաւորուած, կեդրոնաձիգ ու համայնաջինջ ազգութիւններու Օսմանեան Միութիւնը :

Ազգային կամ Պետական կեանքի մէջ շահն բուխով մենք կը հասկնանք ստեղծումը, իրագործումը ա՛յն բոլոր պայմաններուն, կարգերուն և յարաբերութիւններուն՝ որոնց շնորհիւ անհատն ու հաւաքական անհատականութիւնները իրենց բնական ու պատմական առանձնաջատկութիւններովն ու ձիրքերովը հարաւորութիւնը կ'ունենան նիւթապէս և մտաւորապէս զարգանալու, ար-

դիւնարերելու, աշխատելու, ստեղծագործելու, վայելելու, համամարդկային բարօրութեան և քաղաքակրթութեան սատարելու :

Շահերու այս կերպ բնութնումի, կարգերու ու պայմաններու դասաւորութեան մէջ՝ աշխատելու, ստեղծագործելու, արդիւնարերելու անընդունակ, անպատրաստ և միեւնոյն ժամանակ շահագործող տարրերը ստիպուած կ'ըլլան բնականաբար տեղի տալու, ասպարէզէն քաշուելու, շահագործման միջոցներու վայելքէն զրկուելու :

Անոնց համար վտանգի այս հեւանկարը ուրեմն, թէ տիրապետող ցեղերու և թէ տիրապետուած ցեղերու մէջ շահագործող տարրերը բնագոյրաբար պիտի մղէր պայքարի, դաւաղութեան միեւնոյն սիսաէմին՝ որոնց աստիճանական աւերելոյթ տարբերութիւնները միջաւայրի, քաղաքական-անտեսական ուժերու տարբերութեանց արտայայտութիւններն ու հետեւանքներն են, բայց հիմնապէս և էապէս կը կազմեն միեւնոյն բովանդակութիւնը, բոլորած միեւնոյն հոգեբանութենէն :

Այսպէս ուրեմն, մտաւ 31էն առաջ և յետոյ, թէ տիրապետող և թէ տիրապետուած ցեղերու շահագործող տարրերուն եւ անոնց վարձկաններուն կողմէ գործ դրուեցան պայքարի, կռուի համանման միջոցները : Եւ այսուհետեւ ալ կը շարունակեն այդպէս, մինչեւ որ ռամկավար տարրերն ու սկզբունքներն վերջնականապէս յաղթանակեն :

Մահմետական հոգեւորականութեան տղէտ ու յետադէմ մասը՝ միացած ուրիշ յետաշրջական տարրերու հետ, կը մեղադրէր ժոհոն Թուրքերը՝ այսինքն Սահմանադրական կարգերը մտցնելու, օրէնսդրութեան մէջ ժողովրդապետականութեան ոգին գերակշռել տալու հետամուտ տարրերը՝ թէ

— Շերիասքը սևեկս կ'ստնեն, Մահմեհսակսնուքիւնը կը վճանգեն:

Իշխանութեան, զիրքի ու ասպարէզի հետամուտ մահմեհական մտաւորականութեան մեծամասնութիւնն ալ կը ձայնակցէր շերիասքններու այդ մեղադրանքին ու կ'աշխատէր շահագործել ասիթը, իր նպատակին հասնելու համար:

Հայ հոգեւորականութեան ազէա ու յետադէմ ստուար մեծամասնութիւնն ալ՝ միացած ուրիշ շահագործող տարրերու, մեղադրեց ու կը մեղադրէ Հ. Յ. Դաշնակցութիւնը կամ Դաշնակցականները թէ՛

— Ազգային Եկեղեցին, կրօնը (իւնա՛ Լուսաւորչական եկեղեցին) կ'արհաւարհեն, Եկեղեցին, կրօնը կը վճանգեն:

Մահմէտական շէրիաթիսները՝ միացած բոլոր ուրիշ յետադէմ տարրերու և իշխանութեան հետամուտ մտաւորականութեան հետ, կը մեղադրէին ժէօն Թիւրքերը, Իթթիհատ-Թարազգրի ձախ թիւր, թէ՛

— Մահմեհական բարիքը կ'այրասեռեն, հարեհակսնու իւրիւսակսնուքիւնները ոսնալոյս կ'ընեն:

Հայ հոգեւորականութեան ազէա ու յետադէմ մեծամասնութիւնը՝ միացած շահագործող, յետադէմ տարրերուն ու վարձկան, ստեղծագործելու անընդունակ, անպատրաստ մտաւորականութեան մեծամասնութեան հետ, կը մեղադրէր ու կը մեղադրէ թէ՛

— Ընսանեկսնու բարիքը, արքուքիւնները կը վճանգեն, ազս սեք կը փարոգեն:

Քիչ ու շատ միջազգային կեանքի, օտնուաղն մամուլի առօրեայ տեղեկութիւններուն հետամուտ ու ծանօթ եզոյներ գիտեն, պարտաւոր են նկատի ունենալ՝ որ բոլոր երկիրներու մէջ ուր հնի և նորի, անպատասխանատու իշխանութեան, ստիկանական պետութեան և

Քուղտը դապկեաութեան, սամկալար-սահմանադրականութեան միջև պայքարն ու կռիւր սկսուած է, բոլոր այդ երկիրներուն մէջ հակաժողովրդական, հակասամկալար աւանձնաշնորհեալ ու յետադէմ, պահպանողական տարբերուն զէնքք, դորձ դրած միջոցները միեւնոյնն են, կրօնի, եկեղեցիի, ընտանեկան սրբութեան են ի վերաբերեալ նոյն ստութիւններն են, որովհետև թեկադրիչ պատճառները միեւնոյնն են :

Եւ աննախապաշար ու անաչառ հետաքրքրութեամբ կարելի է ծանօթանալ և համոզուիլ՝ որ շատ անգամ, Կրօնի, Եկեղեցիի, ամուսնական-ընտանեկան բարոյականի այդ ողբերգունները բարեպաշտութեան, սուաքինութեան կեղծ դիմակը հագած՝ իրենց անհասական կեանքովը ամէն օր կրօնի ու ամուսնական-ընտանեկան սրբութիւնները արատաւորողները, եղծանողներն են :



Մարտ 31ի Պետական յետադարձ հարուածը, յետադիական-չէրիաթճիական շարժումը կասեցուց, վիժեցուց և դապեց ազատարար բանակը և մինչև այսօր կը զրսպուի անտղ, պաշարման վիճակով, Զինուորական Ատեաններով :

Հայ շէրիաթճիներուն համար չկար այդ նիւթական դապիչ ուժը :

Այխատաւար դասակարգերն էին՝ որ պիտի ծառայային շահագործող այդ տարրերուն, դասակարգերուն դէմ, բայց դարերու և մանաւանդ վերջին տասնէնինգ տարիներու անօրինակ ստրկական կեանքը ջնջած էր մանաւանդ մեծ քաղաքներու աշխատաւորութեան մէջ քննադատութեան, նախաձեռնութեան դիմադրական ուժին :

Աշխատաւոր դասակարգերը թոյլ տուին որ շահագործին իրենց ամենատարբեր զգացումները :

Եւ շահագործող տարրերը զխոցան ճարպիկօրէն օգտագործել այդ ամէնը :

Կրիլկեան Աղէտը և անոր հետեւանք միջադէպերը շահագործեցին՝ սրտցաւութեան, ազգասիրութեան դիմակի տակ, ամենաճարպիկ ազգադաւութեամբ :

Բնութեան մէջ ուժն է որ կը գործէ, կ'ազդէ, կ'արտադրէ, կը ստեղծագործէ : Այդ տիեզերական օրէնքէն բացառութիւն կազմող ոչինչ կայ :

Աշխարհը բռնապետութեան ոճիրներու տակ հիւժած ու տանջուած է բիրտ ուժի հետեւանքով : Բռնապետութիւնները կը տապալուին ըմբոստացող ժողովուրդներու ուժով :

Այսօր Թուրքիոյ մէջ Օսմանեան Սահմանադրութիւնը կը պահպանուի Բանակին ուժով, վաղը անպայման պիտի պահպանուի Օսմանեան Միութիւնը կազմող աշխատաւոր, սահմանադրական ժողովուրդներու կազմակերպուած ուժով :

Սահմանադրական երկիրներու մէջ օրէնքները կը յարգուին, արդարութիւնները կը գործադրուին ո՛չ թէ իշխանութեան բարեհայեցողութեամբ՝ այլ ժողովուրդներու կամքին, ուժին ազդեցութեամբ :

Ինչպէս անհատները, նոյնպէս և ժողովուրդները, պետութիւնները իրենց գոյութիւնը կ'ապահովեն, իրաւունքները յարգել կու տան իրենց ներկայացուցած մտաւոր, բարոյական, նիւթական ուժին համեմատութեամբ :

Ո՛չ մէկ պետութիւն, ո՛չ մէկ ժողովուրդ, ո՛չ մէկ անհատ բացառութիւն չէ կազմած և չի կրնար կազմել այդ համաշխարհային, տիեզերական բնական օրէնքէն :

A $\frac{I}{9672}$

Պետութիւններու, ժողովուրդներու ուժերը կ'ար-
տայայտուին իրենց կազմակերպուած Քաղաքական Կու-
սակցութիւններով :


Սահմանադրական պետութիւնները, ժողովուրդները
ևր կառավարուին Քաղաքական Կուսակցութիւններու
միջոցով :

Ջնջեցէ՛ք Քաղաքական-Յեղափոխական Կուսակ-
ցութիւնները, ջնջուած է Սահմանադրութիւնը կամ Սահ-
մանադրական կեանքն ու ժողովրդական Կամքը, վերա-
դարձած է Բռնապետութիւնը՝ ի՞նչ անունի և ձևի տակ
ալ ըլլայ :

Առանց Քաղաքական-Յեղափոխական կուսակցու-
թիւններու՝ կազմակերպուած ուժի, ժողովուրդներու,
պետութիւններու ցանկութիւնները, պահանջները, ար-
դարադատութիւնը ողորմութիւններ, մութացողներու մութ-
ացկանութիւններ են, որոնց արժանանալը ողորմողի
գիրքի մէջ դանուողին կամայականութենէն, խղճի, սրտի,
շահերու թելադրութենէն է կախուած :

Քաղաքական քիչ ու շատ հոտառութիւն, զիտակ-
ցութիւն ունեցող ժողովուրդներու, մանաւանդ տասնեակ-
ներ տարիներով քազրիւններու մութացկանութեամբ տա-
րապսած ու խոշտանդուած Հայութեան համար վաղուց
քայտնի պէտք էր ըլլար այս տարրական ճշմարտու-
թիւնը :

Եւ ճիշդ այն միջոցին՝ որ վտանգուող Օսմանեան
Սահմանադրութիւնը սահմանադրական բանակ-կուսակ-
ցութեան միջոցով կը վերահաստատուէր, ճիշդ այն միջո-
ցին՝ որ Կիլիկեան աղէտներու դարմանը նոյնպիսի ժողո-
վրդի կազմակերպուած կամքի անունով ու հեղինակու-
թեամբ պէտք էր ապահովել, հայ շահագործող շերիաքանի
տարրերն ու անոնց ստրուկները արշաւանքը սկսան կազ-



մակերպուած ուժի՝ ի դէմս Գաշնակցութեան, Քաղաքական կազմակերպութիւններու դէմ, գործակից ունենալով կազմակերպութեանց պատկանելու յաւակնութեամբ սոնքացող նկարագրի, սրտի անանկ ողորմելիներ :

Վերանորոգեցին դարերու ստրկական ոգին : Պատրիարքին անձնաւորութիւնը կուռք դարձուցին ու Պատրիարքական հրաժարականը շինեցին աջ ու ձախի, «պաշիւ-պողուք»ութեան կռուի շեփոր մը, մինչև որ անպատուարեր ու ամօթալից վերադարձը հարկադրեցին :

Ապարդիւն չմնաց այդ ազգադաւ արշաւանքը :

Շահագործողները գոնէ՛ ժամանակաւորապէս հասան իրենց նպատակին :

Կանգ առաւ հասարակական-ազգային հիմնարկութիւններու մէջ մաքրագործումը :

Գարերով ծոյլ, տգէտ, թալանող ու սպառող հոգեւորականութեան և անոնց մեղսակից շահագործողներու ձեռքը կը մնան վանքերն ու վանապատկան շարժուն և անշարժ հարստութիւնները :

Կը շարունակուին անհաշիւ, անկոնարոյ, անարդիւնարեր շահագործումները :

Կը շարունակուին բռնապետական օրերու կամայականութիւններն և անպատասխանատուութիւնները :

Անոնք որ կը զանգաւախին թէ պետական հիմնարկութիւններու մէջ բռնապետական, կասկածելի համարուած տարրեր տեղ կը գրաւեն, այդ կեղծաւորները ազգային հիմնարկութիւններու մէջ վատթարագոյն կերպով նոյնը իրենք կը կատարեն :

Անոնք որ կը արտնջան թէ յանցապարտները անպա-

տիժ կը մնան, այդ շահախնդիրները ազգային կեանքի մէջ ամբաստանութեան ու քննութեան տարրական պահանջներն անգամ լսել չին հաճիր :

Թղթատեցէ՛ք ամբողջ ազգային պատմութիւնը, — եթէ պատմութիւն կարելի է համարել միշտ փոթորկի մատնուած անդեկ ու աննպատակ ազգային նաւի տարուբերումները, նաւարեկումները, շահագործող աւատականութեան, հողեւորականութեան կռիւները իրարու դէմ, հայրենիքի դէմ, դաւերն ու երկպառակութիւնները, մատնութիւններն ու անձնատուութիւնները : Թղթատեցէ՛ք լացի ու կոծի, շարունակական պառակտումներու, անընդհատ տառապանքի մարտիրոսագրութիւնները, վերլուծեցէ՛ք ուշադիր, անաչառ քննադատութիւնով բոլոր անցեալ և ներկայ պատմական շարիքներու աղբիւրն ու սկզբնապատճառը, և դուք կը գտնէք ու կը համոզուիք որ միակ պատճառն է բացակայութիւնը որոշ իտէալի մը՝ որ միացնող յօդը կազմէր ազգային մեծ զանգուածի մը, քաղաքակրթական-ազգային ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂ ՄԵՍ ԳԱՂԱՓԱՐ մը՝ որուն յառած ըլլար ազգային իւրաքանչիւր անհատի մտածողութիւնը, որուն հասնելու համար Հայութիւնը իր գուրգուրանքին առարկայ դարձնէր որոշ ծրագիր մը, իրրեւ իր հաւաքական կեանքին նպատակը :

Ապրող ու ապրելու իրաւունքը ստացող ազգերու համար անհրաժեշտ այդ իտէալը, ստեղծագործող գաղափարն ու ծրագիրը, նպատակը ստեղծեցին, կերպարանաւորեցին Հայութեան սեփականութիւն դարձուցին ժ.թ. դարու վերջերը ծնունդ առնող Հայ Յեղափոխական-Քաղաքական Կուսակցութիւնները :

Պատմա-փիլիսոփայութեան, գիտական ճշմարտութիւններու, աշխատաւորութեան շահերու վրայ հիմնուած այդ նպատակին, ծրագրին, գաղափարին, — մէկ խօսքով Ազգային Իտէալի դրօշը բարձր բռնեց Դաշնակցութիւնը՝ որու շուրջը պիտի բոլորուի, կազմակերպուի հայ աշխատաւորութիւնը, ձեռք տալով բնակակից, հայրենակից բոլոր ազգերու ու ցեղերու աշխատաւորութեան :

Այդ կազմակերպուած, ներդաշնակ շահերով միացած աշխատաւորութեան ուժն է, ստեղծագործող աշխատանքն է որ պիտի ամրապնդէ Օսմանեան Միութիւնը, պիտի պահպանէ ազգային ինքնուրոյնութիւնը, պիտի ստեղծէ հայ-ազգային կեանքի պատմութիւնը, քաղաքակրթութեան իր սատարումներով տեղ պիտի բռնէ մարդկութեան մէջ, ԲՈՒՈՐԸ ՄԷԿԻ և ՄԷԿԸ ԲՈՒՈՐԻ ուղեղծովը յարգանք պիտի ներշնչէ բոլորին և պիտի յարդէ բոլորը : պիտի ջնջուին խտրութիւնները, պիտի վերնան շահագործումները, պիտի յաղթանակէ արդարութիւնը, համամարդկային բարօրութիւնը :

Այս է մեր գաւանանքը, հաւատքը՝ որ թէև անձնական, բայց բոլորով կուսակցական պատմափիլիսոփայական հայեցողութիւններէ, ջանացած ենք մեր անհատական-բարոյական ակտերը, խօսքը ու գործը համաձայնեցնել :



ԱԶԳՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՒԱՔԱԿԱՆ

ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ



(ՄԻՈՒԹԻՒՆ ԹԷ ԼՈՒԾՈՒՄ)

I

ԽՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Կենդանական թագաւորութեան մէջ ամէնէն աւելի մարդ-կենդանին է որ, բաղդատաբար իր բանական ընդունակութիւններուն, ամէնէն նուազ կը մշակէ, կը զարգացնէ ու կը յարգէ փոխադարձ օգնութեան բնազդը՝ գոյութեան կռուին մէջ :

Մարդն է՝ որ անյիշատակ դարերէ ի վեր՝ բիրտ ուժին կրթնած, ստեղծած է ազատի և անազատի, տէրի և ստրուկի, տիրողի և հպատակի, շահագործողի ու շահագործուողի, իրաւատէրի և իրաւազուրկի դասակարգերը, ցեղերը :

Նախկին աշխարհակալութիւններուն յաջորդեցին գաղթային տիրապետութիւնները, զինուորական նուաճումներուն փոխարինեցին տնտեսական ստրկացումները :

Կը կարծուէր՝ թէ մարդու և անհատի իրաւունքները՝ զորս հստակեց աւատական իշխանութեանց բեկորներուն ու աւերակներուն վրայ Ֆրանսական Մեծ Յեղափոխութեան կանգնած իրաւական պետութիւնը, կեանքի իրականութիւն դառնալով, իրաւունքներու հաւա-

սարութեամբ քաղաքացիներու եղբայրակցութիւնը կը նուիրագործուի :

Պատրանքը երկար չտեւեց :

Ֆրանսական Մեծ Յեղափոխութեան արտանները մեծագոյն մեզքը գործեցին , անդիտանալով Անգլիական Յեղափոխութեան մեծ սկզբունքը , որ բրիտանական կայսրութեան բազկացուցիչ մասերուն համար կ'ապահովէր ապակեղորոնացումը , կը յարգէր համայնքներու ինքնավարութիւնը :

Յեղափոխութենէն առաջ գոյութիւն ունեցող ֆրանսական միացեալ ինքնավարներու փոխարէն կազմակերպուեցաւ կեղրոնացած պետութիւն մը :

Նարոլէոնեան արշաւանքը Յեղափոխութեան հուշակած իրաւունքներուն առաքելութեան ծառայելով հանդերձ , կեղրոնացման ակտորժակն ալ գրգռեց :

Պոնաբարդեան բանակներուն եւրոպական քարտէսներու մասին ունեցած քմահաճ վերաբերումը՝ առաջ բերաւ անհատի ազատութեան , ազատ քաղաքացիի իրաւատիրութեան պահանջին հետ՝ ազգերու անհատականութեան , գոյութեան իրաւունքի գիտակցութիւնն ու հարցը :

Այս զարթումին ու գիտակցութեան հանդէպ՝ ինչպէս աւատականը , նոյնպէս և քաղքենի (պուժուս) պետութեանց արապետող տարրը չդադրեցաւ արապետողի իրաւունքներուն նուիրականութեան պաշտպանը դառնալէ :

Համաձայն տեղին և ժամանակին , համաձայն փոխադարձ ուժերուն , այդ նուիրապեսական արապետողի իրաւունքներուն իրապեսութեան համար գործադրուած միջոցները միայն տարրերեցան : Չեւերը , արտաքինը փոխուեցան , սակայն բովանդակութիւնը մնաց անփոփոխ :

Այդ օրէն ի վեր պայքարը կը շարունակուի երկու կողմներուն միջև : Այդ պայքարին աստիճանը կ'որոշուի անական հետեւողութեամբ, տիրապետողին գործադրած միջոցներուն համեմատութեամբ և չափով : Միջոցները կը զանազանուին տիրապետողներուն զարգացման և անկէ սղխած պետական կազմակերպութեան համեմատ :

Սուբին և հուբին կը յաջորդէին — և կը շարունակեն յաջորդել — կրօնի և լեզուի ճնշումներն և կաշկանդումները, ազգերու ինքնուրոյն զարգացման և մշակութեան արգելքները :

Շատ տեղ այդ խտրականութիւնը, իրաւագրկութիւնը կը շեշտուէր և կը գործադրուէր — ինչպէս այսօր ալ — ոչ միայն ազգերու հաւաքական անհատականութեան վրայ, այլև զանոնք կազմող իւրաքանչիւր անհատի վրայ :

Ոչ-օրթոտոքսը, ոչ-կաթոլիկը, ոչ-բողոքականը՝ ըլլալով հանդերձ քրիստոնեայ, կը զրկուէր ու դեռ կը շրկուի նոյն քաղաքացիական իրաւունքներէն, որոնք յատուկ, առանձնաշնորհուած են տիրապետող օրթոտոքսին, կաթոլիկին, բողոքականին : Ու դարձեալ միեւնոյն ձգտումով է որ ոչ-իսլամը զրկուած է միայն իսլամին սեփականութիւնը համարուած քաղաքացիական իրաւունքներէ :

Իրաւագրկութեան, խտրականութեան, ճնշումներու այս աստիճանն է որ ականայ անջատողական ընդվզումի կը բռնադատէ բնիկը, — նկատուած իրրեւ օտար՝ իր իսկ երկրին մէջ, ենթակայ՝ սպառման ու այլասեռման :

Արեւելքի մանաւանդ վերջին դարու պատմութիւնը այս խտրականութեան ու անօր հետեւանքներուն ամփոփումն է :

II

«ՕՍՄԱՆՑԻ».—ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ



Միդհատեան սահմանադրութիւնը՝ ստեղծելով Օսմանացիութիւնը, կը յաւակնէր ու դեռ կը յաւակնի շրջել պատմութեան առանցքը ազգերու, մարդկային հաւաքական անհատականութիւններու ծագման ու զարգացման, ուստի և մարդկային զարգացումի շրջափոխութեան ընթացքը :

Ճիշտ է որ Օսմանցի, Օսմանցի բառը, շատոնց անխտիր կը գործածուէր թուրք, թուրքիացի բառերուն հետբայց ինչո՞ւ արդեօք Միդհատեան մտածողութիւնը գերադասեց Օսմանցի բացատրութիւնը, այդ պաշտօնապէս կը մնայ անորոշ, կարօտ՝ քննադատութեան, բացատրութիւններու, նոյն իսկ Տիրապետող թուրք տարրին համար :

Յունաստան և Հայաստան — Օսմ. կայսրութեան այս երկու գլխաւոր պատմական պետութիւններու երկիրները — արշաւող մտնելով-թաթարական ցեղերէն թրքականին կը պատկանի մեծ Օսմանը, — կայսրութեան տիրապետող Տան, իշխանական հարստութեան հիմնադիրը :

Պարզ է ուրեմն որ Օսմանցիութիւնը, Ալ-Օսմանը ազգութիւն մը չէ, այլ որոշ ազգութեան պատկանող գերիշխան ընտանիք մը, զարմ մը, ինչպէս էին և են Հոէնձողէրները, Հապսպուրկները, Պուրպօնները, Պոնարարդեանները, Ռոմանօֆները ևն. :

Օսմ. կայսրութեան գահակալը ոչ միայն կայսրութեան պետն է, այլև Իսլամի Քալիֆան :

Եւ Միդհատեան վերաշինութեան ժամանակ խլամ
ցեղերու և ազգերու մէջ չափազանց, անհամեմատ աւե-
լի նուազ, հազիւ նշմարելի ազգայնական ըմբռնողու-
թիւն գոյութիւն ունէր: Կարծէք երկիրը բաժնուած էր
երկու կրօնա-դասակարգ ժողովուրդներու, — իրաւատէր
խլամներու և իրաւազուրկ-հպատակ քրիստոնեաներու:
Ազգութեան գաղափարն ու երեւոյթը ամփոփուած՝
կրօնի մէջ. կարծէք տիրապետութիւնը թուրք ցեղին,
թուրք հարստութեան չէ որ կը պատկանի, այլ խլամին:

Թրքութիւն և Իսլամութիւն հոմանիշ ըմբռնուելով
— ճիշդ այնպէս ինչպէս Հայութիւնը և Լուսաւորչակա-
նութիւնը ըմբռնուած էր — խլամական ցեղերն և տար-
րերը, դասակարգերը չէին ենթարկուեր քրիստոնեայ ցե-
ղերու, տարրերու և դասակարգերու՝ իրբեւ տիրապետ-
ուածի, իրաւազուրկի խտրականութեանը:

Այդ ըմբռնումներու և պայմաններու շրջանին, բը-
նականաբար պետութեան ու արքայական հարստութեան
ուժն ալ այդ ըմբռնողութեան պահպանումին մէջ կը կա-
յանար:

Եթէ ներքին յուզումներու հիմնական շարժառիթը
և արտաքին միջամտութիւններու պատրուակը Իսլամի
և Քրիստոնեայի խտրականութիւնն էր, այդ յուզումնե-
րու և միջամտութիւններու ջնջման միակ միջոցը պիտի
ըլլար վերցնել տիրողներու և տիրապետողներու մի-
ջեւ քաղաքացիական-իրաւական խտրականութիւնները
այն չափով, ինչ չափով որ կը թույլատրէր տիրապետողի
գերակշիւ դիրքին պահպանութիւնը:

Տիրապետողը էսպէս թուրքն էր: Բայց թրքութիւնը
կրօնական ըմբռնումն դուրս բերելով իր ցեղային էու-
թեամբը ներկայացնել վտանգաւոր կ'ըլլար, որովհետեւ
այդ՝ պիտի արթնցնէր ուրիշ խլամ ցեղերու մէջ իրենց

ազգային անհատականութիւնը : Կրօնա-ազգային խըտ-
րական հակամարտութեան պիտի յաջորդէր զուտ ցեղային-
ազգայնական խտրականութիւնն ու հակամարտութիւնը :


Սոսնմութիւնը կը պահանջէր գաննել միջին ճանա-
պարհը :

Ինձի կը թուի որ Միդհատեան վերայինութեան ամ-
բողջ մտածողութիւնը հոգիին խորերէն ձգտելով հան-
դերձ Թրքական Գերակշռութեան ապահովութեանը , այդ
նպատակին իրազօրժման միակ միջոցը համարած էր օս-
մանեան հարստութիւնը , որ ներկայացուցիչն է Թրքու-
թեան և Սալիֆան՝ Իսլամութեան :

Միդհատեան մտածողութիւնը՝ sous-entendu պահ-
պանելով իր խռէպը , գերադասելով օսմանցի բացատ-
րութիւնը , կ'ընդունէր օսմ . հարստութեան գերիշխա-
նութեան տակ ապրող բոլոր ազգերուն Միութիւնն ու
Քաղաքացիական Իրաւունքի հաւասարութիւնը :

Սուսրէվ և Բէշիտ փաշաներու օրերէն ծնունդ առած
Միդհատեան այդ մտածողութեան ու ծրագրին իրականա-
ցումովը , Ալ-օսմանի հարստութիւնը իրրեւ Սալիֆա՝ ոչ
միայն պիտի պահպանէր արտա-պետական խաւով երկիր-
ներու և ժողովուրդներու վրայ իր համատարած հեղի-
նակութիւնը՝ այլ և , իրրեւ Սուլթան , այդ հարստութեան
տիրապետած երկիրներու սահմաններուն մէջ ապրող Իս-
լամ ժողովուրդներուն թրքական բմբունողութենէն ան-
բաժան իսլամական Միութիւնն ու շաղկապումը պահելով ,
պիտի ապահովէր զուտ թրքական տիրապետութեան գե-
րակշռութիւնը , պիտի իրականացնէր ոչ-խաւմներու քա-
ղաքացիական հաւասարութիւնը , և պիտի ստեղծէր այ-
լացեղներու շահերուն համերաշխութեան վրայ հիմնուած և
արքայական տան շուրջը բոլորուած միութիւնը՝ Օսմանցի
անունին տակ :

Տարաբազդարար, այդ նրբութիւնն ու քաղաքագիտական ճարպիկութիւնը ըմբռնողներ, իրագործելու ընդունակ Իսլամներ կամ Թուրքեր չկային և կամ չախազանց հաղուադիւտ էին:



III

Վ Ի Ժ Ո Ի Մ Ը



Այդ պատճառով ալ ո՛չ միայն Միդհատեան վերաշինութիւնը չիրագործուեցաւ, ալ և իշխող Տան հանդէպ ունեցած իր անօրինակ, հայրենամոլութեան հասած անձնուիրութիւնն ու հաւատարմութիւնը չարաչար մեկնուեցաւ և վարձատրուեցաւ անապատելի ապերախտութեամբ, ոճիրով:

Չուչացաւ պետական հարուածը: Յաջորդեց հալածանքներու, ճնշումներու, կոտորածներու նոր Շրջանը:

Բիւրագլխանի Բռնապետութիւնը իր կեղրոնացման գազաթնակէտին հասաւ, սատրկանական դրութիւնը իր ծայրայեղ իշխանապետութեան, որով և հիւժումն ու տարրալուծումը յետին աստիճանին յանգեցան:

Ու այս բոլորէն ամէնէն աւելի տուժողը, ամէնէն աւելի սպառւողը, բնաջնջուողը եղաւ Հայը, — այն ազգը՝ որ իր պատմական, աշխարհագրական, ցեղագրական, տնտեսական պայմաններովն իսկ ամէնէն աւելի հակա-անջատողականն էր, շահակից՝ կայսրութեան վերա-

ծնման, անոր մեծագին ծառայութիւններ մատուցանելու կոչուած :

Ծրագիրը վիժած էր :

Կը թուէր թէ միտքը սպաննուած, վերածնութեան սաղմը ջնջուած, կեանքը դադրելու դատապարտուած էր :

Ծրագիրը վիժած էր. բայց միտքը չէր կրնար սպաննուած ըլլալ, վերածնութեան սաղմը չէր կրնար ջնջուած ըլլալ, կեանքը չէր կրնար դադրիլ :

Ապրելու բնական ձգտումը, գոյութեան կռուի մը դումը կը ստիպէին խարութեան զոհերը՝ գերմարդկային ճիգեր թափել, սերունդներու անմուռնչ մահէն նախընտրել ըմբոստներու մարտիրոսագրութիւնը :

Մէկ կողմէ ազգային հաւաքական անհատականութիւններու գոյութեան, անհաւասար ոյժերու կռիւր անդի կ'ունենար, միւս կողմէ՝ քայքայուող պետութեան, աւերուող երկրի տիրապետող տարրին ծոցէն կը ծնէր ու կը զարգանար սերունդ մը, որ չփուելով և ճանօթանալով արտաքին քաղաքակրթութեան հետ, իր զարգացման աստիճաններէն ըստ ըմբռնումներու, շրջափոխութեան մակարդակին բերմամբ կը ներշնչուէր համապուրժուական պատմութեան աւանդութիւններով : Վերազարթումի, վերածնութեան ոգին կը անուցանէր տիրապետողներու յատուկ հոգեբանութեամբ :

Այսպէս կը կազմակերպուէր Ժէօն-Թիւրք տարրը :

Այլ ևս անհատներ չէին, այլ կազմակերպուած տարրեր :

Եւ մտքերու ու ըմբռնումներու տարրերութեանց այս բնական հետեւանքով, ըմբոստներու բանակներն ալ կը բաժնուէին երկուքի. մէկ կողմը՝ բնաջնջման վտանգին, սպառնալիքին ենթարկուած ստրուկ ազգերուն՝ Մակեդոն և Հայ յեղափոխական տարրերը, միւս

լողմը՝ թուրք մտաւորականութիւնը՝ մղուած ոչ թէ ցեղային բնաջնջման սպառնալիքէն, այլ առաջնորդուած կայսրութեան վերանորոգման ծրագիրներով :

Եւ Միղճատեան Սահմանադրութիւնը այդ ծրագիրներուն հիմքը կը կազմէր, իսկ Օսմանցիութիւնը՝ ապագայ խորհրդանիշը :

Դիւանատութեան բոլորէին, ուրեմն, վերակենդանութիւնը աւետող զօրեղ ցնցում մը արտայայտուեցաւ :

IV

ՆՈՐ ՇՐՋԱՆ

Արեւելեան պատերազմի նախօրէին Դեսպանախորհուրդն էր որ ստիպեց բանապետը ընդունիլ Միղճատեան ծրագիրը . Մակեդոնական հարցի պատրուակով դիւանագիտական խորհրդակցութեան որոշած Դիւանատութիւնն էր որ ստիպեց տեղի տալ Բ . զօրաբանակի յանդուգն հայրենասէրներու պահանջման ու սպառնալիքին :

Այս գիջումի պատճառած ոգեւորութեան տռաջին օրերուն կը թուէր՝ թէ վերաշինութեան ղեկավարը դառնալու բազդին արժանացողները գիտակից են իրենց դերին պատմական նշանակութեանը :

Յետագայ դէպքերը, տօնի օրերուն յաջորդող աշխատանքի օրերը, սակայն, շուտով մատնեցին ըմբռնումներու խտրականութիւնը :

Թուրք մտաւորականութեան, ԺԿՕՆ Թիւրքերու — չնչին բացառութիւնները մէկ կողմ ձգելով — երկար տարիներու քարոզութեամբ տիրող ուժովն դէմ արտայայտած բողոքի, դժգոհութեանց բովանդակութիւնը չէր կրեր պատմական դէպքերու գիտական լուսաբանութիւն, դէպքերու բնական կամ արամասրանական հետեւողութեամբ եզրակացութիւն, յեղափոխականի միտք և ծրագիր :

Անոնց մտածողութեան առանցքը կը կազմէր առ առաւելն խաղաղ, կրաւորական դիմադրութիւնը : Ես կը յիշեմ անոնց մէկուն մէկ տետրակը, որ վերածնութեան գործի սկզբնաւորութեան համար կ'առաջարկէր համաժողով մը, ուր պիտի հրաւիրուէր և նախագահէր Սուլթան Ապտիւլ Համիտը :

Անոնց բրորականտի միջոցներուն ամէնէն խելօքք, ամէնէն մշտատեւը ու անկաշառը համարուած Մեշվեքքն ու իր Դպրոցին մտքերն ու ծրագիրներն ալ մեծ տարբերութիւն մը չէին ունեցած :

Ճիշտ է, անոնք կը պաշտպանէին Միդհատեան սահմանադրութեան վերահաստատութիւնն ու գործադրութիւնը . բայց իրենց ձգտումով Միդհատեան նրբամտութեան ստեղծած Օսմանցիութիւնը աւելի սեղմուած ու շովինացած էր :

Ոչ-թուրք Օսմանցիներու՝ անցեալին մէջ՝ նախ Յոյներու, ապա Պուլկարներու ապստամբութենէն ծնած անջատումները, Հայկական, Մակեդոնական ըմբոստացումները, յեղափոխական ֆէտայիներու հերոսական-կուսակցական, բայց ո՛չ ժողովրդական-ապստամբական, ընդհարումներն ու ապակեղրոնական բարենորոգումներու պահանջները, ծրագիրները կը խրաչեցնէին, կը սարսափեցնէին թուրք մտաւորականութեան զարթած, տիրապետող

տարրերու յատուկ, պուռժուա-էմբէօիալիսդ ազգասիրութեան մտքերը :

Անոնք չկրցան որակել ու դասաւորել, պատճառաբանել ու եզրակացնել բոլոր պատմական, դարգացողական, աւանդական դէպքերն և անջատողականութեան մղող գլխաւոր ազդակը՝ թրքութեան անշարժութիւնը, յեղափոխական գործունէութեան անպատրաստականութիւնը, յապաղումը, այդ անպատրաստականութեան և յապաղման՝ այլացեղ ժողովուրդներու կեանքին վրայ ազդած աղիտարեր հետեւանքները :

Անոնք չկրցան տեսնել նոյն իսկ ազգային գաղափարի ըմբռնողութեան մէջ տեղի ունեցած և Հ. Յ. Դաշնակցութեան դաւանած շրջափոխութիւնը :

Անոնք միայն մէկ բան կը տեսնէին, — այն թէ բացի քրիստոնեայ ազգերէն, մահմետական ոչ-թուրք ազգերու մտաւորականութեան մէջ ալ ազգային գաղափարը — Ալպանիացիութիւնը, Արաբութիւնը, Վրացիութիւնը, Քրդութիւնը — կ'արթննայ և կը պաշտպանուի :

Տիրողի, իրաւատէրի դրութեան խախտման երեւոյթներն էին ասոնք, որոնք ուղղակի կը վրդովէին խրաչող և սարսափող թուրք մտաւորականութիւնը :

Այդ վրդովմունքը տարիներու ընթացքին արտայայտուեցաւ գրեթէ հետեւեալ սպառնալից բովանդակութեամբ, ուղղուած՝ մասնաւորապէս Հայերուն .

— «Եթէ դուք չհրաժարիք ձեր ազգային ըմբռնումէն, արժանի էք կոտորուելու » :

Յուլիս 10/23էն յետոյ ալ, ինչպէս յայտնեցին թերթերու հրատարակած տեղեկութիւնները, եկոյրդվիտները՝ որոնք դեռ չհերքուեցան, Ահմէտ Բիզա սոյն սպառնալիքները կրկնած էր Լոնտոնի մէջ :

Անոնց համար ոչ-կրաւորական դիմադրութեան առանձին շարժումները հակառակ էին օսմանցիական մրտաքին, այսինքն յաժողովի. կը նկատուէին անջատողական, և հետեւաբար դատապարտելի էին :

Բայց վերջապէս թուրք մտաւորականութիւնն ալ ստացաւ, աւելի ճիշդը՝ սկսաւ ստանալ քայլ մը աւելի առաջ անցնող շրջափոխութիւն : Յառաջ եկաւ ուրիշ խմբակցութիւն մը, Ապակեդրոնացման ու Անձնական Նախաձեռնութեան կուսակցութիւնը, որ ըստ էութեան Օսմանցիութիւնը Շուրայի Իււնկերէն կամ Մեշլեքերէն տարրեր կերպով չէր ըմբռներ, բայց իր մտածողութիւններուն և ծրագիրներուն մէջ կը մտցնէր գիտականին հետ եւրոպայական գարգացական լուծիչ սաղմերը, յեղափոխականի, յեղափոխական գործերու պատրաստակամութիւնը :

Ամէն պարագայի մէջ՝ ասիկա քայլ մըն էր դէպի յառաջ :

Այդ՝ ազդանշանն էր կատարուող շրջափոխութեան մը, որ եթէ տակաւին Ազգային Գաղափարի Գաշնակցական ըմբռնումը չէր որդեգրեր, բայց ոչ միայն անհաշտ ոգին կը չեզոքացնէր՝ այլ մանաւանդ կ'ընդունէր ընդհանուր թշնամիին՝ համիտեան բռնապետութեան դէմ միացած ոյժերով կռուելու կեանքի հրամայական պահանջը :

Այդ շրջափոխութիւնը նպաստեց այլացեղ յեղափոխական և ընդդիմադիր կազմակերպութիւններու մերձեցման ու համագործակցութեանը հնարաւորութիւն տուող միջին ճանապարհը գտնելու :

Եւ տեղի ունեցաւ Բարիդի մէջ կուսակցական Համաժողովը, որուն պատմութիւնը շատ թարմ է վերջիչել տալու համար :

Այդ համաժողովին ամէնէն բնորոշ և նշանակալից բովանդակութիւնը կը կայանար անոր մէջ որ՝ թուրք մտաւորականութեան համար ա՛լ կը դադրէին անջատողականութիւն նկատուիլ ոչ-կրաւորական շարժումները, և Ահմէտ Րիզա կամ իր կուսակցութիւնը կ'անցնէր՝ իր-բիւ գաշնակից՝ յեղափոխականներու շարքերը:

Ընդհանուր Յեղափոխութիւնը պիտի դար սպահովապէս տապալելու բռնապետութիւնը, փրկելու ընդհանուրի հայրենիքը, հաստատելու հանրազարական-սահմանադրական կառավարութիւն:

Բայց այդ երևւոյթը խօսքէն, թուղթէն գործի չանցաւ:

Որովհետեւ, ինչպէս յիշեցի, Մակեդոնական Հարցի առիթով Րէշիպի խորհրդակցութիւնը, կամ, ինչպէս կ'ըսէին, տեսակցութիւնը՝ տեսակցութեան որոշումը յառաջ բերաւ այդ գաշնակցող կուսակցութիւններուն կողմէ չնսխաստեսուած շարժում մը, — Բ. դօրաբանակի ըմբոստ հայրենասէրներու սպանալից պահանջը, այդ սպանալիքին առջև Բռնապետ-Գահիճին զիջումը, Միղհատեան Սահմանադրութեան վերյայտարարութիւնը, — զոր կարելի է համարել զինուորական տարրեր տեսակի Պետական Հարուած մը:

Տեղի ունեցաւ փոփոխութիւնը, ուրեմն, առանց արիւնհեղութեան, այսինքն առանց յեղափոխութեան, մանուսնդ առանց թուրք կրաւորական ճարահատ կամ ակամայ յեղափոխականներու յեղափոխական շարժումներուն:

Վիժեցաւ Բարիզի միջկուսակցական Համաժողովի ընդհանուր յեղափոխութեան որոշումն և գործադրութիւնը:

Այդ անկանխատես վիժումը, իրերու, դէպքերու

դասաւորութիւնը նպաստեցին կրաւորական հայրենամու-
ներուն :

Եւ վերաշինութեան ղեկավար ըլլալու պաշտօնական
ու անպաշտօն դիրքերը գրաւեցին անոնք՝ որ յաւակ-
նութիւնը ունէին ստեղծելու իրենց ըմբռնումի յատուկ
Օսմանցիութիւնը, — Լուծումը :



V

ԻԹԹԻՀԱՏԸ — ՍԱՅՅԱՔՈՒՄՆԵՐ



Առանց ընդհանուր յեղափոխական շարժումներու,
Բ. զօրաբանակի մէկ սպառնալիքը միայն՝ իրրեւ Պետա-
կան Հարուած՝ վերյայտարարել տուաւ Սահմանադրու-
թիւնը :

Երեսուն երկու տարիներու բռնապետութիւնը, ոճ-
րագործներու կառավարութիւնը՝ ծրագրելով և իրագոր-
ծելով հանդերձ հայկական հարիւր հազարաւորներու կո-
տորածը, հարիւր հազարներու տեղահան վտարումը, հա-
լածական թափառումը, զրկելով երկրին մէջ մնացողները
երթեւեկութեան իրաւունքէն, ազատ աշխատանքէն,
աշխատանքի արդիւնքը վայելելու հնարաւորութենէն,
ընտանեկան պատուէն, անձնապաշտպանութեան միջոց-
ներէն, մարդկային արժանապատուութենէն, օրէնքին
պաշտպանութենէն, հողէն, գործադրելով հանդերձ սիս-
տեմադրիկ բնաջնջման քաղաքականութիւնը, չէր խնայած
մինչեւ իսկ Թուրքին, Արաբին, Ալպանիացիին, Քիւրտին,
Յոյնին, Պուլկարին :

երկիրը ամբողջ, — միջավայրին, աշխարհագրական ու
միջազգային պայմաններուն համեմատ, — անտեսական քայ-
քայման, սպառման ենթարկուելով հանդերձ ստեղծուած
էր միջնադարեան հաւատաքննութեան այնպիսի դրու-
թիւն մը, ցեղեր ու անհատներ իրարու դէմ գրգռող,
կրար հարուածող շնորհունակի և անշնորհունակի մրցում,
քտեսողն իսկ լրտեսողի այնպիսի մաքեամէլեան կազմա-
կերպութիւն մը, յայտնի համարձակ քաջալերուող ոճրա-
սործներ, դատարաններու իրաւասութիւնը քննող, դա-
տեր կասեցնող, դատավճիւնները անգործութեան մատնող
անթիւ, անհամար իրարու հակասող իրաւեաներ, Պալատին
անդուր եղող, անհանդուրժելի դարձող սրիկայի մը ու-
թիչ սրիկայի մը միջոցով, ձեռքով սպաննել տալը, սպան-
նողը ակներեւ պաշտպանելէ յետոյ նոյն ոճրագործը ևս
կր կարգին ուրիշ ժամանակ նոյն եղանակով և պատճառ-
ներով անհետացնել տուող այնպիսի վճռակներ էին ըս-
տելուած, պետականութեան պատկառանքին միմիայն
ան ու սարսափը, անվստահութիւնը, մէկ ժամէն միւս
ժամը, մէկ բոպէէն միւս բոպէն անապահովութիւնը ա՛յն-
քան էին տիրապետած, շնչելու օդը այնքան էր պակաս՝
որ Սահմանադրութեան վերայայտարարութեան առաջին
տրն իսկ, ո՛չ միայն ժողովրդական՝ այլ կառավարական
խաւերն անգամ խեղդող միջնուորտէ մը ազատուողի գո-
հունակութիւնը, ուրախութիւնը արտայայտեցին :

1908 Յուլիս 10/23էն մինչև Օգոստոսի կէսերը
բանդավառութիւնները, զգացման զեղումները այնքան
հմայիչ էին՝ որ ինձ կը թուի թէ այդ օրերու խրախճա-
սութիւնները, հայ նահատակներու հողակոյսներուն արը-
նուած օրհներգները, Հայ Յեղափոխութեան՝ իրրեւ ընդ-
անուր Օսմանեան Յեղափոխութեան ռանգիրայ, յա-
ռաջապահ մատուցուած մեծարանքը կը բղխէր տան-

ջուածի, տառապածի՝ առանց տղգի և կրօնի խտրութեան,
կուրծքէն ու անկեղծօրէն :

Բայց սրտազեղումները երկար չտեւեցին :

Բոլորին ալ զանազան շափերով ու ստաիճաններով
ատելի դարձած ռեժիմին դէմ լուրջ պէտք էր հաստատել :

Զգացումներու փոխարինել սկսաւ գործնական ըլլա-
լու անհրաժեշտութիւնը, պահանջը :

Այդ պահանջը, անհրաժեշտութիւնը իր մէջ ցոյց
տուած էին հէնց առաջին օրէն Իթիֆիհատ-թէրաքքը կազ-
մակերպութեան անուշով Պոլսի և Սելանիկի մէջ գործի
անցնողները :

Հասարակութեան մէջ հարց էր դրուած թէ Բռնա-
պետութիւնը տապալուելէ, Իթիֆիհատ-թէրաքքը մար-
մինը պաշտօնապէս գործի տապարէզ նետուելէ յետոյ,
պիտի իրագործուէր արդեօք նոյնութեամբ՝ նոյն Մարմին
ստորագրութիւնը կրող Բարիզեան Կոնգրէի համաձայնու-
թիւնը :

Երջրդը՝ ինչպէս անցեալին մէջ, Յուլիս 10/23էն
յետոյ ալ իր դերին մէջ էր :

Նու առաջին օրերուն, Պոլսի մէջ երևւան եկող Իթ-
իֆիհատ-թէրաքքըն յայտարարեց թէ ինք առնչութիւն
չունի արտասահմանեան այդ անուն մարմինն հետ :

Այդ յայտարարութիւնը կը նշանակէր թէ իրեն հա-
մար պարտաւորիչ, գործադրելի յանձնառութիւններ չեն
Բարիզեան Կոնգրէին պայմանները :

Երլաղզը հանգստացաւ : Վտանգաւոր հարց մը վեր-
ցուած էր :

Բայց, եթէ այդ անհրաժեշտութիւն մըն էր յետա-
դայ դէպքերէն ըզխած, կարող էր և պէտք էր որոշուէր
պայմանադիր կողմերէ բաղկացած երկրորդ Կոնգրէով մը
ու այդ պատճառով ալ անհրաժեշտութիւն չկար յայտա-

բարեխու թէ («արտասահմանեան») Իթթիհատ-Թէրաքքըին նետ ասնչութիւն չունինք :

Բարեղեան Կոնգրէի դաշնագիրը կը պարունակէր էական, հիմնական կէտ մը : Պայմանադիր կողմերը կ'ընդունէին, կը ճանչնային մէկմէկու ինքնուրոյնութեան, գոյութեան իրաւունքը :

Պոլսոյ յայտարարութիւնը հրապարակ հանելով, քաղաքավարի կերպով—եթէ կարելի է այսպէս որակել—նակցենկ կ'ուզուէր թէ զինուորական պետական հարուածը ազատեց այդ կուսակցութիւնը ակամայ յեղափոխական տրամադրութենէ, ազատեց իրմէ դուրս ուրիշ գոյութիւն ճանչնալու ստիպողականութենէն :

Պայմանադիր կողմերու մէկմէկու ինքնուրոյնութեան ճանաչումը հիմնակէտն ունախագիծն էր Օսմանցիութիւնը կազմող ազգերու փոխադարձաբար մէկմէկու ինքնուրոյնութիւնը ընդունած ըլլալու, յարգելու, պաշտպանելու յանձնառութեան :

Պոլսոյ յայտարարութիւնը, ուրեմն, քաղաքագիտական միջոց մըն էր այդ յանձնառութենէն ազատուելու :

Այդ կազմակերպութեան՝ Իթթիհատ-Թէրաքքըի ներքին վիճակը, թուրք մտաւորականութեան մակարդակը ուսումնասիրողներու համար տարօրինակ չափաթուէր այս երեւոյթը :

Խօսքի, մամուլի, հաւաքումներու, ընկերակցութիւններու ծայրայեղ հալածման չրջանին՝ Մեշվեքեքը կամ Շուրայի Իււնեքը, ինչպէս և Թեքասֆըն ծովեզերեայ քաղաքներու մէջ մուտք ունենալու հնարաւորութիւնը դտած են, սահմանափակ թուով ընթերցողներ ունեցած են : Բայց իսկական կազմակերպութիւն, մարմիններ՝ ընա՛ւ :

Բարձրաստիճան թուրք պաշտօնեայ մը ինձ պատմեց՝ թէ Օսմանադրութեան վերջայտարարութեան յա-

Չորդ օրը , կարելու որ նահանգի մը կեդրոնին մէջ կը ստացուի
Իթթիհատ-Թէրաքքը Մարմնի անուհով հեռագիր մը
Հեռագիրը կը տանին նահանգապետին որ կը մերժէ . կը
տանին Քաղաքային Ինքնավարութեան՝ Պէլէտիյէի՝ նա-
խագահին , որ նոյնպէս կը մերժէ , որովհետեւ դեռ իրե-
րու վիճակի մասին որոշ տեղեկութիւն չունէին : Երկու օր
յետոյ կը հանի թղթատարը , կը բացուին , կը կարգա-
ցուին մայրաքաղաքի օրաթերթերը . շղթայագերծ ազա-
տութեան փառաբանութեան նկարագրութիւնները կը
սթափեցնեն վարանողները , և անմիջապէս մերժալներէ կը
կազմուի Մարմնի մը որ , ի հարկէ , սլտի մկրտուէր Իթ-
թիհատ-Թէրաքքը անուհով :

Այն տեղերը ուր կը գտնուէին հալածուած զինուորա-
կաններ , աքսորուած մտաւորականներ , օրինակ առնելով
Սելանիկը , յեղափոխականի շարժումներով ժողովրդական
թափօրներ , ցոյցեր կը կազմակերպեն , կը վտարեն բը-
նապետութեան հաւատարիմ գործիքները կառավարական
պաշտօններէն :

Բայց այն տեղերը ուր կազմակերպութիւնը , մար-
մինները կը ծնին կասկածելի տարրերէ , օրուայ ուժէն
ռէժիմէն օգտուիլ գիտցող տղրուկներէ , այդ տեղերու
մէջ ևս թէեւ պաշտօնեաներ արտաքսելու երեւոյթը տեղ
կ'ունենայ , բայց կը կատարուի հակառակ ուղղութեամբ
Այդ տեղերուն մէջ տուժողները կ'ըլլան կասկածելիներ
րուն , սղրուկներուն անհաճոյ , սահմանադրականութեան
վտարելի պաշտօնեաները :

Երկու ձեւի տակ ալ , կազմակերպութիւնը կ'ու-
ճանայ , մարմինները կը բազմանան : Ամբողջ զինուորա-
կանութիւնը , կայսրութեան պաշտօնէութիւնները կը
դառնան Իթթիհատ-Թէրաքքրի խնկարկուներ :

Կայսրէն սկսած մինչեւ յետին պաշտօնեան կ'երդնու

Իթթիհատ-Թէրաքքրով, որ կը ստանայ ամենազօր հր-
մայք մը, կը դառնայ ամենակարող ուժ մը :

Իթթիհատ-Թէրաքքրի, այդ ամենակարող ուժին բա-
րիզեան գործիչները Պոլիս էին արդէն :

Պոլսոյ յայտարարութիւնը արդեւք չէ, սակայն, որ
անոնք պաշտօնապէս ղեկավար դառնան Իթթիհատ-Թէ-
րաքքրի Պոլսոյ մարմինն՝ իբրև ներկայացուցիչ Սելա-
նիկի Կեդրոնական Կոմիտէին :

Ընդհակառակը, Պոլսոյ յայտարարութիւնը կը նպաս-
տաւորէ որ բարիպետները, արտասահմանեանները ներ-
կայանան կայսեր, համբուրուին ու վարձատրուին :

Այդ նոյն ղերակատարները՝ մինչև իրենց ոտքի
հողը վերջնականապէս հաստատուն գտնելը, կը շարու-
նակին կիսապաշտօն, անպաշտօն յարաբերութիւններ պահ-
պանել իրենց Բարիզեան դաշնակիցներուն հետ, Միջ-
կուսակցային Վարիչ Մարմին կազմելու համաձայնու-
թիւնը կայացնել, մէկ պայմանով միայն՝ միւսները, մա-
նաւանդ Հ. Յ. Գաշնակցութիւնը, պաշտօնապէս չպիտի
յիշատակուին. հանդէպ կառավարութեան՝ Իթթիհատ
Թէրաքքրն միայն պիտի շարունակուի ճանչցուիլ :

Կացութիւնը կը ստիպէր միւսները զիջիլ :

Զիջումի ստիպող կացութիւնը ասիւնքան կը ծանրա-
նայ որ, բարիզեան պայմանադիրներէն Ապակեդրոնաց-
ման ու Նախաձեռնութեան կուսակցութիւնը կը յայտա-
րարուի միացած, լուծուած Իթթիհատ-Թէրաքքրի հետ :

Սապահէտտինը ամենափայլուն ընդունելութեամբ
մուտք կը գործէ Պոլիս, բայց զայն ընդունող, զիմա-
ւորողներու շարքին մէջ չեն երեւիր Մէշվէրէթի խմբա-
կը : Լուծումը բաւական չի համարուիր երկու կողմերը
բաժանող անջրպետը լեցուած, անձնաւորութիւնները
միացած տեսնելու :

Միջկուսակցային բոլոր ընդդիմադիր տարրերէն կոնգրէ մը պիտի մշակէր ընդհանուր ծրագիր մը, (պըլատֆորմ) ընտրութիւններու, պարլամենտական շրջանի համար :

Այդ մասին Իթթիհատի պաշտօնական դիրք ու ազդեցութիւն գրաւողներու խոստումները մնացին լոկ խօսք: Անոնք գտան հնարքը խոստումներէ ազատուելու :

Վերցնելով զանազան կուսակցութիւններու պլատֆորմ-ծրագիրները, անոնցմէ քաղուածօրէն, Իթթիհատի սեփական ձգտումները տեղաւորուած ու քօղարկուած ծրագիր մը հրատարակ հանուեցաւ :

Այդ Իթթիհատեան ծրագիրը կը հրատարակուէր ո՛չ միայն բոլոր կուսակցութիւններուն համար ընդունելի ըլլալու առաջադրութեամբ, այլ և չէր ծածկեր այն միտքը՝ թէ այդ կուսակցութիւնը, արդէն ընդունած ըլլալով իր մէջ զանազան ազգերէ անհատ-անդամներ, կտորոզ է ներկայանալ Օսմանցիներու ամբողջութեան միակ Քաղաքական Մարմինը :

Հասած կը համարուէր ժամանակը՝ կուսակցութիւններու Միութիւնը լուծման ստիպելու :

Հասած կը համարուէր ժամանակը՝ Օսմանցիութիւնը իրրեւ Ազգերու Միութիւն ընդունելու փոխարէն, բռնադրօսիկ ինքնուրացութեամբ, լուծուած էութեան բռնադրօսիկ ըմբռնումը պարտադրելու :

Այս տրամադրութիւններուն տակ սկսան պատգամաւորական ընտրութիւնները :

Մենք ըսինք արդէն՝ թէ իրաւազրկութիւնն ու խտրականութիւնն էին ստեղծած Արեւելեան Հարցն ու Պատմութիւնը :

Այդ իրաւազրկութիւնը, խտրականութիւնը ջնջելու

համար, գոնէ ձեւականօրէն ընդունուած էր Թանգլիմա-
դէն ի վեր հիմնական օրէնսդրական սկզբունք մը .

—Վարչական, դատական մարմինները կը կազմուէին
կէս առ կէս, հաւասարապէս մահմետականներէ ու քրիս-
տոնեաներէ :

Մինչդեռ նորիմաստ Օսմանցիութիւնը պիտի գար
ջնջելու կէս դարէ աւելի ժամանակէ ի վեր երկրին մէջ
արմատ ձգած, բոլորին համար բնական համարուած այդ
օրէնսդրական սկզբունքը, հաւասարութեան գոնէ ձե-
ւական կիրառութիւնը :

Այս նորիմաստ Օսմանցիութիւնը կու գար ջնջելու
իրաւազրկութիւնը, խտրականութիւնը . բայց կը ստեղ-
ծէր ազօրէն խտրականութիւն, և իրաւազրկութեան փո-
խարէն օրինական խտրականութիւն, իրաւազրկութիւն :

Կիրառութեան դրուած բնտրական կանոնով՝ ան-
խտիր ազգերու և կրօններու, 500 բնարող մէկ պատ-
ուիրակ, 50,000 բնարողներու պատուիրակներ մէկ պատ-
գամաւոր պիտի բնարէին :

Բաւնապետութեան շրջանին՝ ազգերու խոչտանգումը,
մանաւանդ հայկական տարրի բնաջնջման քաղաքականու-
թիւնը բաւական չհամարուելով, դիտումնաւոր ազգա-
համարներու հետ կը կատարէին նահանգային-վարչական
այնպիսի բաժանումներ՝ ուր մանաւանդ Հայոց թուա-
կան նշանակութիւնը ողորմելի աստիճանի կը վերած-
ուէր :

Կիրառութեան դրուած բնտրական կանոնով՝ թէև
պատգամաւորութեանց բնտրութիւններու շրջանակ տահ-
մանուած էին արդէն գոյութիւն ունեցող Սանճաքները,
բայց պատուիրակներ—իֆլինճի միւլերքիսիպներ—բնտրելու
համար շրջանակներ կազմելու իրաւունքը կը արուէր տե-
ղական թաղապետական մարմիններուն :

Ամէն կողմ առհասարակ, մանաւանդ Հայաստանի, հայաբնակ վայրերու մէջ, ո՛ւր որ հնարաւոր և պէտք էր, գործ դրուեցաւ այդ իրաւունքը, ստեղծելով այնպիսի անընտանի շրջանակներ՝ ուր հայկական թուական առաւելութիւնները կը վերածուէին աւելի մանր կոտորակներու, որպէս զի ոչ-թուրք, կամ ոչ-մահմետականները առանձինն առանձինն հնարաւորութիւն չունենան մեծամասնութիւն ներկայացնելու :

Մանաւորապէս Հայաստանի մէջ, մանաւանդ Հայերը մնացին ամէն տեղ համարեա փոքրամասնութիւն :

Հայ պատուիրակի, հայ պատգամաւորի ընտրութիւնը կախուած էր մեծամասնութենէն, այսինքն թուրքի, մահմետականի հայեցողութենէն, կամքէն, հաճոյքէն :

Ես չեմ խօսիր զեղծումներու, բռնութիւններու, մանաւանդ կոտորածի սպառնալիքներու մասին :

Մեծամասնութեան, օրէնքի անունով, Օսմանցիութեան անունով կատարուածը բաւական է բնորոշելու, պատկերացնելու համար նուիրագործուող խտրականութիւնն ու իրաւազրկութիւնը :

Եթէ բռնապետութեան շրջանին ամէն մէկ հնարաւորութենէ օգտուելով, օրէնքի անունով իրաւունք էր բողոքելը խտրականութեան, իրաւազրկութեան դէմ, այժմ՝ սահմանադրականութեան շրջանին՝ օրէնքի անունով խտրականութեան, իրաւազրկութեան մասին բողոք բառնալու հարկ չկար, որովհետեւ իրաւունքը մեծամասնութեանն է :

Այս արտաուոց բնութեամբն ու գործադրութեան նրկատմամբ տեղի ունեցած բողոքներու հանդէպ՝ Թանկեր միայն անկեղծօրէն կամ համբերատար ըլլալու անընդունակ ջղայնութեամբ իր ներքինը դուրս կուտար, իսկ

առհասարակ թուրք մտաւորականութիւնը կը յայտարարէր թէ Օսմանցիութեան շահուն և պաշտպանութեանը համար, իր թրքութենէն հրաժարած է :

Ի՞նչ մեծ գոհողութիւն . . . :

Բռնապետութեան օրերու օրէնքներով իսկ գոնէ՛ անասկանապէս գոյութիւն ունեցող իրաւունքներու ջրնջումով, բոլորը թրքութեան մէջ լուծող Օսմանցիութեան յորջորջումը ի՞նչու նախամեծար չհամարել թրքութենէն :

Այս ըմբռնումին, ոգիին մէջ համերաշխ էին ու են ո՛չ միայն թուրք մտաւորականութեան, Ժէժն-Թիւրքերու զանազան խուերը, այլ և յետադիմականները, պահպանողականները, մուսուանդ կղերական և կղերամիանները, սանձարձակ միապետականները, կասկածելի սահմանադրականները, որոնց բոլորն ալ դիմակաւորուած են «սահմանադրականութեամբ» :

Վերջացան ընտրութիւնները, և եկան Օսմանեան Խորհրդարանի մէջ իրր պատգամաւոր բազմալու մինչև իսկ անոնք որ ամբաստանուած ըլլալով իրրեւ կազմակերպիչ ու իրագործող Հայկական Զարդերու, իրրեւ հարստահարիչ, իրրեւ աւարառու, իրրեւ յափշտակիչ, իրրեւ մարդասպան, օրէնքով իսկ զրկուած էին ընտրելի ըլլալու իրաւունքէն :

Բայց ո՞վ պիտի լսէր, քննէր ու վճռէր օրինական բողոքները :

Մեծամասնութիւնը :

Մենք պարզեցինք արդէն թէ ի՞նչ բանի մէջ կը կայանայ մեծամասնութիւն ըսուածի ըմբռնումն ու ձրգտումը, բովանդակութիւնը :

Եւ ամէն մէկ բողոք, ի՞նչ նիւթի համար ալ ըլլայ, եթէ Հայի անունով է — մերժուած է, լսել անգամ չեն ուզեր :

VI

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԸ



Ազգային դադափարը սակայն, ո՛չ թէ իր անկման, անհետացման՝ այլ մանաւանդ զտման, զարգացման շրջանին մէջ է :

Ինչպէս ամբողջ կենդանական, կազմական աշխարհը, տիեզերքը ամբողջ՝ շրջափոխութեան, ձեւափոխման ենթակայ է, նոյնպէս և Ազգային Գաղափարը՝ միջավայրի, զարգացման աստիճաններու համեմատութեամբ կ'ենթարկուի նոյն օրէնքին :

Ինչպէս կենդանիներու ո՛չ մէկ տեսակը չի կրնար պնդել՝ թէ ուղղակի ո՛ր նախահաւէն սերած է, քանի որ գիտութեան այժմեայ ըմբռնումով ո՛չ մէկ կենդանի՝ իրբև ուրոյն ախպ, ինքնուրոյն նախաստեղծուած չէ, այլ բազմաճիւղաւորեալ ձեւափոխուած ախպը, ցեղն է նախակենդանական նախատիպի, նոյնպէս մարդ-կենդանիներու ազգերը չեն կարող յաջորդական զուտարիւնութեամբ ապացուցանել՝ թէ ո՛ր տոհմին, ցեղին սերունդներն են :

Միջավայրները, շրջապատող պայմանները, արեւելքէն ու արեւմաքէն, հիւսիսէն ու հարաւէն բազմաթիւ ու բազմացեղ գաղթերն ու արշաւանքները, տիրողի և տիրապետուողներու նախապատմական ու պատմական անյիշատակ ժամանակներէ խառնուրդները կազմած են այն թուր մանր ու խոշոր ազգութիւնները՝ որոնք ի սփիւռս աշխարհի կան ու գոյութիւն ունին այժմ, ամէն

մէկը իբրև ինքնուրոյն ցեղ, ինքնուրոյն տիպ, ինքնուրոյն ընկերական անհատականութիւն այնպէս՝ ինչպէս առանձինն ամէն մէկ կենդանական, կազմական տիպ, տեսակ :

Մտնկողական, թաթարական, արաբական արչաւանքները, գերմանական բարբարոս ցեղերը, հռովմէական աշխարհակալութիւնները, իսլամական նուաճումները, պապական եկեղեցիի համայնակուլ, տիեզերասասա թագակիր յաւակնութիւնները, երկնքի ու երկրի իշխանութեանց մէկ անձնաւորութեան վրայ կեդրոնացումները անզօր գանուեցան ջնջելու Ազգայնական Ոգին :

Ճիշտ է, բոլոր դարերու, բոլոր երկիրներու, բոլոր կրօններու տիրապետութեանց տակ եղած են, գոյութիւն են ունեցած Ազատի և Անազատի, Իրաւազուրկի և Իրաւատէրի, Սպիտակամորթի և Սևամորթի, Բողոքականի և Կաթոլիկի, Աստուծոյ Ժողովուրդի և Հեթանոսի, Իսլամի և Կեալուրի խտրականութիւնները :

Ճիշտ է, որ Մեծն Ելլադայի մէջ միայն Ազատ Յոյնը կը ներկայացնէր Ազգային Իրաւատէրը, Ազատ Հռովմայեցին միայն կը վայելէր քաղաքացիի իրաւունքը. աւատական իշխանութեանց ժամանակ՝ աւատական ազնուականները միայն իրենց մէջ կը կեդրոնացնէին ազգային եւր. բայց այդ բոլորը տեղի առին իրարազուրկներու, ժողովուրդներու ընդվզումներուն, ըմբոստացումներուն առջև, որովհետև բնական շրջափոխութեան երևոյթ ըլլալէ աւելի՝ բիրտ ուժի, ճնշողի և ճնշուողի դրութեան հետեւանքներն էին :

Երկար ժամանակ Կրօնական-Միասպաշտական մոլեռանդութեան կապակցութիւններու առջև տեղի տուած են ազգային ըմբռնումները, բայց վերջի վերջոյ, յանկարծ, անսպասելի կերպով, վճռական բոպէներուն

պոթկացեր, արտացոլացեր են ազգային զգացումները, բնազդները զտուելով, մաքրուելով և ընդհանրանալով, իջնելով ազնուապետական, իշխանական, տիրապետող խաւերէ ժողովրդական, իշխուածներու, տիրապետուածներու ամբոխային խաւերը :

Ծիշդ է, որ աւատական իշխանապետութիւններու տիրապետողի ձգտումները անցնելով ֆալսեմի (Պուրժուա-կան) Քաղաքակրթութեան, Սահմանադրական Միապետութիւններու մէջ՝ երկար ժամանակ ազգ ըսելով կ'ըմբռնէին միայն անոնք՝ որոնք կը ներկայացնէին քաղաքական կազմակերպուած Մարմին, Պետութիւն, և այդ ըմբռնումը կը նպաստաւորէր լայնածաւալ հսկայ կեդրոնացումներու կազմաւորմանը. բայց այդ ամէնը արգելք չեղան՝ որ Իրլանտացին, Սկոտլանտացին, Պոհմացին, Հունգարացին, Պալարացին, Լոզանցին, Ժընևցին և ըն-մնան իրենց ինքնուրոյնութեամբ ազգային անհատակա-նութիւններ՝ անդլիական, գերմանական, աւստրիական, զուիցերական Քաղաքական-Միութիւններուն մէջ :

Ծիշտ է, որ բոլոր այդ երկիրներուն մէջ տիրապետող ցեղերը տիրապետողի նշանաբանը ընդունեցին, որով տիրապետուածներուն շնորհելով հանդերձ քաղաքացիական-անհատական իրաւունքներ, կը թելադրէին մէկ պայման — հրաժարիլ Ազգայնական Ինքնուրոյնութենէ : Այդ նշանաբանին իսկական բովանդակութիւնն էր — կա՛մ ձուլում, կա՛մ մահ :

Բայց այդ բոլորը անզօր են մնացած, անզօր կը մնան, որովհետեւ բնութեան, կենդանական աշխարհին մէջ կայ անջնջելի, բնական ձգտում մը, տենչ, նպատակ մը — մէն մի ցեղ, մէն մի տեսակ, մէն մի անհատ կը ձգտի, կ'աշխատի ոչ միայն պահպանել իր անհատական, սեփական գոյութիւնը՝ այլ և իր անհատական ու ցեղային

գոյութիւնը, անհատականութիւնը փոխանցել, հրիտակել, սերունդէ սերունդ, յաւերժացնել իր սերունդը:

Այդ տիեզերական օրէնքէն բացառութիւն չի կրնար կազմել մարդ-կենդանիին ո՛ր է ցեղը, ազգութիւնը:

Գոյութիւն ունեցող մէն մի ցեղ, ազգ կը ներկայացընէ մարդ էակի բազմազանութիւններու, աշխարհագրական, սպտմական, տնտեսական, ցեղագրական, դարգացական աւանդական յատկութիւններու, ժառանգութիւններու ամբողջութեամբ ձեւակերպուած, ինքնորոշուած հաւաքական անհատականութիւն մը, որմէ հրաժարիլ այնքան վեր է բնազդական ձգտումներու կարողութենէն, որքան մէն մի մահկանացուի ինքնասպանութեան յօժարամտութիւնը:

Եւ կ'ապրին թող որ այն ազգերը՝ որոնք ինքնասպանութեան յօժարամտութիւնը չեն ունեցած:

VII

ՄԵՆԱՏԻՐՈՒԹԵԱՆ, ՇՈՎԻՆԻԶՄԻ, ՄԻԼԻԴԱՐԻԶՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԶՏՈՒՈՂ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ԶԳՏՈՒՄՆԵՐԸ

Բայց Միջնատեան սահմանադրութեան, անոր սուսցիւն խուսրէվեան, Բաշխտեան հայրենամոլ վերածնութեան այս ժառանգորդները ապացուցին որ զուրկ են իրենց Մեծ-Վերանորոգողին, իսկական Պետական Մարդունըրամտութենէն:

Կը հրատարին Երկիրը՝ Թուրքիա, Պետութիւնը
Թրքական, իրենք զիրենք Թուրք անուանելէ, որպէս զի
իրաւունք համարեն մէկ աւազանի՝ Օսկանցիտրեան մէջ
ձուլել, անուանազրկել Հայր, Յոյնը, Քիւրաք, Արարը,
Վրացին, Ալպանացին, Մակեդոնացին, Սերպը, Հրեան:

Փոխանակ պատմութիւնը, քաղաքակրթութիւնը,
չրճափոխութիւնը ուսումնասիրելու, թութակի նման
կիւրացնեն պուսթուա Սահմանադրական Պետութիւննե-
րու տարրալոյժ քաղաքականութիւնը:

Չէ՞ որ Բրուսիան կը ճնշէ լեհական լեզուն, ազ-
գայնութիւնը և կ'արտագրաւէ հողերը:

Չէ՞ որ Անգլիան՝ յանուն Բողոքականութեան՝ փո-
խարինութիւն երբեմնի կաթոլիկութեան, նոյն այդ ձրգ-
տումները ունեցած է Բողոքականներուն և կաթոլիկ Իր-
լանտացիներուն հանդէպ:

Չէ՞ որ Հունգարիան նոյն քաղաքականութիւնը դեռ
ևս կը չարունակէ սլաւ քաղաքացիներու հանդէպ:

Չէ՞ որ ռուսական Լեհաստանը իր կրած զրկանքնե-
րով կը նախանձի աւստրիական Լեհաստանի տանելի վի-
ճակին:

Չէ՞ որ նոյն Ռուսաստանը այսօր իր ռուսացման քա-
ղաքականութիւնը ամենալայրազ կերպով կը մղէ Կով-
կասի մէջ Հայուն, Վրացիին, Թաթարին և ուրիշ ոչ-
ռուս ազգերու դէմ:

Չէ՞ որ նոյն Ռուսաստանը մինչև անգամ մոլոտու-
սը՝ Փոքր Ռուսաստանցի Ռուսը մաքուր Ռուս չհամա-
րելով, կը մղէ նոյն ռուսակուլ քաղաքականութիւնը իր
այդ համազգիներու լեզուին, գրականութեան և ինքնու-
րոյնութեան դէմ:

Ինչո՞ւ Սահմանադրական Թուրքիային թոյլատրելի,
ներելի, իրաւունք չպիտի համարուի գործադրել այն

սխաղէմը որ գործադրուած է ու կը գործադրուի այդ սոցոր երկիրներուն մէջ սլաւոնականներու, սաքսոնականներու, լատինականներու, Ֆինլանտացիներու, Հայերու, Թուրքերու, Թաթարներու ևն. հանդէպ :

Բայց Ժէօն-Թուրքը չի տեսներ թէ այդ ամէնը ի՞նչ յաջողութիւն գտած են նոյն երկիրներուն մէջ : Չի տեսներ Իրլանտական Հարցին անգլիական մտքերու մէջ կատարած նուաճումները, բրուսիական Լեհերու անընկճելութիւնը, աւստրիական պետական կազմին՝ Գաշնակցականութեան (Fédération) մերձեցումը, բոլոր ազգայնական հալածանքներու յոռաջ բերած սուր հետեւանքները, ազգայնական գաղափարի սամկալարացումն և անջատողական ըլլալէ հեռացող մաքրագործումը :

Անոնք որ Տաճկաստանի ղեկավար տարրերը դառնալու յաւանութիւնը ունին, չեն տեսներ չրջապատող, օրինակ առնուած պետութիւններու քաղաքակրթական, զարդացական մեծութիւնները, արդիւնաբերական, արնտեսական, զինուորական վիթխարի ոյժերը :

Անոնք կը մտնան չրջապատող վտանգը, դաշնադիր պետութիւններու շահակցական մրցութիւնները :

Կը մտնան, կ'անգիտանան նոյն իսկ թրքական շահերու տիրապետութեան տեսակէտով՝ Օսմանցիութիւնը կազմող Ազգերու ինքնուրոյնութեան պահպանութեամբ, Միուրեակ անհրաժեշտութիւնը և ո՛չ Լուծումը :

Անոնք չեն տեսներ, չեն ըմբռներ թէ վերածնութիւնները, պետական խմբակցութիւնները, կեղբոնացումները կը կատարուին ոչ թէ բազկացուցիչ մասնիկներու, տարրերու լուծումով, այլ անոնց ինքնուրոյնութեան զարգացումով, անհատէն սկսած ապակեզրոն միութիւններու գործակցութեամբ :

Տարարազգարար, անձնասպանութեան համազօր այս

ազխտութիւնը դարերու և բազմաթիւ ժողովուրդներու յատուկ է եղած :

Գերակշռելու , տիրապետող դասնալու , մենատէր ըլլալու աննչը ինչպէս անցեալին մէջ , ներկայիս ալ կը շարունակէ իր աւերիչ , ոճրագործ դերը կատարել Պալքաններու , Մակեդոնիոյ մէջ :

Յունական , սերպիական , պուլիարական , ուսմանական մրցումները , իրար յօշոտող ու հալածող ոճիրները կը շարունակուին :

Աթինական , յոնիական , սպարտական , փիւնիկեան , մակեդոնական , սերպիական բոլոր փառքերը անցեալին մէջ խաւարած էին միայն այդ մրցման , տիրապետող , միայնակ ըլլալու տենչին շնորհիւ :

Պատմութեան դասը անտես կ'աւնուի , և վերածնութեան օրերու սկիզբէն կը կրկնուին անցեալի սխալներն ու ոճիրները :

Գոյութեան կռուի բնական հետեւանքը կը համարուին այս ամէներ :

Դարձեալ ազխտութիւն . . .

Գիտութիւնը ապացուցուց որ գոյութեան կռուի գլխաւոր ազդակը բիրա ոյժը , մի միայն սեփական կաշիին պահպանութեան , պաշտամունքին կատարութիւնը չէ :

Ըսի արդէն թէ կենդանական թաղաւորութեան մէջ ամէնէն աւելի մարդ-կենդանին է որ , համեմատաբար իր բնական ընդունակութիւններուն , գոյութեան կախին մէջ կը ներկայանայ իրրեւ իր նմանին հանդէպ փոխադարձ օգնութեան բնազդը ամէնէն նուազ մշակողը , զարգայնողն և յարգողը :

Ինչպէս անհասները , նոյնպէս և ցեղերը , ազգերը , պետութիւնները իրար հալածելով , յօշոտելով չէ որ պիտի կարենան պահել և յաւերժացնել իրենց գոյութիւնը :

Քիւրաւոր դարերու ընթացքին բիրտ ոյժի վրայ կըրթնած ո՞ր անճատը, ո՞ր ցեղը, ո՞ր ազգը, ո՞ր պետութիւնը կարողացաւ իր գոյութիւնը անվթար պահել ու յաւերժացնել :

Ամբողջ կազմական կեանքը, մարդը՝ ինքն իսկ իր կազմութեամբը կը ներկայացնէ միլիոնաւոր մասնիկներու, բջիջ-կենդանիներու զուգորդութիւնը, շաղկապումները, սրոնց մէկ մասին կենսազրկութիւնը, յատկազրկումը յառաջ կը բերէ և միւսներուն յարակցաբար յատկազրկութիւնը, կենսազրկութիւնը :

Բնութեան այս յաւիտենական օրէնքը ո՞ր մարդկային ոյժն է որ պիտի կարողանայ ո՛րևէ ատեն բնաշրջել, երբ ինքը այդ բնութեան մէջ, բնութեան տիեզերական ու յաւիտենական օրէնքին ենթական, ստեղծուածը, մէկ ողորմելի ոյժն է միայն :

Նկատելի է, սակայն, երևոյթ մը :

Մահմետական ազգերու մէջ ալ զարթած է ու կը զարթնու Ալղային Ողին :

Արդէն լեռնական ո՛չ մէկ մահմետական ցեղ իր ազգայնութիւնը չէր ուրացած :

Ալպանացին, Վրացին, Քիւրտը, Արաբը, մահմետական թէ քրիստոնեայ, ազանդաւոր թէ կուսապաշտ, երբեք չէր զազրած հպարտութեամբ պահպանել իր ազգայնութիւնը, լեզուն :

Միայն Հայն ու Յոյնը, մանաւանդ Հայն է որ կրօնը փոխելով, մահմետականութիւնը ընդունելով, նոյն իսկ քրիստոնեայ յարանուանութիւններէ կաթովիկութեան դիմելով, ինքզինքը կը համարէ հեռացած, ազատուած իր սպառնանած ազգին հետ ունեցած կապակցութիւններէն :

Միայն թէ՛ Արաբին, Ալպանացին, Քիւրտին, Վրացին համար մահմետական ըմբռնումները, իրաւունքնե-

ըր կը գերակշռէին ազգային զիտակցական ինքնուրոյնութիւնը :

Այժմ կը պարզուին այդ թիւրիմացութիւնները : Եւ ատոր շատ կը նպաստեն լեզուի, կրթութեան հարցերը :

Օսմ. Խորհրդարանի 240 անդամներէ 120է աւելին կը պատկանին մասմետական կամ ոչ-մասմետական ազգութիւններու, որոնք ամէն պարագայի մէջ թուրք չեն :

Քսանեհնիզ կամ քսանեութ միլիոն Օսմ. ժողովուրդին մէջ բուրժ սարը կը հաշուեն միայն 7-8 միլիոն :

Կը թուի որ այս թուական հաշիւը խրաչեցնելով, սարսափեցնելով ժէօն-թիւրքերը, կը սախպէ զանոնք անխորհուրդ, յանդուգն կերպով փարիլ նորիմաստ Օսմանցիութեան, ձուլումի քաղաքականութեան :

Անճարինին յոյսը . . .

Մենք շատ կը սիրենք մեր Հայրենիքը, ընդհանուրի հայրենիք թուրքիան՝ Հայաստանի, Յունաստանի, Մակեդոնիայի, Արարիայի մասնիկներով միացած այս Երկիրը :

Շատ կը սիրենք Օսմանցիութիւնը՝ Հայ, Յոյն, Քիւրտ, Արաբ, Ալպանացի, Մակեդոնացի ևն. ազգերու թրքական զահակալութեան տակ այս միութիւնը :

Ոչ մէկ ազգ՝ աւելի քան Հայը, իր աշխարհադրական, ցեղազրական, պատմական պայմաններուն բերումով այնքան շահագրգռուած չէ սիրելու և պահպանելու Օսմ. Միութիւնը :

Թուրքը չի կրնար իր թուական և քաղաքակրթական պայմաններով ս'ր և է տարրալուծիչ դեր կատարել :

Օսմ. Միութեան բոլոր անդամներուն, առաւել ևս Հայուն՝ զոյութեան կենսական շահը կը պահանջէ սատարել այս Պետութեան, երկրին Վերածնութեանը և զարգացմանը :

Մեր և թրքական շահերը մանաւանդ հաւասարապէս

իր պահանջներն օգտուիլ այս պատմական անհրաժեշտութեանն, ընդունիլ և ըմբռնել Օսմանցիութեան իսկական բովանդակութիւնն ու կատարելիք դերը, փոխադարձ յարգանքով աշխատակցիլ Վերածնութեան մեծ գործին:

Այս մեծ ու վսեմ գործին անպատրաստ տարրը՝ ու այդ պատճառով միայն համեմատաբար նուազ օգտակար, գուցէ և որոշ չափով վնասակար տարրը Քրդութիւնն է, զոր, սակայն, կարելի է օգտակար դարձնել, գործակցիլ սալ, բարձրացնելով անոր մտաւորականութիւնը, մշակելով լեզուն, ստեղծելով դրականութիւն, կազմելով մինչև իսկ անոր պատմութիւնը:

Այս ծառայութեան համար ամէնէն աւելի կոչում ունի Հայը և յօժարութեամբ կ'ընծայարերէ այդ ծառայութիւնը:

Ազգերու օսմանցիական-քաղաքական միութեան մէջ, երբ ամէն մէկը կը վայելէ իր բաժին քաղաքացիական իրաւունքներն ու պարտականութիւնները, հնարաւորութիւն կ'ունենայ ինքնորոշ և ընդհանուր մշակութեան, քաղաքակրթութեան սատարող, ստեղծագործող, արդիւնարեւող, ընտրողի և ընտրուողի, անձնապաշտպանութեան իրաւունքներ գործ դնել, ընդհանուր հայրենիքի պաշտպանութեանը նուիրուիլ, տպագայ սերունդներու համար անհասկնալի կ'ըլլայ թէ ինչո՞ւ այս ազգերը փոխադարձ յարգանքով իրարու ձեռք չկարկառէին, ինչո՞ւ դերակշռութեան փխաէն բռնուէին, անջատողականութեան խրատիլակը ստեղծէին:

Արդարութեան, Հաւասարութեան, Ազատութեան, Եղբայրութեան մէջ — եթէ ատենք իրականութիւններ են — Լուծումը որո՞ւ գոյութիւնն է որ պիտի կարողանայ պահպանել ու ապահովել:

Կը հաւատամ որ եթէ ողջ ըլլար Միդհատը, միա-

ձուլման քաղաքականութեան ոճիրը չէր դորձեր, իր ստեղծած Օսմանցիութեան սխալ մեկնաբանութիւնը չէր թողատրեր :

Անոր սրտոստ աչքերը կը տեսնէին շրջապատող վը-
տանդը :

Անկասկած, ան ալ մեզ չափ կը սիրէր իր թուրք
ազգը և բազմացեղ ազգերու օսմանեան-քաղաքական
միութիւնը՝ որ միայն կարող է ստեղծել ու կանգնեցնել
այն մեծ, փառաւոր պետական շէնքը ուր վառուած կ'ըլ-
լար քաղաքակրթութեան, յառաջդիմութեան ջանքը :

Այս երկրին մէջ առաւել քան երբեք զգալի է ան-
հասկն դերը ազգերու ճակատագրին վրայ :

Եթէ երբեք վիճակուած է մեզ դժբախտութիւնը
ունենալ շովինական, համըսլամական երազներով վտան-
գուած տեսնել ապագան, այդ չպիտի յուսահատեցնէ մեզ :

Պատմութեան առանցքը, ազգերու, մարդկութեան
զարգացման բնթացքը չի շրջիր, արեւելրական օրէնքը չի
ջնջուիր :

Շեղումը, ընդհատումը անպայման ժամանակաւոր
կ'ըլլայ : Գանդաղումը ինչքան ալ տևէ, սակայն և այն-
պէս յառաջդիմութեան ասպարէզին մէջ քայլ մը առաջ
պիտի երթայ, և արդէն կ'երթայ :

Ըսած եմ՝ արդէն թէ ինչպէս ամբողջ կենդանական,
օրկանական աշխարհը, արեւելքը ամբողջ ենթակայ է
բնաշրջութեան, ձևափոխման, նոյնպէս և Ազգային Գա-
ղափարը՝ միջախորհի, զարգացման աստիճաններուն համը-
մատութեամբ, ենթարկուած է նոյն օրէնքին :

Ամէն մէկ քաղաքակրթական շրջան և աստիճան կը
բովանդակէ տնտեսական, բնկերային արատելատող կարգեր :

Ազգային Գաղափարն ալ՝ ամէն մէկ շրջանի և աս-
տիճանի զարգացման ըմբռնումով, արդիւնք է եղած տնտե-

ստիան, բնկերային տիրապետող կարգերու թելադրութեանց :

Այդ թելադրութիւնները ուրիշ բան չէին կարող ըլլալ, բայց եթէ պահանջը, շահը տիրապետող կարգի, նաստրակութեան և դասակարգի՝ ի վնաս տիրապետուածներու :

Եւ տիրապետուածները՝ ցորչափ անզիտակ ու անըզգայ են մնացած իրենց նարստահարուող, ճնշուող վիճակին, այդ վիճակին զգացումը, գիտակցութիւնը ունենալէ յետոյ ալ՝ ցորչափ անզիտակ ու անըզգայ են մնացած իրենց վիճակի իսկական պատճառներուն ու պայմաններուն, ենթարկուած են տիրապետողներու, ճնշողներու, նարստահարողներու ոսկեզօծած, քողարկած Ազգային Գաղափարի ըմբռնումին, և այդ նախապաշարեալ ըմբռնումով տողորուած ու յափշտակուած՝ դարե՛ր. երկար ու ձիգ դարեր իրենց կեանքն են զո՛ւած, իրենց վա՛րդ կեանքի արիւնն են նոսեցուցած, իրենց բաղդակից ժողովուրդներու, ճնշուածներու, նարստահարուածներու սրտերն են պատտուած, կեանքերն են յօշոտած, արեան գեաեր են նոսեցուցած, և վերջապէս դարերու ստեղծագործ աշխատութեանց արտադրութիւններն ու շէնքը նիւնայատակ քանդել, ամբողջ տարածութիւններ, գիւղեր ու աւաններ, քաղաքներ ու նահանգներ աւերակներու ու գերեզմաններու վերածեր են :

Ինչո՞ւ :

— Որովհետեւ ըստ ճնշողի, տիրապետողի ըմբռնումին՝ Ազգային Գաղափարի բովանդակութիւնը եղող շահը, պահանջը, երբ ո՛ր և է կերպով, ո և է կողմէ վտանգուած կը տեսնուի, վտանգին դէմ զխմազբաւելու համար վտանգուող շահի տէրերը կոչ կ'ընեն իրենց ճնշած, նարստահարած զանգուածներուն նախապաշարմանը :

Վտանգուող և վտանգող շահի տէրերը ցարդ եղած են միշտ ճնշող, տիրապետող, հարստահարող տարրերը, դասակարգերը :

Իսկ վտանգող կողմի կամքին և վտանգուող կողմի շահին պաշտպանութեան համար կոչ ընդունող նախապաշարեալները եղած են երկու կողմին ալ միշտ նոյն ճնշուած, տիրապետուած, հարստահարուած ժողովուրդները, դասակարգերը՝ որոնք իսկական Ազգութիւնը, Հաւաքական Անհատականութեանց հակաց զանգուածները կը կազմեն և որոնց շահերն ու պահանջները բողոքովին տարբեր ըմբռնում ու բովանդակութիւն կը կրեն քան իրենց նախապաշարեալ, անորոշ ու անբովանդակ կեղծ Ազգային Գաղափարը :

Հէնց որ այդ նախապաշարեալ Ձոները, Տիրապետուածները, Ճնշուածները, Հարստահարուածները կը նախզգան իրենց ճնշուած, շահագործուած, հարստահարուած ըլլալն ու վիճակին դառնութիւնը, և ապա կը դիտակցին այդ դասն վիճակի, դրութեան, տիրող կարգերու ու սրայմաններու իսկական պատճառներուն, բնականորաբար նախ կը սկսի խուլ արտունջը, ապա բողոքը և յետոյ ընդվզումը :

Եւ հէնց որ սկսաւ լսուիլ, արձագանգել արտունջն ու բողոքը, յառաջ գալ ընդվզումը, Տիրապետողները, Ճնշողները, Հարստահարողները միշտ կը զաննեն և ցարդ յաջողած են զանեկ՝ նոյն Հարստահարուածներու, ճնշուածներու, Շահագործուածներու շարքերէն նախապաշարուածներ, իրենց Հաւաքական-Անհատականութեանը, անոր մնծութեանն ու շահերուն անդիտակներ՝ որոնց նախապաշարեալ զգացումները գրգռելով կոչ կ'ընեն եզրայրասպան յօշոտումներու, արանջացող, բողոքող, ընդվզող ազգակիցներու բզկառումին, աւարին, թալանին ու կոտորածին :

Այս է եղած ցարդ տեղի ունեցող արտաքին և ներքին պատերազմներու քողարկեալ, ոսկեղօծեալ կամ կեղծ Ազգային, Հայրենիքի Գաղափարի ձեւափոխութեանց հետեւանքներու պատմութեան զլիսաւոր յատկանիշ ամփոփումը :

Մ՛հ, այդ պատմութիւնը, ազգերու կոչուած պատմութիւնները, ուր Ոճիրները՝ Առաքինութիւն, Ոճրագործները՝ Ազգային Հերոսներ, Կեաւորները, Ազնւոսանդրները, Պոնաբարդները, Ճինկիզխանները, Լէնկիզմուրները, Մոլդաքէները, Պիզմարքները Ազգային Փառք են ներկայացուած :

Նահապետական նախնական Համայնքներուն յաջորդած է Աւատականութիւնը, Աւատականութեան յաջորդեց Պիւրօրրատական-Պուրժուական Պետութիւնն ու Միլիտարիզմը, զինուորականութիւնը :

Ի՛նչ կը բովանդակեն այդ բոլոր պատմութիւնները, Սուրբ Գիրք, երբայական գիցարանութիւնն ու աւանդական առասպելարանութիւնն ալ միասին առած :

Ազգ ազգի վրայ, ցեղ ցեղի վրայ :

Ի՛նչո՞ւ :

Եւ այդ ամէնը որո՞ւ անունով :

— Աստուածներու, Եհովայի, Իսրայելացիին, Աստուծոյ ընտրեալ ժողովրդի, Աթենացիի, Սպարտացիի, Հռովմէական տիտանի, Եգիպտացիի, Փիւնիկեցիի, Գերմաններու, Արիականներու, Իրանիներու, Մարգարէներու, Նազովրեցիի, Պետրոսի յաջորդ թագակիր Քահանայապետներու, Օրթոտոքս Տիեզերական Եկեղեցիի անունով ու հովանաւորութեամբ :

Ի՛նչո՞ւ, որո՞ւ համար :

Թզթատեցէ՛ք մեր ամբողջ պատմութիւնը, եթէ եր-

բեք պատմութիւն կարելի է անուանել այդ յաճախ ուղորմելի անուններու, անորոշ ու շատ անգամ անատոյգ թուականներու շարքը: — Անդէրջ պատերազմ: Պատերազմ՝ ներքին, Պատերազմ՝ արտաքին: Աւատականներ որոնք գրաստներու նման իրենց առջևը կը ձգեն բազմազարչար, հարստահարուած, իրաւազուրկ ժողովուրդները, շատ անգամ միեւնոյն ազգի, ցեղի պատկանող հասուածները, որպէս զի կամ մէկի արտապետող, հարստահարող, ճնշող աւատական իշխանութիւնը պաշտպանեն, և կամ ուրիշ այգպիտի իշխանութիւն մը յափշտակեն ի նպատակ նոյնպիտի ուրիշ իշխանի մը, իշխանապետի մը, որպէս զի ժողովուրդները շարունակեն մընալ նոյն, երբեմն ա՛լ աւելի ճնշուած, խոշտանդուած, չահագործուած ստրուկները: Տարբերութիւնը կը կայանար շա՛տ շատ աէրը, արտապետողը փոխելուն մէջ:

Եւ այդ ամէնը դարձեալ ի փա՛ռս Ազգի և Հայրենիքի:

Ի՞նչ հեղնութիւն . . . :

Թղթատեցէ՛ք Գերմանական Պատմութեան կարեւոր էջերը Աւատական շրջանի: — Անլերջ պատերազմներ Դղեակներու, այսինքն աւատական իշխաններու միջև: Արշաւոզն ու Արշաուածը յաճախ նոյն Գերմանական ճեղն ու իշխանը, Գերմանական Հողը:

Այդ ամէնը դարձեալ ի փա՛ռս նոյն Ազգի ու Հայրենիքի:

Նոյնը բոլոր ազգերու պատմութեանց մէջ, նոյնը մինչև մեր օրերը դանուող կիսալայրենի, կիսաքաղաքակիրթ աւատական հասարակութեանց մէջ — օրինակ Քիւրտերու մէջ, ինչպէս երբեմն Թուրք Տէրէ-Պէյիներու մէջ: Արշաւոզ, յարձակող այս կամ այն Աշխրէթի, Պէյի, Շէյխի յարձակումը, արշաւանքը Հայի դէմ ուղղուած ըլ-

լայ թէ Գիւրդ Աշիրէթի մը զէմ, — արդիւնքը, նպատակը միշտ միեւնոյնն է :

Ի՞նչ են պիւրօրրատական կամ պուրժուական միլի-դարիսդ, կմրեդիսդ պետութիւններու պատերազմներն ու դաղթային սիրասպետութիւնները :

Մի՛շտ միեւնոյն պատճառն ու արդիւնքը :

Վա՛յ անոր որ կը զգայ այդ կեղծիքը, կը դիտակցի նախապաշարմունքին, կը արանջայ, կը բողոքէ, կ'ընդ-վզի :

Եւ անա՛ տղմուկը, ցատումը, վայրագութիւնը, վը-րէթինդրութիւնը : — Անհաւատարի՛մ է, դաւաճան է, հայրենիքի թշնամի՛ է, հայրենիքը վտանգուած է . . . : Ու կը սկսին հալածանքները, խստութիւնները, բանտե-րը կը լեցուին, աքսորանքները կը բիւրապատկուին, կախաղանները կը բարձրանան :

Եւ սակայն պատմութիւնը վերլուծողներու համար ակներև է՝ որ տղմուկի, ցատումի, վայրագութեան, վրէթինդրութեանց, հալածանքներու, խստութիւններու, բանտերու ու աքսորներու, տաժանակիր աշխատութիւն-ներու ու կախաղաններու, աւարներու ու կոտորածնե-րու հեղինակները՝ իրենք են, իսկական անհաւատարիմ-ները, դաւաճանները, Ազգի ու Հայրենիքի իսկական թշնամիները :

VIII

ՈՐՈՆՔ ԵՂԱԾ ԵՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ



Մեր պատմութեան մէջ բազմաթիւ են փոստերը՝ ուր Ազգի ներկայացուցիչ համարուող աւատականը, կամ եթէ կարելի է այսպէս ըսել, հարկատուները (վաւար) մերթ Արքայից Արքաներուն կամ Բիւզանդական Կայսրներուն կը յարէին, մերթ Արարական-եզիպտական Խալիֆներուն կամ Սուլթաններուն կամ Խաչակիր Իշխաններուն, Նախարարներուն, Թագաւորներուն որոնց ձրգտումն է եղած Հայրենիքի, Կրօնի պատրուակի տակ իրենց սեփական դիրքը, աւանձնաշնորհումները պահպանել, ի՛նչ զնոյլ ալ ըլլայ:

Յրանսական Յեղափոխութեան ժամանակ Թագաւորի Գահը — իմա՛ տիրապետութիւնը — պահպանելու համար Ազնուականութիւնը Թագաւորին հետ չտատանուեցան Օտար Պետութեանց, Միտպեաններու ու անոնց բանակներուն միջամտութիւնը հրաւիրել — Յրանսա արշաւել տալ, Ազգին ու Հայրենիքին դաւաճանել:

Հունդարական Ապստամբութեան ժամանակ Աւստրիան չվարանեցաւ իր խորխուլ գահը, միմիայն Հասպուպուրկեան Իշխանութիւնը ապահովելու համար Ռումանոյիներու պաշտպանութեանը դիմել և Հայրենիքը խաղախներու ոտնակոխ ընել տալ:

Յրանսական Ազգը, Յրանսական Հայրենիքը ի՛նչ չա՛հ կամ վրաս պիտի ունենար՝ եթէ Հոհէնձոլէրնեան իշխան մը բարձրանար Սպանիական Գահին վրայ:

Եւ սակայն, Լուի Նաբոլէոնի «գահի հաշիւները» կարողացան համարժէք դառնալ Ֆրանսական Ազգի հմայքին, Ֆրանսայի Պատուին :

Հետեւանքք : — Գերմանական Միութեան բանակներու առջեւ սարսափած Կայսրը՝ փոխանակ մինչեւ վերջին շունչը պաշտպանելու Հայրենիքը, դարձեալ իր «գահի հաշիւներով» և Ֆրանսական բանակին մէկ կարեւոր մասով անձնատուր ըլլալէ վերջ, իր հաւատարիմ Պաղէնն այ դաւաճան հրամանատարութիւնը գործ դրաւ Գահը՝ ո՛չ թէ Հայրենիքը, փրկելու մտադրութեամբ և ուխտով : Վրայ առաւ Ֆրանսան երկու նահանգ և հինգ միլիառ Ֆրանք, ստանց հաշուելու պատերազմի անուիլի ծախքերն ու Հայրենիքի բիւրաւոր զաւակներուն կորուստը :

Ինկաւ Կայսրութիւնը, հաստատուեցաւ Պուրժուական Հանրապետութիւնը :

Հանրապետական Կառավարութիւն ըսուած և միայն Ֆրանսայի մէկ մասէն ընարուած, միայն մէկ մասի ձայնը ունեցող Պուրժուական Կառավարութիւնը թշնամիին՝ Պիզմարքին ու գերմանական բանակին օժանդակութիւնը ստացաւ ամօթապարտ դաշն կապելով, որպէս զի Բարիզի Ժողովրդական Կառավարութիւնը ջնջէ, Հայրենիքի Զաւակները գնտակահարէ : Հայրենիքի Փրկիչը հռչակուած Թիէւներու, Մաք-Մահոններու, Ժիւլ Սիմօններու, Ժիւլ Ֆավրներու, Ժիւլ Ֆէրրիներու կառավարութիւնն ու անոր կրթնած Պոնաբարդեան պատգամաւորներու Պարլամենտը մերժելով ազիտարեր պատերազմի պատճառ Պոնաբարդեաններու կալուածները գրաւել, հաճութեամբ գրաւեց Ժողովրդի Հերոսներուն գոյքը և միլիոններ յատկացուց Օրլէանեան Իշխաններուն :

Միզհատեան ըսուած Սահմանադրականութեան օրեւ

բուն անգամ՝ Բճնապետութիւնը մերժեց Լոնտոնի Համաժողովին առաջադրութիւնները, չձեռնարկեց Երկրին լուրջ և ընդհանուր բարեկարգութեանը, չիրազրոյթեց արդարութիւնն ու ազգերու հաւասարութիւնը, տեղի աւելաւ սրտաբազմին, բայց չվարանկեցաւ Սան-Սթէֆանոյի ամօթապարտ Գաշնադրութիւնը կնքելու, Եւրոպական Թուրքիայի ստուար մասէն հրաժարելու: Պարբերաբար անդամահատուեցաւ Թուրքիան, Հայրենիքի բխրաւոր դաւաճները ինկան սրտաբազմի դաշտին վրայ, պետական դանձր սպառնեցաւ ու սնանկացաւ, բայց նախամեծար համարուեցաւ թշնամբին՝ Ռուսական Արքունիքին ու Կամարիլլայի խորհուրդներուն հետեւիլ և Սանմանագրութիւնը ջնջել:

Աւելի ինչ մեծ, հրէշային, դիւային դաւաճանութիւն, դաւադրութիւն Օսմանեան Հայրենիքի, Օսմանեան Պետութեան դէմ՝ քան այն ամէնը՝ ինչ որ կատարեց Պալատական Կամարիլլան, ժուրնալճիներու Վոհմակը վերջին երեսուն և մօնաւանդ տասն և հինգ տարւոյ միջոցին, սպառելով երկրին կենսականութիւնը, արածնութիւններու շաշլումով մշտապէս Վիլհէլմեան բարեկամութիւնը գնելով:

Այդ ամէնը ինչո՞ւ: — Որպէս զի, ինչ դնով ալ բլլայ, նոյն իսկ Բանակին անսպառուութեամբ, Նաւասորմի փճացումով, Պետութեան ստորացումով, Գանձարանի սնանկութեամբ, Պետական-Հասարակական բարոյականի վատասնումամբ, Օտարի, Իսկական Թշնամիներու արուած արածնութիւններով, Սեղանաւորական փրտապետութեամբ, Տուրուհը-Ումոււմիյէի հարկաախրական նուաճումով ու խնամակալութեամբ, Երկրի աւերածութեամբ՝ — պահուի պահպանուի սանձարձակ, կամայական Բճնապետութիւնը, ապահովուի Պալատական Կամարիլլայի փրտապետու-

թիւնը, դո՛ւսցում արուի ժուրնալճիւներու ընչաքաղցու-
թեանը, և սարուկը, իրսւազուրկը մնայ միշտ իրսւա-
զուրկ, արդարութիւնը սրբապղծուի, օրէնքը բռնաբար-
ուի, կեանքը գերեզմանային ուրուականներու փոխար-
կուի :

Այս բոլոր դաւաճանութիւնները, դաւադրութիւն-
ները, սճիրները՝ իր իսկ, Միլլէթը Հաքիմի, Թրքու-
թեան, Մահմետականութեան դէմ գործուած՝ Թուրք
Ազգի, Մահմետական ժողովրդի մէջ բմբոսացում, ընդ-
վրդում չյարուցին : Կը հանդուրժէր, կը համակերպէր
Թուրք Ազգը :

Բայց հէնց որ այս բոլորին դէմ բողոքեց, ընդվզու-
մի արատայատու թիւններ ըրաւ Հայը, Մակեդոնացին,
նոյն ոճրազորները, նոյն դաւադիրներն ու դաւաճան-
ները կարողացան կեղծել, սակ ճշմարտութիւնը, կոչ
ընել ժողովրդի, ազգի նախապաշարումներուն, գրգռել
վայրենի բնազդները, ու քաջալերութեամբ թշնամինե-
րու, Քայգէրներու ու Յարերու՝ սպանդանոցի վերածել
ամբողջ նահանգներ, թալանի ու աւարի մատնել հարիւր
հազարներ, իրրու Հայրենիքի անհաւատարիմներ, անջա-
տողականներ :

Մանչուրիական ու Քորէական անտեսական մենա-
չընորճներու համար Ռուսական Կամարիլլան սարքեց ձա-
բոնական Պատերազմը : Ո՛չ միայն Մայրադաւառները՝
այլև Ռուսաստանը, սուրբ Ռուսաստանը ինքը կը աքար
կնուսի, ուսիլիկներէ ախրակեկեկներու, այրինքն խստա-
գոյն հակողութիւններու, մեղկացած ու անբանացած պիւ-
րոկրատիայի ոստիկանական բէժիմի տակ :

Ամբողջ Ռուսաստանը, նոյնիսկ Ռուս Ազնուականու-
թեան լաւագոյն մասը շարժեցաւ ու Մահմանադրական
կարգեր պահանջեց :

ԹՀնամբի բանակին առջեւ վատարար, «օրինակելի կարգապահութեամբ» նահանջող, շարունակաբար, յաջորդաբար փախուստ տուող, հարիւր երեսուն միլիոն ժողովրդի անպարտելի համարուած բանակին վարկը նսեմացնող զօրավարներու, իշխանազուհներու, մեծաւ մասամբ օտար ծագումով ազնուականութեան լէզէներ, ու.ս «պաշիրոզուք»ութեան մարմնացումը եղող խաղախը խղճահարութիւն չզգաց ամօթապարտ դաշն կապելու, ապաշաւի հառա՛չ մը չարձակեց Սախալինը դատարկելով ու ճարմնի յանձնելով, բայց առիւծ կտրեցաւ, կատղեցաւ ժողովրդի իրաւապահանջութեան, հաշուեյարդարութեան շարժումներուն առջեւ :

Քանի դեռ բանակը՝ անձնատուր եղած ու փշրուած բանակը, Հեռաւոր Արեւելքէն չէր վերադարձած, վանդակի մէջ շառաչող Գաղանի վիճակին մատնուած միահեծան, աստուածընկալ Իշխանութեան Օծեալը յիշեց երբեմնի իր բողոքակից թագակիրներուն մատուցած ծառայութիւնները և իր իսկ Ազգը խողխողելու, Ռուսական Հայրենիքը արչաւել տալու, ըմբոստացող արիւնաքամ ժողովուրդը պատժել տալու համար չվարանեցաւ, ամօթ չզգաց իր վաղեմի թՀնամբին՝ վաղեմի ոճրակցին, Բրուսիոյ Թագաւոր՝ Գերմանական Քայզերին, անոր Կամարիլային ու Բանակին դիմել :

Հայրենիքի այդ Գաւաճանները պատերազմի օրերու հաւանականութեանց համար նախապատրաստութիւնը ունեցան Կովկասեան ցեղերուն մէջ ասելութեան որովորեցանելու, վրացի ու մանուանդ մահմետական աւատական թափթփութներուն անըջական յոյսեր թելադրելով Հայկական բնաջնջումի համար Թուրք-Հայկական ընդհարումները ստեղծելու :

Անվերջ են Ազգ ու Հայրենիք Գաղափարները շա-

չազործող Տիրապետողներու դաւաճանութեանց շարքերն ու փաստերը :

Տիրապետողները՝ ի՛նչ ազգի, ո՛ր դասակարգի ալ պատկանին, միայն մէկ ազգ, միայն մէկ հայրենիք ունին .— Շահ՛ր, Շահազործումը, Կեղեքումը :

Ֆրանսական պարտութեան մէջ Գերմանիան այնքան չչահազործեց՝ որքան Ֆրանսացի դրամատէրը : Ֆրանսացի ժողովուրդը հինգ միլիառ պատերազմական տուգանքը ութ անգամ աւելի, քառասուն միլիառ ստորագրուեցաւ և տուաւ . բայց Ֆրանսացի դրամատէրը՝ Ֆրանսական Պանքան միմիայն միջնորդի դերովը փոխատու ներկայացաւ և 100ին 20 աշխատանքով և տարեկան 6 տոկոսով 125 միլիոն գրպանեց :

Տիրապետողներու, շահազործողներու համար չկայ ո՛չ մէկ սրբութիւն : Ֆրանսական ժողովուրդի խնայողութիւնները շահազործող Ֆրանսացի դրամատէրը՝ թողած Ֆրանսական արտերը, դնաց աւստրիական, իտալական ու ամերիկեան դաշտերու մշակման ձեռնարկութեանց մէջ իր տոկոսը բարձրացնելու, և երբ այդ երկիրներու զարգացած, առատացած բերքերու, արտահանութիւնը եկաւ Ֆրանսական հրապարակին վրայ ազատ մրցիլ, գիներու նուազումով Ֆրանսական խոշոր չողատէր-դրամատէրներու եկամուտի նուազման պատճառ դառնալ, ահա՛ նոյն դրամատէրը յանուն Հայրենիքի ու Ազգի՝ փակեց Ֆրանսական դռները օտար ներածութեանց դէմ, որպէս զի մրցակից չունենայ և Ֆրանսացի ժողովուրդը, իսկական ազգը գնէ, ուսէ թանկ գնելով, շարունակէ մնալ միշտ շահազործուողը :

Անվե՛րջ, անվե՛րջ են նմանօրինակ փաստերը բոլոր երկիրներու համար :

Բռնապետութեան օրերուն պակտո չէին դահիճնե-

րու հաճոյակատար հայ-հարստահարիչներ և շահագործող-ներ բոլոր տարրերէն ու շարքերէն՝ որոնց համար հայրենիքի ազատագրութեան մարտիկները ազգազառ ոճրագործներ էին . իսկ Սահմանադրութեան վերջայտարարութենէն անմիջապէս յետոյ՝ ինչպէս բոլոր բռնապետներու , տիրապետողներու մարգամեքեանները , այդ հայկական մակարոյցներն ալ երէկուան իրենց պաշտամունքին դատապարտիչները երեւալու չափ ազատագրութեան խնկարկուի կեղծ դիմակները հազան, որպէս զի իրենց դիրքերը պահեն, շահագործումը շարունակեն : Եւ յաջողեցան թէ՛ ազգային ժողովներու , թէ՛ ազգային զանազան մարմիններու , թէ՛ Մամուլի մէջ : Ու կը շարունակեն մնալ ազատները շահագործումը բոլոր ազգային հիմնարկութիւններու , նոյն բարեկոնական , քառասային դրութեամբ ու սխաեմով՝ ինչպէս անցեալին :

Նոյն երեւոյթը , նոյն իրականութիւնը կը ներկայացընէր Յուլիս 10էն յետոյ պետական մեքենան :

Բռնապետական շրջանին չվերջացած Պալքանեսան հաշուեյարդարութիւնները կը կատարուէին սահմանադրական կառավարութեան օրով՝ յանուն հայրենասիրութեան . ամօթապարս կարգադրութիւնները կը հռչակուէին իրրեւ պետական-հայրենասիրական իմաստութեան յաջողութիւններ :

Պարլամենտին ծոցը և Գործադիր Իշխանութեան ղեկավար , ստորադաս շրջաններուն մէջ՝ նոյն տարրերը բռնապետական գործօններու , նոյն խաւերը շահագործողներու , կեղեքոյներու :

Քեամիլ վաչայի ի նպատտ և ընդդէմ Ահրարական ու Իթիհատ-Թէրաքքրական սպաքարները , փոխադարձ , վարկարկ յոխարանքները , սպասնալիքներն ու զրբպարտութիւնները , Քեամիլ վաչայի անկումն ու Հիւսէյին

Հիմնի փառայի ծափահարութեամբ իշխանութեան զլուխ անցնիլը, Մամուլի յետադէմ օրինագծին հանդէպ կօմիտէական օրկաններու լուծիւնը, «արտաքոյ Կօմիտէի չիք փրկութիւն» նշանաբանին հաւատարիմ մնալով՝ ուրիշ Բաղաքական Կուսակցութեանց՝ նոյն իսկ թրքականի տարամերժումն ու իրրեւ սղգաղաւ անոնց դէմ հալածանքն ու լուտանքը, զրոյարտութիւններն ու գայթակղութիւնները, բոլորը մէկ նպատակ ունին—Սահմանադրականութեան, Ազգասիրութեան, Հայրենասիրութեան մնալը—նորձով մնալ տէրը հրապարակին, ըլլալ անպատասխանատու, տնքնադատելի ղեկավարը պետական մեքենայի: Գուցէ ցածեցաւ կերպով դէմքերը փոխուած էին, բայց միշտ նոյն տարրը, նոյն կամարիլան՝ օրոնք խրտրութիւն չէին դներ միջոցներու մէջ, չէին վարանիր վազը նոյն թշնամիներուն՝ Յարի ու Կայդէրի մանկաւիկներուն հետ միացած նոր զիջումներ բնել, նոր մենաշնորհներ տալ. հայրենիքին նոր աղէտներ պատրաստել ու պատճառել միմիայն անոր համար՝ որ շարունակեն մնալ տիրապետողը, ճնշողը, սուսնձնաշնորհալը:

Եւ գտնուեցան բազմաթիւ, բիւրաւորնախապաշարեալ անգիտակիցներ՝ օրոնք շարունակեցին հաւատալ անոնց յերիւրանքներուն, շարունակեցին ենթարկուիլ անոնց կեղծ հայրենասիրական կոչերուն, գրգռուիլ ստայօղ անջատողական մեղադրանքներով, նոր անդունդներ փորել հայրենիքի գահալիժման համար, մինչեւ որ Մարտի 31ի պետական նոր հարուածը, զինուորական նոր ըմբոստացումն ու սպառնալիքը տեղի ունեցաւ, Կրօնի ու Հայրենիքի գերագոյն շահերու, Շէրիաթի պաշտպանութեան պատրուակին տակ պաշարուեցաւ Պարլամենտը, գնտակահարուեցան նախարար ու պատգամաւոր, խողխողուեցան զօրանոցներու մէջ հարիւրաւոր երխտասարգ սպա-

ներ, բռնկեցաւ Կիլիկեան Գժոխքը, բնաջնջուեցաւ դարերու աշխատանքի ու ստեղծագործութեան արդիւնքը, աւերակի վերածուեցաւ արգաւանդ ու բարեզարդ երկիր մը, քանդուեցան զիւղեր ու աւաններ, մոխրակոյտի վերածուեցան քաղաքներ ու տաճարակ հազարաւոր մարդկային կեանքեր :

Երբորզի Գոհիճը կը մնար միանեծան տէրը կացութեան . սասարէզէն կը քաշուէր այն կառավարութիւնը որ այդ ամէնը իր առջեւ նախապատրաստուելով հանդերձ՝ չէր տեսած և կամ տեսնելով հանդերձ արդիլելու կանխահոգութիւնը, պահանջը չէր զգացած :

Ու խորհրդարանական Շէրխաթճիները ծախահարեցին Գերագոյն Հրամանատարին բարեհաճութեանը արժանացող, Պարլամենտը սուխններու, դատակներու սպառնալիքին տակ պահող բմբոստները :

Վտանգուած Սահմանադրութիւնը անվտանգ յայտարարեցին ու առով քաջալերեցին երկրին մէկ ծայրէն միւսը գլուխ բարձրացնող յեղաշրջական շահագործող, ճնշող ու հարստահարող համադասակից բոլոր տարրերը :

Եւ այդ ամէնը յանուն Հայրենիքի դերագոյն շահերու, յանուն Ազգի ու Ազգային մարմնացումի ներկայացուցիչներու :

Շարժեցան Բ. և Գ. բռնակները հակասահմանադրական զինակիցներու դէմ, Սահմանադրութիւնը պաշտպանելու համար :

Համիտ և իրենները պատրաստ էին, ինչ զնով ալ ըլլայ, օտարի միջամտութիւնը հրաւիրել գտնը պահպանելու համար, դարձեալ յանուն Հայրենիքի, եթէ նոյն իսկ Ազգ և Հայրենիք օտարի գերին դարձած ըլլային :

Ասոնք են եղած դարերու ընթացքին Ազգ, Հայրենիք գաղափարներու ներկայացուցիչները :

Անոնց համար Ազգի ու Հայրենիքի ըմբռնումը այն չէ եղած, ինչ որ մենք կ'ըմբռնենք և կը պաշտենք :

Անոնց համար Ազգը իրենց տիրապետութիւնը, բիրտ ուժը, շահագործումի, կեզեքումի առանձնաշնորհումը, իրաւագուրկ ստրուկներն են եղած . իսկ Հայրինիքը՝ այն սահմանները, ուր կեզեքումի, շահագործումի առանձնաշնորհեալ բիրտ ու տիրապետող ուժը ի գործ կը դրուէր :

Ո՛չ . տառնք չեն և չեն կրնար ըլլալ մեր պաշտամունքի առարկան՝ Ազգի ու Հայրենիքի գաղափարին, անոր մարմնացումին ներկայացուցիչները :

IX

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԻ ԶՏՈՒՄԸ

Նախապաշարումներ կան, կազմուած՝ դարերու ընթացքին, որոնցմէ ազատագրուելը երկար ժամանակի, աշխատանքի և պայքարի կարօտ է :

Եւ ծայրայեղութիւններ կան՝ որոնց ազդեցութենէն ազատուելու տենչն ու պայմանները կը մղեն մարդը ուրիշ ծայրայեղութեան մը, գուցէ նոյնքան խտտելի՝ որքան առաջինը :

Այդ նախապաշարումներուն ու ծայրայեղութեանց շարքէն է նաև Ազգի, Հայրենիքի գաղափարը :

Ազգային, Հայրենիքի գաղափարին աւատական ու դրամատիրական-բիւրոկրատական շրջաններուն կրած ընդհանուր գիծը, անոր ըմբռնումի ու շահագործման ընտրու-

չումը պատմական վերլուծումի ամփոփումէն դուրս բերելէ յետոյ, մեզ կը մնայ յիշել անոր ժամանակակից դաման, զարգացման ընթացքը :

Անցեալ դարու դէպի կէսը, երբ ընկերային կեանքի ուսումնասիրութիւնը, դասակարգային յարաբերութեանց ազդակները գիտական աւելի կատարելագործուած վերլուծման ենթարկուելով, անժխտելիօրէն կ'ապացուցուէր նիւթականի դերը, կը բնորոշուէր դասակարգերու էութիւնը, բոլոր թշուառութիւններու, տառապանքներու պատճառ շահագործումը, — այդ գիտնական ուսումնասիրողներու աչքի առջև անուելիօրէն կը ցցուէր նաեւ աշխատանքի, արդիւնաբերողի շահագործման համար և Ազգային, Հայրենիքի գազափարին շահագործումը՝ որուն պատրանքներովը ու նախապաշարումներովը կը մղուէին պատերազմները, ազգայնական ընդհարումներն ու ատելութիւնները. և այդ ամէնը կը կատարուէին այն շահագործուածներու, աշխատաւորներու, արդիւնաբերողներու արիւնովն ու պաշտպանութեամբը, որոնց շահն ու գոյութիւնը, սակայն, կը պահանջէր մէկմէկու զօրավիզը, նեցուկը ըլլալ :

Եւ անա՛, փոխանակ այդ նախապաշարումը ցրելու, գազափարը զտելու, իր իսկական բովանդակութիւնը ցայտեցնելու, զիմեցին հակառակ ծայրայեղութեան : Քարլ Մարքս և իր համախոհները ծառայան նոյնինքն գազափարին դէմ, և հրապարակ եկան յայտարարելութէ սեփականազուրկ աշխատաւորութիւնը (Prolétariat) Ազգ. Հայրենիք չունի :

Ես անոնցմէ չեմ՝ որոնք կ'ընդունին և կ'ըմբռնեն Մարքսի այդ մտքերը տառական անձուկ իմաստով : Անհաշտ ըլլալով հանդերձ մարքսեան չոր նիւթապատուութեան, բաղմաթիւ են անոնք՝ որ չեն համոզուիր

թէ այդ մեծ ուսումնասիրողի հակաճառութիւնը կարող էր հասնիլ այդպիսի անհեթեթութեան :

Մարքս-էնկէլսեան նշանաւոր Յայտարարութեամբ կոչուողուելով սեփականազուրկ բանուորին . — «Բողոք երկիրներու աշխատւորներ, միացե՛ք» — կոչ կ'ըլլար աշխատաւորներուն թօթափել նախապաշարումները , բմբունել որ ազգային ատելութեանց մէջ չի կայանար աշխատաւորութեան շահը , որ Հայրենիքի Փառափարը շահագործողները՝ ազգակից թէ օտար , միեւնոյն շահագործողներն են :

Էնթէրնասիօնալի , Միջազգային Համերաշխութեան կոչն էր այդ :

Իմ նիւթէն դուրս է աշխատաւորական «Էնթէրնասիօնալ»ի կազմակերպութեան , անոր պառակտումներուն , Մարքսի և Պաքունինի , երկու հոյակապ մրցակիցներու պայքարին պատմութիւնը բնել :

Պաքունինի հայեացքները մնացին արկածներու , աղէտներու ենթարկուած սպանիական , իտալական , ֆրանսական երկիրներու մէջ :

Ֆրանքեղերմանական պատերազմին հետեւանքներով , դերմանական բանակին շրացուցիչ յաղթութիւնները , թըշնամի բանակի աջակցութեամբ Բարիզեան Կոմմունիզմի պարտութիւնը քիչ չնպաստեցին անշուշտ մարքսեան նիւթապաշտ դպրոցի տիրապետող համբաւին և յաջողութիւններուն , որը զայրոյթով յիշատակեցին ֆրանսական ո՛չ-մարքսիստ ընկերավարականները , երբ արդէն ժամանակը հասած համարեցին ըսելու՝ թէ «ինչպէս դերմանական միլիդարիզմի ճնշումներուն , հմայքին՝ նոյնպէս և անոր անունով տիրապետող երևոյթ ստացած դպրոցին վերջ պէտք է տալ» , որուն միակ զխտական անունն էր արուած , անուանելով հակառակորդ վարդապետութիւնները ցնորարանութիւններ :

Երկար ժամանակ տիրապետողի երեւոյթն ունէր մարքսեան բանաձեւներու տառական անձուկ ըմբռնումը :

Գերման ընկերութարականները յեղյեղելով այդ միտքը, այնու ամենայնիւ չէին հրաժարիր իրենց գերմանականութենէն, և երկար տարիներ անտարբեր մնացին, չբողոքեցին, ձայն չբարձրացուցին սարկացած հպատակ ժողովուրդներու ձուլման համար գործ դրուող ճնշումներուն, հալածանքներուն դէմ :

Ռուս սամկաւար-ընկերութարականները (Սոցիալ-Դեմոկրատիան) աւելի մակերեւութային ու սուր կերպով կը կրկնէին ու կը քարոզէին սխալ մեկնուած միջազգայնութիւնը՝ հերքելով ազգայնութիւնը, հոմանշելով ազգայնութիւնը հայրենամոլութեան, դրամատէր ազգայնամոլութեան հետ, առանց հրաժարելու անշուշտ սուսական ազգայնութենէն ու փառքէն : (*)

Հրեայ ընկերութարականները ամէնէն աւելի արձագանգ կը դառնային այդ մտքին, բայց «Պունտ»ի կազմակերպութիւնն անգամ՝ մնալով հանդերձ ուղղափառ Մարքսիստ և Սոցիալ-Դեմոկրատ, չուշացաւ պաշտպանելու ազգային ինքնուրոյնութեան դաղափարը :

Ռուսաստանի մէջ ամէնէն աւելի հալածանքի ենթարկուողը Հ. Յ. Դաշնակցութիւնն էր : Կը հալածուէր բռնապետութենէն՝ որովհետեւ ազգային բնաջնջման դէմ կը կուէր, կը հալածուէր ռուս Սոցիալ-Դեմոկրատ բանակէն, որովհետեւ Ազգային Ինքնորոշման գաղափարը կը պաշտպանէր : Ով որ Սոցիալ-Դեմոկրատական վարդա-

(*) Այս նիւթին վրայ ես երկուր գրած եմ Նոր Նախիջեւանի մէջ երբեմն հրատարակուող «Նոր Կեանք» շաբաթաթերթին մէջ :

պետական մակերևութային ըմբռնումի համաձայն չէր մտա-
ծեր, շովինիստ էր . . . : Եւ այդ ամէնը ի փառս ուստականու-
թեան մէջ տարրալուծման՝ որպիսին էր գերմանականու-
թեան մէջ :

Համարեա՛ զուզընթացաբար Հ. Յ. Գաշնակցութեան
աշխարհայեացքով, ուղղութեամբ կը գործէր Աւստրիոյ
մէջ ոչ-գերման տարրերու Սոցիալ-Գեմոկրատական
կազմակերպութիւնը, որուն վերջ ի վերջոյ համակերպե-
ցաւ զուտ գերմանական Սոցիալ-Գեմոկրատ տարրը :

Ռուս Ընկերվ.-Յեղափոխական Կազմակերպութիւնը,
որուն ընկերվարական տեսութիւնները ուղղափառ մարքա-
եան չէին և կը հետեւէր աւելի իրապաշտ ուղղու-
թեան, հրապարակ էր եկած պաշտպանելու նոյն աշխար-
հայեացքները, որոնք արդէն կը կազմէին Հ. Յ. Գաշ-
նակցութեան ծրագրային սկզբունքները: Ռուս Ընկերվ.-Յե-
ղափոխականները՝ պաշտպանելով այդ աշխարհայեացք-
ները, կը գտնէին որ ուրիշ ճանապարհ չկայ ուստական
տիրապետութեան տակ գտնուող աղղութիւններու, բող-
մացել տարրերու հարցի լուծման համար :

Այդ կազմակերպութիւնն ալ նոյնքան կը դատա-
փետուէր Ռուս Սոցիալ-Գեմոկրատներէն որքան Ազգայ-
նական-Ընկերվարական ուրիշ կուսակցութիւնները, մաս-
նաւորապէս Հ. Յ. Գաշնակցութիւնը, որովհետեւ ամէ-
նափոքր, թոյլ ու ցրուած ժողովրդի կազմակերպիչն էր :

Երևուոյթը, բովանդակութիւնը աւաւել կամ նուազ
չափով, ըստ միջավայրի և զարգացման, միշտ միևնոյնն
է, սկզբնապատճառը նոյնն է, — յամառումը՝ նախապա-
շարումի, պայքարը՝ նախապաշարումի թօթափման, կը-
ռիւք՝ ճնշողներու և ճնշուողներու, հարստահարողներու
և հարստահարուողներու միջեւ :

Եւ Ընկերվարութիւնն անգամ, էնթէրնտափօնալն իսկ
բաժնուած էր երկու խոշոր բանակի, — Տիրապետող

Տարրերու և Տիրապետուած Տարրերու, Աւատականութենէն Պարժուականութիւնը, պարժուականութենէն ընկերվարական տեսութիւններու մէջ յամառող, փոխանցուող գիծն էր, ընկերական-անտեսական երկու տարրեր ենթականերու հոգեբանական հետեւութիւնն էր որ հետզհետէ զաման, շրջափոխութեան կ'ենթարկուէր :

Նախկին և Վերակազմնալ «Էնթէրնասիօնալ»ը երկար տարիներ չէին կարող ընդունիլ որ ինքնուրոյն քաղաքական կեանքէ ու գոյութենէ զուրկ ազգերը կրցած են իբրև ազգ ապրիլ, միջազգային շարքերու մէջ սեղ գրաւելու իրաւունքը ունենալ :

Հասկնալի էր անհատի քաղաքացիական իրաւունքը, բայց անըմբռնելի, կամ դէթ անխոստովանելի կը մնար հաւաքական անհատականութեան նոյն քաղաքացիական իրաւունքը :

Ինքնուրոյն Քաղաքական կեանք, Ազգ ըսելով հասկըցուեր էր այն կազմը՝ որ այս կամ այն ազգի անունով գոյութիւն ունէր և որու մէջ պէտք էին լուծուիլ ենթակայ եղող ուրիշ հաւաքական անհատականութիւնները, հազիւ բացառութիւն կը կազմէին Յինդանտացիները՝ որոնք կը վայելէին իրենց Քաղաքական Ինքնավարութիւնը և Լեհերը՝ որոնք ուժեղ դիրք գրաւած էին Աւրոսպիոյ մէջ :

Փոքրիկ, թոյլ, տիրապետող քաղաքական կազմէ զուրկ ազգերու համեմատական թոյլ և ուժեղ ըլլալն անգամ խտրական վերաբերում կ'առաջացնէր դէպ ի անոնցմէ մէկն ու միւսը, այսինքն դէպ ի ամենաթոյլը, անպաշտպանն ու համեմատական ուժեղը կամ պաշտպաննալը :

Այս վերաբերումը, խտրութիւնը ակներև էր ո՛չ միայն դէպ ի ազգութիւնները՝ այլ և դէպ ի անոնց պատկանող կուսակցութիւնները :

Ֆրանսան, զաղափարական թուիչքներու այդ հայ-
րենիքը համարեա՛ թէ բացառութիւն կը կազմէր: Ինչ-
պէս այնտեղ էր որ Հայկական Տառապանքները ուժեղ
արձագանգ կը զանէին, նոյնպէս և ամէնէն աւելի այն-
տեղ էր որ Ազգութիւններու, Թոյլերու գոյութեան գա-
ղափարը՝ Գաղթային Քաղաքականութեան հարցին հետ
միասին իր դտումն ու պաշտպանութիւնը կը ստանար:

Համեմատաբար բազդաւոր ազգերէ Բոլոնիան — մեզ
նման բաժնուած ու ինկած երեք մեծ պետութիւններու՝
Գերմանիոյ, Աւստրիոյ և Ռուսիոյ մէջ — իր Լ՛նկերվա-
րական Կուսակցութեամբ վաղուց է որ՝ յանուն երեք
հատուածներու, իրրեւ Ազգային հաւաքական անհատա-
կանութեան ներկայացուցիչը, Լ՛նկերվարական Միջազ-
գային համաժողովներու մասնակցելու, անդամակցելու
իրաւունք ստացած էր:

Ռուս Սոցիալ Դեմոկրատներու երկար ընդդիմութե-
նէն յետոյ, Միջազգային Բիւրօն վերջապէս որոշեց ըն-
դունիլ — և ըստ այնմ իր զեկուցումը ներկայացնել 1907ին
գումարելի Շեթութեարարի Միջազգային Գոնկրէին, — Հ. Յ.
Իսչնակցութեան մասնակցութիւնն ու անդամակցութիւ-
նը Լ՛նկերվարական Էնթէրնասիօնայի, իր Կովկասեան
Հատուածին անունով, թողելով յաջորդին ընդունիլ և
նոյն իրաւունքը Տաճկաստանի Հատուածի անունով, որ
տեղի ունեցաւ 1908ի վերջերը:

Այդ նոյն Շեթութեարարի համաժողովին մէջ էր որ
Լ՛նկերվարական Բէֆորմիստներու էն նշանաւոր վեդե-
բաններուն, Պէրնշդայններու և Վանաէրվէլաններու մաս-
նակցութեամբ ու ճառերով կը յայտարարուէր թէ Ազ-
գութիւնները Մարդկութեան ներքոյնիստիկութիւններն են:

Երբե՛ք ընկերաբանութիւնը, գիտութիւնը աւելի
յստակ ու զտուած սահմանաւորում չէր կրցած տալ Ազ-
գային Գաղափարի ըմբռնումին:

Լ'նկերվարական ընկերաբանութեան փիլիսոփայութեան կը պատկանի, ինչպէս ուրիշ համամարդկային արդարութեանց ու խտէալներու, նոյնպէս և այս դաղափարի դտման, այս հարցի լուծման ու որակման առաջնութիւնը :

Եւ ասոր կը հետեւի աւելի յստակ, աւելի խիղախ մերկացումը պետութեանց դաղթային քաղաքականութեան : Ու միջազգային Կոնգրէին առջեւ, մանաւանդ Ֆրանսայի մէջ, բուռն պայքար կը մղուի պետութեան դաղթային ձեռնարկներու՝ բնիկներու իրաւազրկութեամբ Ֆրանսացի տիրապետողի անարդարութիւններուն, կեղեքումներուն դէմ, Մարոքի նուաճումի արկածախնդրութեան դէմ :

Աւստրիական պետութեան բազմացեղ զանգուածը յաւէտ դատապարտուած էր պուրժուա աղգամոլութեան, տիրապետողի քաղաքականութեամբ մշտական հակամարտ բաղխումներու, գժտութեանց, անջատողական բզխումներու միջավայրը մնալու . բայց շնորհիւ Լ'նկերվարական Կուսակցութեան ստեղծած Ազգայնական Դաշնակցական Կազմակերպութեանը և Խորհրդարանի մէջ ձեռք բերուած նուաճումներուն, սկսաւ ազգերու հաւասարութեամբ, ինքնորոշ իրաւատիրութեամբ՝ Միութեան և Համերաշխութեան կեդրոնը դառնալ : Այդ այն պատմական վերլուծական Գաղափարի նուիրագործումն է՝ թէ, եթէ բոլոր ազգերը Մարդկութեան ներբովանդակութիւնն են, աւստրիական ազգերն ալ Աւստրիոյ ներբովանդակութիւնն են, այսինքն մէկմէկու լրացուցիչ ու յօդիչ մասնիկները :

Արդէն Ֆրանսացի ընկերվարական խտէալագներու համար ալ Ֆրանսական տիրապետութեան տակ գոյութիւն ունեցող դաղութները ո՛չ թէ կեղեքումի, հարստահարութեանց կեդրոններ պիտի ըլլային, այլ պիտի կազմէին

զարգացման, համամարդկային մեծ պարտականութեան, իսկական քաղաքակրթութեան խնամակալութիւնը :

«Ռըվիւ Սոսիալիստ»ի էջերուն մէջ հրատարակուած են զործնական ծրագիրներ ու առաջագրութիւններ գաղութներու հարցի լուծման համար : Այդ ծրագիրներէն մէկուն մէջ, Ֆրանսացի ընկերվարական ազգայնականի մաքուր ու անբիծ հոգին, Արդարութեան ոգին, զրուած ազգայնական խտւալական ձգտումը կը ստեղծէ հեռանկար մը, և Ֆրանսական ուղեղը կը պատկերացնէ թունուզն ու Ալժէրիան իսլամի ու քաղաքակրթութեան զարգացման կեդրոն, օժտուած՝ գիտութեանց բազմատեսակ համալսարաններով և տեղական լեզուներով, նախնական ու միջնակարգ կրթութիւնը բնիկ ցեղերու մէջ ընդհանրացած իրենց ազգային լեզուներով, վերակենդանացած արաբական նախկին քաղաքակրթութիւնը, ուր կը վազեն աշխարհի բոլոր ծայրերէն իսլամ ուսանողներ, ուր իսլամական կրօնը փոխանակ քաղաքակրթութեան արդեւք համարուելու՝ կը դառնայ սեփականութիւն խզճի ազատութեան, ուր բնիկը իր զարգացումով հասած, հաւասարած Եւրոպացիի, Ֆրանսացիի քաղաքակրթութեանը, վայելելով հաւասար իրաւունքներ ու պարտաւորութիւններ, կը մատակարարէ աշխատանքի, ստեղծագործութեան բարիքները ո՛չ միայն իր հայրենիքին՝ այլ և հեռու, հեռու աշխարհներու Ընդհանուր Մարդկութեան : Եւ այդ ամէնուն փոխարէն Ֆրանսացին կը վայելէ ո՛չ թէ իրրեւ տիրապետողի, ճնշողի, հարստահարողի, իրաւագրկող օտարի ներշնչած, պատճառած, սնուցած ատելութիւնը՝ այլ սէրը, յարգանքը, պատկառանքը, երոխտագիտութիւնը, խանդաղատանքը բնիկին :

Այդտեղ եւս ազդերը, անշուշտ ապագայի հեռա-

հրեաբարձի, կը ներկայանան մարդկութեան ներքովանդակութիւնը :

Այդպէս կ'ըլլայ անշուշտ օր մը Եգիպտոսը, Հնդկաստանը՝ անգլիական խնամակալութեամբ :

Ի՞նչ փոյթ թէ որոշ աշխարհագրական սահմաններու կառավարութեան, Պետութեան անունը ս'րու կը պատկանի : Եթէ կը դադրի մէկը միւսին շահագործումը, եթէ կը դադրի փրապետողի ճնշումն ու կեղեքումը, եթէ կը դադրի իրաւագրկութիւնը, եթէ արգարութիւնը կը բայխուի անխտիր, եթէ մարդիկ կը զարգանան ու կը բարձրանան իրենց սիրած ու յարած լեզուով, եթէ ամէն մէկը կը ստանայ հնարաւորութիւն, զիւրութիւն, փոխադարձ օգնութիւն ու օժանդակութիւն իր բնական ձիրքերուն, յատկութիւններուն, ստեղծագործող բնդունակութիւններուն զարգացման և կիրառման, այնտե՛ղ ի՞նչ հաշիւ, ի՞նչ ցնորք կրնայ գոյութիւն ունենալ անջատումի, հակամարտ շահերու : Այնտեղ ի՞նչ աւելի բաղձանք, ի՞նչ աւելի գերազանց խէտալ և նպատակ փոխադարձ սիրոյ, յարգանքի ու պաշտամունքի :

X

Մ Ե Ր Ի Տ Է Ա Լ Ը

Ձեւափոխման, բնաշրջման օրէնքով՝ ինչպէս անհատը, նոյնպէս և անոր կազմած հաւաքական անհատականութիւնը՝ Ազգերը կազմած ըլլալով ինքնուրոյն տիպ, անոնց ամէն մէկը իր կրած ու փոխանցած պայմաններուն, կեանքին, քաղաքակրթութեան, միջավայրին, աւանդութիւններուն, մէկ խօսքով՝ ամբողջ անցեալին շնորհիւ տիրացած է որոշ յատկութիւններու և ընդունակութիւններու : Ազգերու այդ քաղմազան յատկութիւնները իրենց ուրոյն արժանիքն ունենալով հանդերձ, կը լրացնեն իրար և այդ է որ ամէնէն աւելի կը նպաստէ քաղաքակրթութեան, ստեղծագործ աշխատանքի կատարելագործմանը :

Եթէ անցեալին բիրա ուժը, նուաճումի ու շահագործման անյազ անկը, զինապաշտ հոսանքը նուաճելով ազգեր, տիրապետելով ազգերը՝ ճնշումի, շահագործումի քաղաքականութեանն է առաջնորդ հանդիսացիր, եթէ անցեալին այդ քաղաքականութիւնը՝ նուաճողի ու նրուաճուողի խտրականութեամբ, իրաւտէրի ու իրաւազուրկի յարաբերութեանց վրայ հիմնուելով՝ խանդարած է խաղաղ ու ստեղծագործող կեանքը, ասպարէզ չէ առած նուաճողներու ու նուաճուողներու իրար լրացնող յատկութիւններուն ստեղծագործութեանը, եթէ այդ խանդարման քաղաքականութեան հետեւանքով նուաճողը միշտ ստիպուած է եզեր իր ոճիրներուն գիտակցութեամբը անվստահ վերաբերուիլ զէպի նուաճուած իրա-

ւազուրկը, տանջուածն ու հարստահարուածը, իրաւունք է համարեր այդ տանջուածներու, հարստահարուած իրաւազուրկներու ամէն մէկ բողոքին, ապրելու ցանկութեան ամէն մէկ արտայայտութեանը անջատողական մեկնութիւն տալով խստութիւնները, հալածանքները, ճնշումները բազմապատկել ու ատով իր իսկ Տիրապետողի՝ պետական կեանքը, պետական շինութեան հիմքը եղծանել, եթէ նուաճուած իրաւազուրկները, հարստահարուածներն ու տանջուածները այդ եղծման, օրհասական վտանգին՝ բնաջնջման վտանգին հանդէպ յուսահատականի կեդրոնախոյս ընդվզումներն են ունեցեր, եթէ դեռ և անորոշ ժամանակի մը համար ալ մեզ վիճակուած է դժբախտութիւնը ունենալ ինչպէս անցեալին, չտեսնել ու չվայելել զսուած Ազգային Սուրբ Գաղափարի, Մարդկայնութեան ներբովանդակի, բանականութեան, արդարութեան այդ օրերը, — այնու ամենայնիւ, կեանքի բարեշրջման ընթացքը կանգ չառնել, առանձնաշորհեալներու, շահագործողներու ըմբռումն ու քաղաքականութիւնը մշտապէս չի կրնար մնալ, կը բազմանան արդարութեան կողմնակիցները, կը վերանան նախապաշարումները, կը բազմապատկուին իրաւունքի մարտիկները, Հնի դէմ կը յաղթանակէ նորը: Նո՛րը առոյգ ու կենսունակ, անքնական, անարդար, նոյն իսկ տիրապետողի շահերու ու գոյութեան համար վտանգաւոր ու անապահով քաղաքականութիւնը կը ջնջուի, բազմատարր պետութեանց համար կը սկսի նոր ու երջանկաւէտ դարազրլուի մը: Կը սկսի ոսկեզարր բոլոր անցեալ ոսկեզարբէն համերայն, բեզուէն աշխատանքի ու ստեղծագործութեան, բարձր քաղաքակրթական կատարելագործման, ուր կը տիրապետէ ո՛չ թէ փոխադարձ անվստահութիւնը՝ այլ մէկմէկու անհրաժեշտութեան գիտակցութիւնն ու փո-

խաղարձ յարգանքը և հողածութիւնը, ուր կ'ազդէ ո՛չ թէ կեդրոնախոյս ձգտումը՝ այլ մէկ մէկու ձգողական անդխնազրելի զօրութիւնը :

Ես ըսի բազմատարր պետութեանց համար : Կը շեշտեմ այդ պարագան, պնդելով որ եթէ ցարդ և զուցէ այսօր պետութեան բազմատարրութիւնը անոր գոյութեանն ու խաղաղութեան ապահովութեանը համար չարիք մըն է համարուած, այդ առաջ եկած է լուծման, ճնշումի, չահագործման, իրաւագրկման անընական ու անարդար նրկարագրուած քաղաքականութիւնէն : Իսկ ապագային, կը կրկնեմ, եթէ վիճակուած է մեզ զժբաղդութիւնը ունենալ ներկայիս չտեսնելու ու չվայելելու բանականութեան, արդարութեան օրերը—, այդ քաղաքականութեան ջրնջումով, ձուլման քաղաքականութեան յաջորդելով Աղգերու Միութիւնը, Ազգերու Ինքնորոշ Միութեան ներդաշնակութիւնը, ուրոյն ընդունակութիւններու ու յատկութեանց ազատ զարգացման ու կիրառման համադրութեամբ, բազմատարր պետութիւնները միատարր պետութիւններէն զերազանցապէս աւելի յառաջադէմ, աւելի մեծ ու քաղաքակրթութեան առաջնակարգ սատարները, սիպար վեհութիւնները պիտի ըլլան, որովհետեւ միատարր պետութեանց մէջ միայն անհատներու ազատ զարգացող ու զանազանուող ընդունակութիւններն ու յատկութիւններն իրարու լրացուցիչը պիտի ըլլան, իսկ բազմատարրերուն մէջ հաւաքական անհատականութիւններու—ազգերու—բաղադրիչ անհատներուն բազմազան ընդունակութիւններով ու յատկութիւններով արդէն մէկ լրացեալ միութիւն կազմող յատկութիւններն ու ընդունակութիւնները պիտի կազմեն նոր լրացուցիչ բաղադրութիւն մը իրենցմով բաղկացող պետութեան—ժողովուրդներու ընդհանուր բարգաւաճման, բարօրու-

թեան, երջանկութեան, մշտատու խաղաղութեան համար :

Այս ճշմարտութեան վկայ են բոլոր անցեալ ու ներկայ բարդաւաճ քաղաքակրթութեանց, մեծութեանց պատմութիւնները :

Մինչև և մեր օրերը իր ազդեցութիւնը պահող հոռմէական քաղաքակրթութիւնը արդիւնք է եղած հոռմէական բազմատարրութեան ստեղծագործութեանը, արարական քաղաքակրթութիւնը արդիւնք է եղած զուտ արարականէն շատ աւելի, դուցէ և էապէս բիւզանդական-ասիական բազմատարր տպատեսնեալ հանճարներու : Ամերիկեան հսկայ ու արագ արդիւնաբերական յառաջդիմութիւնը ստեղծագործութիւնն է ո՛չ մէկ երկրի մէջ նրմանը չտեսնուած ազգերու բազմազանութեան ու հատուածներու ինքնորոշ պատ զարգացող աշխատանքին : Ռուսական արդի քաղաքակրթութիւնը—լեզուն ու գրականութիւնը, արդիւնաբերութիւնը բուն ռուսական ըլլալէ աւելի արդիւնք են ոչ-ռուսական այլացեղ մտքերու աշխատանքին ու ստեղծագործող նուիրաբերութեանը :

Ապագան, ուրեմն, ո՛չ թէ ձուլման՝ այլ միութեան քաղաքականութեանն է, կամ աւելի ճիշտը՝ բազմատարր միութիւններու քաղաքակրթութեանն է :

Ջնջեցէ՛ք բնութեան մէջ, տիեզերքի մէջ բազմազանութիւնը, վերածեցէ՛ք տիեզերքը միօրինակութեան, կը ջնջուի բնութեան գեղեցկութիւնը, ներդաշնակութիւնը, կեանքը :

Բնութեան այդ բազմազանութիւնը՝ ուր ամէն մէկ տարր կարծէք կը հակադրէ միւսին, որոնք յաւիտենական կռիւր պիտի մղէին մէկ մէկու դէմ, բնդհակառակը ներդաշնակուելով կը կազմեն տիեզերական յաւիտենական շարժման մեծութիւնը :

Պետական կազմը՝ մարդկութեան և հետեւաբար ազ-

գերու համար նպատակ չէ, այլ միջոց: Ահա՛ ինչու համար Սահմանադրական Ռամբլալարութիւնը ընդունեց թէ պետական իշխանութիւնը՝ ժողովուրդի վեհապետութիւնն է, զոր հռչակեց հանդիսաւորապէս Օսմանեան Սահմանադրական վերջայտարարութեամբ կազմուած անդրանիկ Խորհրդարանը:

Հիմնուելով ժողովրդապետական այդ սկզբունքին, Օսմանեան Խորհրդարանի յայտարարութեան, Շթութկարտի Միջազգային Ընկերվարական Կոնգրէի քննողման վրայ, պիտի հետեւցնենք և արդէն գոյութիւն ունեցող իրական փաստերով պիտի ընդունինք՝ որ, եթէ ազգերը մարդկութեան ներքովանդակութիւնն են, պետութեանց ներքովանդակութիւնն են նաև ազգերը:

Այդ պատճառով է անշուշտ, որ գերմանական Սօցիալ-Դեմոկրատիան իսկ մերժելով ընկերվարականութեան վերադրուած ապազգայնութիւնն ու հակապետականութիւնը, մերժելով այդ անհիմն կամ թիւրիմաց և շատ անգամ գիտումնաւոր խեղաթիւրումով մեղադրանքները, իր ղեկավարներէն Պէպէլի բերնով գերմանական Ռայխտակին մէջ յայտարարեց թէ՝ «Դերմանիոյ վրայ յարձակման պատերազմի պահուն՝ հայրենիքի պաշտպանութեան համար յառաջագունդներու շարքին մէջ և պատնէշներու վրայ ես կ'ըլլամ առաջինը»:

Համանման ապացոյցը տրուեցաւ և մեր երկրին մէջ ալ Մարտ 31էն անմիջապէս յետոյ, երբ մինչև ազատարար բանակի հասնիլը, Հ. Յ. Դաշնակցութիւնը նախաձեռնութիւնը կը ստանձնէր հրաւիրելու ու համախմբելու օսմանեան միութիւնը կազմող բոլոր ազգերու քաղաքական կուսակցութիւնները, ընդգլխաւոր տարրերը, միահամուռ ուժերով Սահմանադրութիւնը պաշտպանելու համար. երբ, թէկուզ կեդրոնախոյս, անջատողական հա-

մարուած տարրերէն, Մակեդոնական ու Հայկական յեղա-
փոխական կամաւոր մարտիկներ ինքնաբերաբար կ'եր-
թային և կը միանային Ազատարար Բանակին, իրենց ար-
եան զնով պաշտպանելու վտանգուող ընդհանուրի մեծ
ու սրբազան հայրենիքը, Սահմանադրութիւնը բռնապե-
տութեան դէմ:

Կու գայ ժամանակ, երբ այդ պարտականութիւնն
խակ զգալու և կատարելու պէտք ու պահանջ չի մնար,
որովհետեւ մարդկութեան ներբովանդակութիւնը կազմող
ո՛չ մէկ ազգ, ո՛չ մէկ պետութիւն միւսին վրայ յար-
ձակում գործելու ոճիրը յանձն չպիտի առնէ, այդ ոճի-
րը գործելու մտածողութիւնը չպիտի ունենայ. որովհե-
տեւ յաջորդաբար և դասաւորաբար անհատի, ազգի,
պետութեան և վերջապէս մարդկութեան գոյութիւնը,
այդ գոյութեան ապահովութիւնը պայմանաւորուած է
ամէն մէկ անհատի, ամէն մէկ ազգի, ամէն մէկ պետա-
կան հաւաքական միութեան գոյութեամբն ու անձեռնմը-
խելիութեամբը:

Իսկ մինչև և այդ երջանկաւէտ օրը, մինչև և այդ ժա-
մանակի հասնիլը՝ ազգերը, պետութիւնները պիտի ստիպ-
ուին ինքն ըստ ինքեան չարիք կոտոր պատերազմին հան-
դուրժել միմրայն յարձակման ենթարկուելու պարա-
զային:

Այդ իսկական Ռամկալարութեան, Լճկերլարութեան
պատգամն է՝ որ կը հաղորդուի աշխատաւորներու մի-
ջոցով՝ բոլոր ազգերուն, բոլոր պետութիւններուն:

Այդ պաշտպանողականի պատերազմն է, գոյութեան
կռուի բնական իրաւունքն է, եթէ յարձակում կրեն. բայց
և նոյն գոյութեան կռուի պարտականութիւնն է երբե՛ք
յանձնառու չըլլալ յարձակման, որովհետեւ արեւու տակ
բոլորն ալ իրաւունք ունին ապրելու:

Ապա ուրեմն, պետութեան մէջ բազմազան տարրերը՝ ազգերը նուիրուելով ներդաշնակ, համերաշխ ու մէկմէկու լրացուցիչ աշխատանքի, քաղաքակրթական կատարելագործման, պետութիւններն ալ իրենց կարգին կը կազմեն անշուշտ ներդաշնակ միութիւններ, ամէն մէկ պետութիւն իր բազադրիչ տարրերու ամբողջական ու բազմազան յատկութիւններով և ընդունակութիւններով կը նուիրաբերուի համամարդկային միութեան, իրար լրացնող բազմազան յատկութիւններով ու ընդունակութիւններով ստեղծագործող աշխատանքի ու քաղաքակրթութեան, կը լրացնէ ընդհանուրի բարեկեցութիւնը, կատարելագործումը, հոգեկան ու նիւթական պահանջներու բաւարարութիւնը:

Ինչ աւելի խոչալ քան այս հեռանկարը՝ որ ապագան իսկ է և պիտի ըլլայ:

Ազգերու դերն ու աշխատանքը եղեր է ցարդ իրագործուած քաղաքակրթութիւնը պատմութեան մէջ: Ամենաբարձր քաղաքակրթութեան այդ հեռանկարին հանելու դերն ու աշխատանքն ալ դարձեալ ազգերուն կը պատկանի:

Ահա՛ մեր խոչալը:

Ահա՛ բնաշրջուած, մաքրուած Ազգի, Հայրենիքի սուրբ ու մաքուր գաղափարը, ըմբռնումը որ գիտութեան կը պատկանի, որ անոր նորագոյն խօսքն է, կեանքէ վերարտադրուած ճշմարտութիւնն է:

Ես չեմ զբաղիր, մենք չպիտի զբաղինք այն վերնագաւառային հարցով՝ թէ, այդ հեռանկարին, մեր խոչալին իրականացման հանելէ յետոյ, արդեօք ինչ, ո՞ր պիտի բնաշնչումի ենթակայ պիտի ըլլան Ազգի ու Հայրենիքի գաղափարները:

Մինչև և մէկ հորիզոնի հասնիլը՝ նոր հորիզոններ չեն տեսնուիր:

Աւատական-Բիւրոկրատական-Պուրժուական կարգերու ընկերական բազմազան կեանքի միջավայրէն գուշակել ու տեսնել հեռաւոր եղած հորիզոնը . . . :

Գաղափարի Աստղը այն է՝ ինչ որ սկարագրեցինք, ինչ որ գիտութեան տուած յայտնութիւնն է :

Այդ հորիզոնին հասնող սերունդը միայն ընդունակ կրնայ ըլլալ գուշակելու ու տեսնելու աւելի հեռուն, նոր հորիզոնը՝ որու աւետարներ Աստղը, յամենայն դէպս մարդկութիւնը միայն կրնայ ըլլալ՝ որուն և մենք կ'առաջարկենք գիմել :

Եւ մենք կը ցանկանք՝ որ այդ դերը, պարտականութիւնը հիմակուքնէ ըմբռնէ, գիտակցի Սամանեան Պետութիւնը—անոր բազադրիչ բազմազան տարրերու միութիւնը :

Պիտի զգան, պիտի ըմբռնեն, պիտի խելարերի՞ն արդեօք վերջապէս մեր թուրք հայրենակիցները, Իթիթի-հատ-Թարագրի ղեկավարները բնութեան, մարդկութեան այս անդիմադրելի օրէնքը, անխուսափելի պարտականութիւնը, անողօք պատասխանատուութիւնը ապագայի, պատմութեան առջև, ու յստակ, պայծառ լուսաչող երջանկաւէտ կեանքի հեռանկարը :

Հայուն միակ կոչումն ու ձգտումն է ու պիտի ըլլայ—հրաւիրել բոլորն այդ կեանքի խաղաղ աշխատանքին :

Հ. Յ. Դաշնակցութիւնը ո՛չ միայն որդեգրած, իւրացուցած է Ազգի, Հայրենիքի, Մարդկայնութեան զրտուած, մաքուր վե՛հ գաղափարը, այլ և ան մէկը եղած է զաման, բնաչրջութեան ձեւակերպման, պատմափոխութեան լուսարանութեան և պրօպականտի աշխատաւորներէն, որով իրաւունք ստացած է Էնթէրնասիօնայի մէջ իր տեղը ունենալու : Իր այս ներդաշնակութեան

ստեղծագործող աշխատանքի, բոլոր գոյութիւններու համերաշխութեան ու յարգանքի առաքելութիւնն է՝ որ ամէն մէկ երկրի ու պետութեան մէջ, ուր Հայկական Հատուածը կ'սպրի, Հ. Յ. Գաշնակցութիւնը կը շարունակէ անխախտ ծառայել իր սկզբունքներուն, առանց հակադրելու ամէն մէկ պետութեան բաղադրիչ միութեանը, որ անհատէն սկսած մինչեւ մարդկութեան հասցընելով՝ կ'աատուածայնէ մարդը իր ստեղծագործող, անշահագործ աշխատանքովը, ի՛նչ ազգէ ալ ըլլալ :

Այդ առաքելութիւնը պիտի ըլլայ բոլոր ազգերու կուսակցութիւններունը : Այդ սկզբունքը պիտի ղեկավարէ բոլոր կուսակցութիւնները ու ազգերը, եթէ կ'ուզեն ապրիլ : Եւ ո՛չ մէկ տարր այնքան իրաւունք ունի ըսելու — «Ես իսկ եմ Ազգը» , որքան աշխատաւոր դասակարգը :

Ճակատագրական պատգամն է եղած այդ անցեալին . ճակատագրական պատգամը պիտի ըլլայ և ապագային :

Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն



Պարզ է ուրեմն, թէ ի՛նչ կը հասկնանք մենք Օսմանցի ըսելով : Աւելի մեծ, աւելի վեհ, աւելի կատարեալ քան թրքական անձուկ ու շովինիսդ մտաւորականութեան մեծ մասի ըմբռնածն ու ձգտածը :

Օսմանցիութիւնը ազգութիւն մը չէ, ցեղային, ազգագրական բովանդակութիւն չունի, այլ երկրային ու պետական բացատրութիւն մըն է : Օսմանցիութիւնը Միու-

թիւնն է հաւաքական անձատ-քաղաքացի անհատակա-նութիւններու :

Օրէնքներով, ճնշումներով ազգային-հաւաքական անհատականութիւնները չեն ձուլուիր, չեն լուծուիր, չեն քնջուիր : Կոտորածներն անգամ չեն հասնիր այդ նըպատակին :

Միութիւն, և ո՛չ լուծում կամ ձուլում : Միութիւնը, համերաշխութիւնը, ներդաշնակութիւնն է բնականը, փրկարարը բոլորի համար, Օսմանցիութիւնը կազմող Միութեան բոլոր Հաւաքական-Ազգային անհատականութիւններու՝ նոյն իսկ թուրքին համար :

Մենք գէ՛մ ենք ո՛չ միայն տիրապետողներու, այլ և տիրապետուածներու շովինիզմին, աւատական, բիրտկրատական-պուրժուական ըմբռնումներուն ու ձգտումներուն :

Մենք գէ՛մ ենք բոլոր տեսակի շահագործումներուն ու շահագործողներուն : Մեր ազգայնական գաղափարի մարմնացումի առարկան բոլոր ազգերուն համար ալ աշխատաւոր ժողովուրդն է՝ և ո՛չ շահագործող տարրերը :

Մեզ համար նոյնքան խտտելի ու դատապարտելի են Հայուն, Յոյնին, Բլուրտին, Արաբին, Պուլկարին, Ալպանացիին շովինիզմը, առանձնաշնորհեալ-շահագործող գասակարգերու ազգամուլութիւնը՝ որքան թրքական ձուլումի, լուծումի ձգտումը :

Ազգերու համագործակցութեան ստանձնելիք գերն է՝ որ պիտի փրկէ ընդհանուր Հայրենիքը, պիտի հաստատէ ու ամրապնդէ սամկալար Սամանազրութիւնը

ՃԱԽՃԱԽՈՒՏՔԸ

Վատասերման օխտաւորութիւնը նոր չէ : Դարերով սարկական կեանքի և մանաւանդ վերջի երեսուն տարիներու բռնապետական շրջանին մէջ մակրդուած սերունդը մինչև ուղնուծուծը հասցուց այդ օխտաւորութիւնը :

Եւ սակայն, հակառակ այդ ամէնուն, բնաշրջումն ալ կը կատարէր իր դերը և 90ական թուականներուն յայտնուեցաւ տարր մը որ ընդվզումի թռիչքը կը ստանար և մաքրագործումի ուղին կը բռնէր :

Մօտ տասնևհինգ տարիներու ընդհատումէն յետոյ, անմիջապէս որ պայմանները նպաստեցին՝ աշխատանքը վերսկսաւ :

Այդ վերսկսումը աշխատանքին դէմ բարձրացած կրկուսցներու մասին ուրիշ առիթով մը ես խօսեցայ արդէն . ըսի թէ ի՞նչպէս ազգանիչի մը նման, կարծես մէկ մատի շարժումով, ազգասիրութեան գիմակի տակ, դժուծ նիւթական շահերու ապահովութեան համար՝ մէկ անգամէն արշաւանքը սկսան :

Այդ ազգանիչը Հայրենիքը և անոր արտօնատէրը եղաւ՝ Յուլիս 10ի Մահմանադրութեան տարեդարձի առիթէն օգտուելով, ամբոխաւար ժողովական կերպով :

Երեւոյթը անապասելի էր : Անապասելի էր ո՛չ թէ անոր համար որ արտօնատէրը մեծ ուժ ու հեղինակութիւն մըն էր, այլ անոր համար որ կը շահագործէր 90—95 թուականներու Հայրենիքի անունին նկատուած հմայքը : Հայրենիքը եղբւր էր այսօրուայ պայքարողներու

ուղղութեան նախակարապետներուն, 90—95 թուականներուն ասպարէզ նետուողներուն ժամադրաւայրը : Անոր արտօնատիրոջ պատիւը կը կայանար միայն անոր մէջ՝ որ այդ ժամադրաւայրը ստեղծելու, անոր դուռը բանալու առաքինութիւնն էր ունեցեր :

Կ'ենթադրուէր որ այդ առաքինութիւնը ուսճացած, զարգացած, որմատացած կ'ըլլայ մօտ 15 տարիներու տարադրի կեանքով, տառապանքներու զնով, ժամադրաւայրի համբաւին շնորհիւ ստացած յարմարութիւններով, հասկացութեան տարիներու մէջ՝ քաղաքակրթութեան ուստաններէն մէկուն մէջ իւրացուցած ըլլալ ենթադրուած նկարագրով :

Անիկա վերագարձեր էր Հայրենիքը վերականգնելու նիւթախան լնախապահարարներուն, բայց ո՛չ նախկին աշխատակիցներով, նախկին պայքարի իսկական դերակատարներով : Յոյսը, միակ յոյսը՝ այսօրուայ իր հարուածել, վարկարեկել ենթադրածներն էին, որոնց հետ էր, որոնցմէ չէր հեռանար օրն ի բուն, առաւօտ ու իրիկուն : Միայն այստեղ չէր՝ որ այդ Արտօնատէրը իր սրտի մօտ, իր բարեկամութեան արժանաւոր էր համարեր Ազատաստի շուրջը բողոքուողները ու Դաշնակցութիւնը : Պոլսական Մամուլին եթէ յայտնի չէ, արտասահմանեանին ծանօթ եղողները մոռցած չեն ըլլար մէջբերումներ, զորս կարելի է վերարտաքաղել իրենց օրոյն ու թուականներովը :

Միայն թէ, վերագարձէն յետոյ, դեռ եւս Ազատաստի ստեղծման մասին խօսք չէր եղած և Արտօնատէրի յոյսերը չէին խախտած :

Հայաստանի Գոմբաստանի հարցը առաջ եկաւ : Այն ատեն ոչ ոք կարող էր կասկած ունենալ թէ նիւթական հաշիւները մինչև ի՞նչ հետեւանքի կը հասնին, և բարե-

կամներ առաջ մղեցին Շահնազարը : Այդ եղաւ պատ-
ճառներէն մէկը՝ որ ուշացուցին Հայրենիքի վերերեւումը :
Շահնազար ընտրուած ըլլալով հանդերձ, Թէրխա փաշայի
չնորհիւ ջուրը ինկաւ Քոմիսիօնի հարցը : Մինչ այս մինչ
այն, Ազատամարտ ալ ստեղծուեցաւ : Անկասկած որ պայ-
քարող սարրերու ժամադրաւայրը այժմ փոխադրուած
պիտի ըլլար Ազատամարտի մէջ : Այդ տհաճութիւնը
չծածկեց անիկա . մեր շարքերուն աշխատակցութիւնը ա-
պահովել աշխատելով հանդերձ՝ կ'աշխատէր համոզել որ
Ազատամարտը երեկոյեան հրատարակութիւն ղառնալով,
ո՛չ թէ Հայրենիքին, այլ Բիւզանդիոնին մրցակից ըլլայ :
Ազատամարտը չէր կրնար իսկ մտածել մրցակից ըլլալ թէ՛
մէկուն և թէ՛ միւսին դէմ : Ազատամարտը հրապարակ չէր
գար շուկայի հաշիւներով : Յետո՛յ միայն կարելի եղաւ
գուշակել թէ՛ ինչո՛ւ ինքը, այդ շուկայական հաշիւնե-
րու տէրը, իրիկուան հրատարակութիւնը իրեն համար չէր
նախընտրեր :

Յամենայն դէպս, Հայրենիքը դուրս բերաւ հասա-
րակութեան համար այնպիսի տպագրութիւն՝ որ ան եթէ
ո՛չ արձագանգը Ազատամարտի, գէթ նոյն պայքարի ուղ-
ղութեան, առնուազն իր նախկինին հաւատարիմ հետե-
ւորդը պիտի ըլլայ :

Եւ իր նոր աշխատակիցներու թուին մէջ անիկա
անուններ կու տար համակիր դէմքերու :

Բայց առաջին համարը դուրս եկաւ թէ չէ՝ խառ-
նուրդը նկատուեցաւ : Երբ բացատրութիւն պահանջուե-
ջաւ իրմէ, անմեղ պատահականութեան մը հաւատումը
սուտաւ :

Առաւօտ և իրիկուն ինք անձամբ կու գար ստանա-
լու իմ յօդուածները :

Հասաւ Յուլիսի 10ը : Տարեդարձի մասնակցութեան
հարցը դրուեցաւ հրապարակ :

Ազատամարտի մէջ ՄԵՄ ՏՕՆԻ նախօրեակին, «Յուլիսի 10ը» խորագրով ևս պարզեցի իմ հայեացքը այդ առիթով, և որուն համար շնորհաւորական, գնահատիչ նամակներ ստացայ : Յաջորդ օրն ալ Հայրենիքի մէջ հրատարակ դրի մասնակցութեան տպագրութիւններս : Բայց նոյն համարով դուրս եկաւ Հայրենիքի յարձակողական-խմբագրականը :

Վերոյիշեալ յօդուածս առնելու համար երբ Շահնազար անձամբ եկած էր, յայտնած էր ինծի թէ այդ մասնակցութեան ինքը համակարծիք չըլլալով՝ քննադատական է գրած : Ո՛չ միայն առարկութեան ս' և է խօսք չըսի իրեն, այլ և բնական ալ կը գտնէի այդ տարակարծութիւնը : Անբնական է ենթադրել որ բոլոր հարցերու մէջ ուղեղները միօրինակ կարող են մտածել :

Այդ մասնակցութեան հարցին նկատմամբ, մեր սեփական շարքերուն մէջ իսկ, կարծիքներու տարբերութիւններ կային :

Բայց, երբ Հայրենիքի նոյն համարը դուրս եկաւ, տեսայ որ, ո՛չ թէ քննադատական՝ այլ ժեզուիթական յարձակողական մըն էր՝ խեղաթիւրուած փաստով, հիմնուած սուտի ու դաւանանքի դաւաճանութեան վրայ : Կասկած չկար . դիմակը պատուած էր և կ'երևար ինկածը :

Դաշնակցականներու մասնակցութիւնը այդ Տօնին, կը դատապարտուէր իրրեւ հակադիր ցոյց մը Պատրիարքի, Պատրիարքարանի ոչ-մասնակցութեան և որոշմանը : Նախ որ փաստը խեղաթիւրուած ու սուտ էր, և բացարձակ սուտ : Պատրիարք և Պատրիարքարան որոշած են եղեր անպայման մասնակցիլ : Պատրիարքին բացակայութիւնը յայտնուած էր միմիայն հիւանդութեան պատճառով . իր տեղ մասնակցեր էին Փոխանորդն ու Վարչութեան Ատենապետը :

Երկրորդ, ինչպէս Շահնազար կրցած էր հաշտեցնել, հակառակ երբեմնի Հայրենիքին մէջ պաշտպանուած սահմանադրական-նամկալարական համոզումներուն՝ սկզբունքը, հեղինակութիւնը և խորհրդանիշը կցելու անձնաւորութեան մը, մեկ անհասի քղանցքին և անոր մէջ ամփոփելու զանոնք:

Երրորդ, մենք ընդունելով և պաշտպանելով որ ցանկալի է՝ քաղաքական կազմակերպութեանց համար, քաղաքական հարցերու մէջ, Պատրիարքական-Ազգային մարմիններու աշխարհայեացքին ու վերաբերմունքին հետ ներդաշնակ զուգադիպութիւնը, — անըմբռնելի էր մեզի թէ ինչպէս Շահնազար, հակառակ երբեմնի Հայրենիքին պաշտպանած ու պայքարած ուղղութեան, կրցաւ երեւակայել իսկ թէ Կուսակցութիւնները ստիպուած են ենթարկուիլ և հետևիլ Պատրիարքարանին, եթէ ան չի զուգադիպուիր և ներդաշնակուիր Կուսակցութիւններու աշխարհայեացքին ու գործելակերպին հետ:

Չնայելով այդ դաւանական դաւաճանութեանը, շրնայելով փաստերու դիտումնաւար խեղաթիւրումին և ստումին, երկրորդ օրը զառնուկի մորթը հագած՝ տոմսակ մըն էր գրեր և յայտներ որ ինք չէ կրցեր անձամբ գալ, ուստի կը խնդրէր խոստացածս յաջորդ յօդուածը տալ իր գրաբերին:

Շահագործներ էր մեր շրջանի մօտիկութիւնը, շահագործներ էր մեր բարեացակամութիւնը, շահագործներ էր ծառայութիւնս՝ որ առաջինը չէր ևս ուրիշ խնդիրներու մեջ ևս, և այժմ յուսակնութիւնն ունէր շահագործելու և իմ միամտութիւնս

Բաւական էր:

Պատասխանեցի երկտողով մը թէ ռեկլամի համար

քննադատութեան սահմաններէն անցնողին հետ այլեւս ո՛չ մէկ կապ : Ես իր տոմար պահեր եմ . ինք եւս իմինը պահած ըլլալու է :

Շահագործեր էր մինչեւ անգամ Ազատամարտի գործակալներուն ցուցակը :

Անկէ յետոյ շահագործեց նաեւ Ազգամարտի կեղտոտ սարքուածքը : Շահագործեց Նորատունկեան-Թանինական պայքարն ու ստապալումը , շահագործեց Դաշնակցութեան Իթիթիճատեան համաձայնութիւնը , միշտ ստելով , միշտ փաստերը խեղաթիւրելով , միշտ սկզբունքին , դաւանանքին դաւաճանելով :

II

Յուլիսի 10ի ՄԵԾ ՏՕՆին տարիթով՝ Հայրենիքի շահագործումէն յետոյ , Ազգամարեան կեղտոտ արշաւանքի , Նորատունկեան-Թանինական պայքարի ու ստապալումի , Դաշնակցութեան-Իթիթիճատեան համաձայնութեան հարցերուն մէջ գրեթէ բոլոր , հազուադէպ բացառութեամբ , Պորական Մանուշը ձայնակից և նոյնպիսի ստերով , նոյնպիսի խեղաթիւրումներով , մասնիրչներու , դաւաճաններու յատուկ սխառեմով՝ սճրակից գանուեցաւ :

Իրենց բարոյականը հասկցում , իրենց հեղինակութիւնը , շահերը , գիրքը խախտուած , վտանգուած որոշ տիպի ու դասակարգերու տարրեր՝ Մանուշի այդ արշաւանքէն թեւ առած , պար էին սկսեր քաշել , և որոշ տիպի հոգևորականներ աւելի համարձակ հրապարակ դալով՝ ժողովներ կազմելու , որոշումներ տալու , ո՛չ միայն մասնաւոր խօսակցութիւններու , այլ և եկեղեցիի բնմէն ալ ակնարկներ ընելու չափ առաջդիմութիւն էին կատարած :

Բիւզանդիոսը, իրրե աւելի զգուշաւորը, նախ քան Բիւզանդիոսն մէջ իր բարոյակիրցներուն հետեւորդ երեւնալը, հնարամտութիւնն էր ունեցեր փողոցային-պտօնը կարան թերթի մը մէջ տեղաւորելու իր որդին և այն տեղէն արձակելու իր սեւին յատուկ լուտանքները :

Նախկին դարերը մէկ կողմ առնելով, առնուազն 150 տարիէ ի վեր վանքերը, հողուազէպ ժամանակներու չնչին բացառութեամբ, գրեթէ բոլորն ալ հոգեւորականութեան և անոր պաշտպան ու գործակից շահագործող որոշ տարրերու զեղծումներուն, կողոպուտներուն, աւարառութիւններուն անսպառ շահմարանները, անբարոյականութեան որջերն նդամ են : Չեմ գիտեր կայ, մնացե՞ր է արգեօք վանք մը որուն հետ կապուած չըլլայ այս կամ այն միտքամտութեան, այս կամ այն եպիսկոպոսի, Պատրիարքի, Կաթողիկոսի, այս կամ այն վարդապետի, փոքրաւորի, տիտակալի, իշխան-աղայի և ուրիշներու շահատակութիւններուն պատմութիւնը, սերտորէն միացած յաճախ քիւրա աւարառու պէկերու գործակցական համբաւին :

Հապա վանքերու շուրջը առասպելական հուշակ ստացած այլ կարգի ամենակեղտոտ գայթակղութիւններու համբաւն ու մեղադրանքները . . . :

Եւ սակայն այդ բոլորը կրօնի, եկեղեցիի դէմ ոճիր չեն համարուեր, հոգեւորականութիւնը չէ վրդովուեր, չէ ծառայեր, ամբաստանութիւնները չեն քննուեր, ոճրագործները չեն պատժուեր, կողոպուտները ետ չեն ստացուեր :

Ինչո՞ւ . — ս'ղջ մնայ ամենջուամ, խոշտանգուամ, թշուաւ, տնանկ, խեղճ բայց բարեպաշտ, տգէտ աշխատաւոր ժողովուրդը : Անիկա քաղցած կը մնայ, իր արիւննաշաղախ պատառներէն կ'աւելցնէ և իր ուխտա-

տեղիներուն, սրբազայրերուն կը հասցնէ, գողերն ու աւաղակները, անբարոյական մակարոյժները կը պարարտացնէ :

Ինչո՞ւ . — ո՞վ է որ պիտի յանդգնի հաշիւ սրահանջել, ամբաստանել, դատել ու պատժել : Այդ յանդգնութիւնը ունեցողներէն ո՞րն է անմեղ : Երեւակներէ կ, բողառափնի քարը կեսէ : Եթէ պատահարս անմեղն ալ գրանուի, միռաներ պատրաստ են կրօնի, եկեղեցիի անունով՝ մտքերու վրայ ազդել, հոգիները ճնշել, անլուր գրպարտութիւններ տեղալ : Վա՛յ է եկեր միամտութեամբ, անմեղութեամբ բողոքի ձայն բարձրացնողի գլխուն : Եթէ կեանքն ու օձիքը ազատեց՝ բարեբաղդ է :

Ամայացեր են վանքերը, կողոպտուեր են հարստութիւնները, կը աքայ խոշտանգուած ժողովուրդը պարտքի տակ, դայթակղութիւնները սառեցուցեր են ժողովուրդը եկեղեցիէն . — այդ ամէնը ոչի՛նչ՝ եթէ քանդողը, դայթակղեցնողը հոգեւորականն ու իր գործակիցներն են : Եկեղեցին որ ըստ նոյն եկեղեցիի, ինքն իսկ ժողովուրդն է, ի՛նչ կ'ըլլայ թող ըլլայ, բուսկա՛ն է որ օգտուող հոգեւորականները, անոնց մեղսակիցները կամ հովանաւորող շահակիցները կ'ապրին ու կը պարարին :

Պատահեցաւ որ Երուսաղէմի կողոպուտի հարցը ԼԵՐՋութեամբ ձեռք առնուեցաւ, և Աղթամարի անտեսութիւնը անցաւ կողոպուելու, անձնական շահ որոնելու ընդունակութիւնը շունեցողներուն ձեռքը :

Աղթամարի անտեսութեան այդ փոխանցումէն առաջ, ամենափերձին զեղծումներուն ու յափշտակութիւններուն վերաբերմամբ գանգառները՝ ըստ սովորութեան անուշադիր և անհետեւանք էին մնացեր : Ասիկա մէկ քանի տարիներու պատմութիւնն է, շա՛տ մօտիկ անցեալի գործ է . Պորոյ Մառուրը, և մանուսանդ Բիւզանդիոնը գուցէ ամէնէն լաւ գիտնայ և ճանչնայ ամբաստանեալները :

Միայն թէ, անտեսութեան այս անգամի փոխանցումը բացառիկ պայմաններու մէջ էր կատարուած : Աշխատանքի, ծառայութեան կոչուած անհատները հեշտութեամբ կծուող, յարձակում կրողներ չէին, ուստի և նահանջելու հակադրուածները ստիպուած էին որոշ ժամանակ լռութիւն պահել՝ սպասելով յարմար առիթին, իրենց յանդգնութիւնը վերստանալու համար :

Այժմեան անտեսութիւնը կը կատարուի տեղական Ազգային Մարմիններու գիտութիւնով ու որոշումներով : Ազգամարի մէջ մտցուած են կարգ ու կանոն, հաշիւ ու հաշուետւութիւն, կրթական գործ, շինութիւն, սեփականութեան բաղդաւոր յաւելում ու արդիւնք, որոնց մասին տեղեկագիր և հաշուետւութիւն ներկայացուած են անշուշտ կեդրոնական Վարչութեան :

Այդ ամէնուն նկատմամբ տեղեակ պէտք է ըլլար կեդրոնական Վարչութիւնը, տեղեակ պէտք է ըլլար մանաւանդ Բիւզակի շրջանը՝ որ ամէն բանի, ամէն կողմի իրազեկ ըլլալու, որոշ քրքակիցներ ու քրքակցութիւններ ունենալու յաւակնութիւնն ու համբաւը ունի :

Բայց այդ թղթակցութիւնները, թղթակիցները ոչինչ, ոչինչ հրապարակ չգրին վերջին ժամանակներու արնտեսութեան մասին :

Որո՞ւ յայտնի չէ, Մամուլը մտցնէ արդեօք դեռ անցեալ տարիէն Վանի վերջերս ներոսական հոչակ ստացած վարդապետին ու Գաւառական Վարչութեան միջև տեղի ունեցած տխուր միջադէպը, սուր ու տփոցը : Վարդապետը այն ժամանակ զիջեց ու լռեց, հաշտուեցաւ, մինչև որ կարողացաւ ուրիշ տեղ մը պոչտօն գտնել, պաշտօն սպահովել :

Աւանց վերապահութեան, առանց դիտողութեան՝ արձագանգ արուեցաւ նոր կողոպուտներու, Գաշակցա-

կան կողոպուտի սարքուածին, անձնականէն ընդհանրացնելով մինչեւ կուսակցութիւնը: Եւ երանելի Բիւզանդիոնը իրաւունք համարեց մինչեւ անգամ հարց դնելութէ ինչո՞ւ Պաշնակցութիւնը կը լռէ, ինչո՞ւ, երբ ամէն կողմէ հարցումներ կ'ըլլան՝ լռութիւն կը պահուի և պատասխան չի՛ տրուիր: Ինչպէս Շահնազար, նոյնպէս Բիւզանդ Քէչեան չա՛տ լաւ գիտէին նախ սարքուածքին կեղտոտութիւնը, կուսակցութեան բացատրութիւն և հերքում տալու անհարկիւթիւնը՝ քանի որ այդ սարքուածքը կուսակցական գործի նեա կապ չունէր, չատ լաւ գիտէին՝ որ կուսակցական ո՛ր և է անհատ, ո՛չ թէ իբրեւ ուղղակի թալանող, այլ եթէ միայն իսկական մեղապարաներու նեա մասնակցութիւն ունեցած ըլլար, կուսակցութիւնը չէր կարող հանդուրժել ու անպատիժ չէր թողուր այդ մեղսակից անգամը: Այդ չա՛տ լաւ գիտեն, իրենց սրտի խորերէն կը հաւատան Պոլսական և համատիպ մամուլն ու անոնց բարոյակիցները:

Շատ լաւ գիտէին թէ բացատրութիւնը և հերքումը տեղական և կեդրոնական Ազգային Մարմիններու պարտականութիւնն էր, և հաւանականաբար տեղեկութիւն ալ ունէին դաւառի տեղեկագրերուն, հաշուետուութիւններուն և հերքումներուն նկատմամբ: Սակայն այդ ամէնը գիտնալը ձեռնառու չէր. կեդրոնը լռեց, առանց հաշուետուութիւններուն և դաւառի հերքումներուն վերաբերմամբ ակնարկ մը խակ ընելու, միմիայն կեղտոտ սարքուածքին վրայ հիմնուած քննութեան որոշում տուաւ:

Եւ որո՞նց բողոքին կամ տեղեկատուութեան վրայ — Բազմաստորագրի մը որուն ստորագրութիւններէն մեծ մասը մէկ ձեռքով գրուած են, ստորագրութեան տէրերը անյայտ կամ կասկածելի: Յայտնի ստորագրողներէն մէկը՝ Սասունի վրայ արչաւող Համիտի բանակին ձրի հագուստ

նատակարարելով, ո՛չ միայն ազգային այլ և մարդկա-
ին զգացումներէ զուրկ ըլլալը ապացուցանող Համա-
եան երկրպագու մըն է. մէկ ուրիշը՝ Մահմանադրութեան
վերջայտարարութիւնէն անմիջապէս յետոյ անգամ, «մինչև
խղափոխականները երկրէն չարտաքսուին, ժողովուրդը
նահատութեան, անդորրութեան երես չափաի տեսնէ»
ըսելով յատուկ նամակ գրած ու խնդրած էր Բշխանի ու
Կոմսի վտարումը Հայրապետէն՝ որ այն ժամանակ Պատ-
րիարք էր :

Ու ահա՛ ահագանգը հնչեց : Կուսակցութիւնը, կու-
սակցականները եկեղեցին կը քանդեն, անհաւատութիւն
կը մտցնեն :

Պատն ժողով, Ընդհանուր ժողով, հարցապնդում,
վիճարանութիւն : Մարդիկ գաղտնիքը գտած, բոպէն
նստած կ'ենթադրէին՝ Կուսակցութեան մահուան վճիռը
տալու համար :

Կազմուեցաւ Քննիչ Մարմինը : Ամբաստանողները
լսուեցան, բայց պաշտպանող կողմերը՝ ո՛չ : Մինչև անգամ
յանդգնեցան զլանալ Ազգային երեսփոխաններու տեսնել
ամբաստանագիրը և ծանօթանալ անոր, մինչդեռ ուրիշ-
ները գործակից վկայ կը հրաւիրէին : Ի՞նչ կատար-
ուեցաւ մութին մէջ . . . :

Մինչ այդ, օրուան Կեդրոնական Քաղ. ժողովը
փոխուեցաւ, և նորը՝ իրերու ընթացքէն անտեղեակ, ա-
ռանց իր ստացած այդ դաւադիր-տեղեկագրի բովանդա-
կութեան պատասխանատուութիւնը ստանձնելու, պարզ
միջնորդը հանդիսացաւ Ընդհանուր ժողովին բերելու :

Եւ ահա՛ վառէն հեռացող վարդապետան անգամ,
խղճահարուած կատարուող անպատկառ խարդաւանող
չահագործումներէն, հրապարակ եկաւ Շահնազարի Հայ-
րենիքի իրեն վերագրած ամբաստանութիւնը հերքելու :

Դաշնակցութեան մատուցած ծառայութիւնը հրապարակելու :

Հրատարակուեցան Աղթամարը իր վաղեմի կողոպտիչ-ազրուկներէն ազատուած օրէն ի վեր անասութեան մէջ իրականացուած բարերար արդիւնքները, եկամտի բազմապատկութիւնն ու շինարարութիւնը, կրթական ծառայութիւնը :

Վերջապէս հրատարակութեան տրուեցաւ Գաւառական ժողովի ուղղակի կատարած խուզարկութիւնն ու քննութիւնը և յայտնուած անօրինակ խարդախ սփրքը : — Կաթողիկոսական տեղապահը ինք էր գողցած, իր անձնական դարակներուն մէջ էր պահած ո՛չ միայն Դաշնակցականներուն վերագրել աշխատած թալանի առարկայնիւթերը, արծաթեղէնները, այլ և այնպիսի գողօմներ, որոնք ժամանակին ներկայացուած են եղեր իրրև գօրքի կողմէ թալանուած :

Մերկացուած այս ամօթալի արարքները Հայկական տարեգրութեան մէջ իրենց նախընթացը չունէին :

Բայց և այնպէս, այս մերկացումը առաջ չբերաւ սփրքործներուն հանդէպ իր արժանի զայրոյթը, և կարծէք մարդիկ ցաւ կը զգային որ մերկացումը այսքան շուտ կատարուեցաւ ու վիժել տուաւ դաւադրութիւնը :

Ընդհանուր ժողովը բաւականացաւ միայն տեղին վրայ քննութիւն կատարուելու որոշման հաւանութիւն տալով :

Կրօնական ժողովի հոշակաւոր Ատենապետը՝ հետք առած մէկ կրօնական և մէկ աշխարհական համախոհներ լսելով միայն երկու ծանօթ երեսփոխաններ՝ — որոնք կուսակցական նեղ, գաղափարը արատաւորող գծուծ հաշիւներէ թեկադրուած, իրականութեան մասին ոչինչ գիտնալով հանդերձ վկայի դերն էին ստանձներ, — հիմնուե-

լով Աղթամարի Կաթողիկոսական տեղապահի անիրաւա-
տու մնացած բլլալուն զանգատի վրայ, հիմնուելով ուրիշ
կասկածելի, անձանօթ ու ազգային գոյութեան դաւա-
շիր թշուառականներու ստութիւններուն վրայ, կազ-
նց նշանաւար տեղեկագիր մը, որուն տակ ստորագրու-
թիւն դնելու չպիտի համարձակէին ճշմարտութեան որո-
նումը ունեցող քիչ ու շատ խղճամիտներ, և զոր Վարչու-
թեան բովէն անցնելու քաջութիւնը չունենալով՝ աշ-
խատեցաւ ուղղակի Լ՛նդհանուր Ժողովին բերելու, որով-
հետեւ շատ լաւ գիտէր՝ որ եթէ այդ դաւադիր տեղեկա-
գիրը որուան Վարչութեան բովէն անցնէր, պիտի մեր-
կացուէր իր բոլոր դաւերէն ու մեքենայութիւններէն :

Լ՛նդհանուր Ժողովը, սակայն, չթողաւարեց ապօրի-
նութիւնը մինչեւ այդ տեղ հասցնել և ստիպեց անպատ-
ճառ ներկայացնել Վարչութեան միջոցով, քանի որ քրն-
կիչ մարմինը ընտրուած էր Վարչութենէն :

III

Աղթամարի շուրջը դիտումնաւոր կերպով բարձրա-
ցուած այդ աղմուկը չէր վերջացած, երբ վրայ հասաւ
Թանխնի պայքարը Նորատունկեանի դէմ, որուն զուգա-
դիպուեցաւ Պատրիարքական հրաժարականը և Հ. Յ.
Բաշնակցութեան-Իթիթիհատեան համաձայնութիւնը :

Նորատունկեանի՝ մնացած Յէրիտ փաշայի հետ,
ժէօն թիւրքերու հանդէպ և մանաւանդ նախարարական
խորհրդականներու օրինազօրն առիթով՝ բռնած դիրքը,
ինչպէս նաև ևւրոպական վեհապետներու մօտ Սուլթանի
զահակալական աւետման նուիրակութեան առիթով՝ իրեն

վերագրուած հակա-իթթիհատական յայտարարութիւններու միջադէպը — որ մինչև անգամ Փարլամենտի մէջ բացատրութեան նիւթ եղաւ, — գաղտնիք չէր Մամուլի և քաղաքական կեանքի հետեւողներուն համար :

Ապրիլ 14էն յետոյ՝ երբ հասարակաց կարծիքը Իթթիհատականներէն կը պահանջէր Մարտ 31էն առաջ դործուած սխալները չկրկնել, Երկրի, պետական կեանքի մէջ՝ փոխանակ դրսէն ազդելու, ուղղակի պատասխանատուութիւն վերցնել, — Ժէօն-Թիւրքերը՝ իրենց փորձառութեան պակասութիւնը պատճառաբանելով և կամ այդ պատճառաբանութիւնը ընել ստիպուելով, անգլիական դրութեամբ Նախարարական Խորհրդականներու հաստատութեան նախագիծը ներկայացնել տուին և այդ ճանապարհով ուղեցին հարթել իրենց մուտքը Երկրին զեկալարութեան մէջ : Այդ ժամանակ Ֆէրիտ փաշա մտեր էր արդէն Դահլիճին մէջ, և երբ Փարլամենտի մէջ Իթթիհատական մեծամասնութիւնն ու հեղինակութիւնը վրտանգուած էր, Ֆէրիտ փաշայի դիրքը աւելի քան ամբաստանուած ըլլալով՝ Նորատունկեան անոր կրթնած կը թուէր : Նախկին գործակիցները գտեր էին զիրար :

Այդ թուականէն արդէն, Ժէօն-Թիւրքերու հակա-Նորատունկեան արամադրութիւններն ու միտումները հրապարակի վրայ ո՛չ միայն գաղտնիք չէին, այլ զանազան պատրուակներով անոր ուղղուած հարցապնդումները ցոյց կու տային թէ անոր տապալումը օրուայ հարց էր, մանաւանդ երբ Ֆէրիտ փաշա տեղի տալու ստիպուեցաւ :

Միայն թէ, Փարլամենտի փակման նախօրեակին տեղի ունեցած վիճարանութիւններու հետեւանքը՝ իրաւունք կու տար Նորատունկեան-տաղնապը գոնէ մինչև նստաչրջանի վերաբացումը փակուած համարելու : Տարարազ-

դարար ժէժն-թիւրքերու բազմաթիւ այլ սխալներուն հետ՝ երեւան եկաւ և այն սխալը, որ Սահմանադրական ընդունուած կարգերու հակառակ, Փարլամենտի փակումէն յետոյ, նախարարական տաղնապ յարուցանել սկսելով և Թանինական արշաւանքով կը ստիպէին՝ որ նորատունկեանն ևս հրաժարի :

Համիտեան ըէժիմի ամենադժոխային պայմաններուն մէջ անգամ իր դիրքը պահելու յաջողութիւնն ունեցող նորատունկեանի համար՝ չէր կարելի ըսել թէ նոր ժամանակի մարդոցմէ կարող է սեպուիլ : Ո՛չ միայն համիտեան ըէժիմը տանիր, այլ և անոր կարգերուն համակերպելով և ծառայելով դիրք կարենալ պահպանելը՝ խղճի չնչին զոհարերութիւններով ձեռք չէր բերուիր : Այս տարրական խորհրդածութիւնն ու տրամաբանական հետեւողութիւնը պետական մարդու անձնաւորութեան մասին՝ կը թելադրէին որ մեր վերաբերմունքը համակրական, նպաստաւոր չըլլայ : Ազգային կեանքի համար ալ նոյն դէմքը մեզ տարբեր կերպով չէր ներկայացած : Ազգային ժողովի խորհրդարանական Յանձնաժողովը դեռ իր եզրակացութիւնները չէր բերած, ի միջի այլ քննադատելի գուցէ և դատապարտելի պատասխանատուութիւններու, զոնէ հարիւր հազարի նիւթական վնասի հարցը դեռ չէր վճռուած, և Յուլիս 10էն յետոյ ալ, մեր աղէտներու դարմանին վերաբերեալ խնդիրներէն ո՛չ մէկին մէջ անոր ազդեցութեան բարիքը չէր նշմարուած, ուստի և ազգային-անհատական տեսակէտով ալ անոր գոյութեան հետ չահագրգռուած չէինք կրնար ըլլալ :

Իայց մեզի համար, Փարլամենտի փակումէն յետոյ, էականը սահմանադրական կարգերու, սկզբունքներու պաշտպանութիւնն էր, և ո՛չ անձը : Այդպէս ալ արտայայտուեցանք : Թանինական արշաւանքի ապասահմանա-

դրականութիւնը, այգանելութիւնը հրապարակ դրինք : Այդ շտեմնելու համար կոյր պէտք էր ըլլալ :

Ինչ բրաւ Պորսակիսն Մաւնուշը, կ'ուզենք ըսել՝ Հայ Մամուլը, հազուադէպ բացառութեամբ : Բացարձակ ստութիւններով, անբարեխիղճ խեղաթիւրումներով աշխատեցաւ օգտուիլ պատրիարքական հրաժարականի, Իթթիհատեան — Գաշնակցական համաձայնութեան գուղաղիպութենէն :

Ակզբունքի, սահմանադրական կարգերու մասին իր ըմբռնողութեան սնանկութիւնը հաստատեց . և՛

Նորատունկեանի անձնուորութիւնը հանձարի, ազգային պատուի ու փառքի, գուտ ազգային խնդիր դարձուց :

Այդ բուական չէր : Ամէն օր գոյն և դիմակ փոխողներու, քծնողի և երկրպագողներու ուղեղէն անսպասելի չէր այդ բռնադրօսիկ շովինիստ այլանդակութիւնը :

Ազմուկ բարձրացաւ թէ՛ նորատունկեանը դոճելու գնով, արեւն զնով, թրքութեան մէջ ձուլումի՛ համակերպութեամբ կնքուած է Գաշնակցական — Իթթիհատեան համաձայնութիւնը : Ազգային դաւաճանութիւն է կատարուած . . . :

Եւ այդ գզուելի այլանդակութիւնը հրապարակ կը դնէին անոնք՝ որոնք իսկական դաւաճանութիւնը կը կատարէին : Յանցագործներու անսպասկառութիւնը աւելի մեծ յանդգնութիւն չէր կարող ստանալ :

Բռնապետութեան տապալումէն առաջ, Գաշնակցութիւնն էր որ տարիներու աշխատանքի արդիւնք, նախաձեռնութիւնն ու յաջողութիւնն էր ունեցած՝ զլլխաւորարար Փէօն-Թիւրքերու հետ համաձայնութիւն գոյացնել՝ ընդհանուր թշնամիին՝ համխտեան բէժիմին դէմ կուռելու համար :

Մինչև Մարտ 31 Իթիհնատեաններու մինատիրութեան ոգիին կատարել տուած սխալներու անաչառ քննադատն ու համերաշխութեան կոչի վեդերանը Գաշնակցութիւնն էր եղած, արժանանալով՝ առանց կրօնի ու ցեղի խտրութեան, ընդհանուրին զնահատման և համակրութեան:

Մարտ 31ի վտանգը Գաշնակցութիւնն էր որ կանխատեսեր և Հասան Ֆէհմի թաղման օրուայ նշանաւոր յայտարարութեամբ՝ կանխազգուշացուցեր և համերաշխ գործակցութեան կոչ էր ուղղեր:

Մարտ 31ի օրերուն, Գաշնակցութիւնն էր որ բոլոր ընդդիմադիր սահմանադրական տարրերուն ու կուսակցութիւններուն ուղղած կոչովը՝ բոլորեր էր ամէնքը իր շուրջը և Օսմանեան Միութեան անունով՝ բէաքսիօնի դէմ կուսելու համաձայնութիւնն էր իրականացուցեր:

Ինչ բրաւ մեր ակնարկած յանցագործ պոռախակ Մամուլը: Բացէք Մարտ 31ի և Ապրիլ 1ի ու մինչև ազատարար բանակի շարժման օրերու համարները: Բացարձակ համակերպութիւն, ծափահարութիւն և կեղծաւոր երկրպագութիւն բէաքսիօնին, Համիտին, վերադարձ նախալուրիսեան ժամանակներու լեզուին ու ոգիին, արհամարհանք, ատելութիւն հանդէպ Իթիհնատի, ծափահարութիւն ամբոխային հակաթիթիհատական հալածանքին:

Այդ նեղ օրերուն՝ ժէօն-թիւրքերը տեսան երկրի, Մահմանադրութեան անկեղծ բարեկամը: Այդ օրերուն՝ Գաշնակցութեան թաքթիքին, բռնած դիրքին, գրաւած ընդհանուր համակիր ուշադրութեան յիշատակները չա՛տ թարմ են՝ վերջուելու համար:

Համիտ տապալեցաւ, բայց բէաքսիօնի վտանգը չանցայտացաւ: Ատանայական օղէտներու վտանգը չկրկնուելու երաշխաւորութիւնը ո՛չ ոք ունի: Ապաղայ վը-

տանգներու հանդէպ՝ անցեալի սխալը կրկնել չտալու, կանխահոգ ըլլալու նախատեսութիւնը դարձեալ Դաշնակցութիւնը ունեցաւ: Եւ դեռ Ապրիլին՝ յատուկ պատուիրակութեան միջոցով, Սելանիկի Իթթիհատեան ընդհանուր կեդրոնի ներկայացուցիչներուն հետ պաշտօնական բանակցութիւնը կատարեց, ու համազործակցութեան նախնական համաձայնութիւնը ստացաւ:

— Ինչ բանի մէջ կը կայանար այդ համաձայնութիւնը.

— Պատրաստ ըլլալ, համազործակցիլ բէաքսիոնի դէմ, պաշտպանել Սահմանադրութիւնը:

Սա այնպիսի յաջողութիւն մը, արք մըն էր՝ որ ո՛չ միայն Երկրին ընդհանուր, պետական տեսակէտով խոշոր նշանակութիւն ունէր, այլ և հայկական — միշտ ամէնէն աւելի տուժող ժողովուրդին համար կենսական կարեւորութիւն ունէր: Կարող էինք, կարող ենք ապահով ըլլալ որ այլ ևս ամենածայրայեղ դժբաղդութեան պարագային, գէթ միայնակ կոտորուելու չենք: Կոտորելու եկող հորդաններուն դէմ թուրք և Հայ, Իթթիհատեան ու Դաշնակցական, միասին կանգնած, միասին պիտի դիմադրաւեն վտանգը:

Համաձայնութիւնը այս միակ ու կենսական կէտէն դուրս, ուրիշ ո՛չ մէկ հանգամանք չունի: Կուսակցութիւնները կը մնան իրենց ծրագիրներով, ինքնուրոյնութիւններով ազատ:

Համաձայնութեան թուղթը կը պարունակէր ուրիշ կարեւոր բացատրութիւն մըն ալ: Մինչեւ այդ, Իթթիհատի կուսակցութիւնը որոշ չէր արտայայտուած Ատանայական աղէտի բնորոշման մէջ: Յուլիս 10ի տարեդարձին առթիւ՝ անոր շրջաբերական յայտարարութիւնը («Կ'ըսուի»), («Կ'ըսեն»)ի տարտամ իմաստն ունէր: Համա-

ձայնութեան թղթին մէջ այդ կէտը շօշափուած և Ատանայական աղէտը յետաշրջական ըլլալը որոշ հաստատուած է :

Այս ամէնը չկարենալ տեսնելու, չըմբռնելու չափ տգէտ չէին կարող ըլլալ ստախօս ու կեղծաւոր «առանձնաշնորհեալ ազգասէրներու» օրկանները : Շահնազար անձամբ չա՛տ լաւ գիտէր նախընթաց բանակցութիւնները : Նախ քան Հայրենիքի երեւումը, այդ ամէնը անձնապէս և ամէնէն աւելի դրուատող ու գնահատողը Շահնազարն էր եղած :

Մաքուր, անկեղծ մարդոց քաղաքացիական պարտականութիւնն էր, յետին մաքերու չծառայող աղնիւ Մամուլի հոգածութիւնը պիտի ըլլար դէպքերու այս դասաւորութիւնը, ընդհանուր հասարակական, ազգային տեսակէտէն մատուցուած և ծրագրուած այս ծառայութիւնը արաացօլացնել հասարակութեան մէջ, տողորուիլ անով ու առաջնորդել հասարակաց մաքերը նոյն ուղղութեամբ, և գրաւորը գործնականին վերածել տալու նըպասակ :

Բայց ի՞նչ ըրին :

IV

Ստող և զրպարտողներու համար էականը այն չէր թէ արդեօք Դաշնակցութեան վզին փաթաթել ցանկացուածը կը յարմարէ՞ր, զինուորական ու քաղաքական իշխանութիւնը իրենց ձեռքն ունեցողները՝ ինչպէս են իթթիհատականները՝ կը կարօտէին Դաշնակցութեան այնքան կարեւոր օգնութեանը, տապալելու համար նո-

բատունկեանը, որպէսզի այդ բանին խաբէրը համար
ստիպուած ըլլային համաձայնութիւն գոյացնել՝ բէաք-
սիոնին դէմ կռուելու և Սահմանադրութիւնը պաշտպա-
նելու («անունով») : Տարրական տրամաբանութիւնը երե-
խայական, ցնորք պիտի համարէր այդպիսի ենթադրու-
թիւն, բայց այդպէս տրամաբանողներուն համար էա-
կանը՝ խելօքութիւնը, բանականութիւնը, իրականու-
թիւնը չէր, այլ ամբոխավայել, եղած ու չեղած, ամէն
մէկ պատահական ցեխ վերցնել և Պաշնակցութեան հաս-
ցէին նետելն էր անհրաժեշտը :

Այդպէս ըրին և Պատրիարքի հրաժարականին առի-
թով : Չպատահեցաւ ո՛ր և է ազգային, քաղաքական
հարց՝ որ մեր Մամուլը խելօք, բազմակողմանի, մեթո-
թիկ եղանակով քննէր, քննադատէր, վերլուծէր ու տրա-
մարանական եզրակացութեան յանգելով՝ ո՛ր և է դպրոցի
պատկանող աշխարհահայեացք ներկայացնէր : Կամ կոյր
հետեւող և կամ անկապ ու անհաշիւ յարձակում : Բա-
բելոն մը, քասու մը, իւրաքանչիւրին բովանդակութիւնը :
Այնտեղ մուտք ունին և՛ պահպանողականը, և՛ արմա-
տականը, և՛ կղերամիտը, և՛ յետադիմականը, և ի՛նչ որ
ուզէք, բայց որոշ ու սկզբունքային հետեւողականու-
թիւն՝ երբե՛ք :

Տեղի ունեցաւ Պատրիարքին հրաժարականը և Մա-
մուլը այլանդակեց հրաժարականին պատճառաբանու-
թիւնը և նախաձեռնութիւնը՝ վերադրելով զայն Պատ-
րիարքին անձնական նախաձեռնութեանը և մասնաւորա-
բար նոր հինգ մահուան դատապարտութիւններուն, և
ապա գլխաւոր պատասխանատուներու հարցին :

Ոչ ոք չփորձեց նպատակայարմարութիւնը քննել ու
քննադատել : Ո՛չ ոք չփորձեց և մինչեւ այսօր ալ չի
փորձեր ճանապարհ ցոյց տալ, ելք ցոյց տալ : Բայց Հայ-

րենիքի, գլուխ կանգնած այդ տարրին՝ նոյն առթիւ ալ Դաշնակցութեան դէմ շահագործելու ազգասիրութիւնը ունեցաւ, ցոյց տալու համար հասարակութեան թէ Դաշնակցական-Իթթիհատեան *contre-réaction* համաձայնութիւնը, համագործակցութեան դաշինքը՝ կատարուած է ի վնաս ազգին, ի հաշիւ տարրալուծման, արեւան գնով ու նպատակով :

Այստեղ չեմ ուզեր կանգ առնել այն կէտին վրայ որ, եթէ երբե՛ք այդպիսի ոճիր մը, ինքնասպանութիւն մը հնարաւոր ըլլար ենթադրել բազմամեայ զոհարերութիւններու Կուսակցութեան մը համար, Հայրենիքի արտօնատէրը այնտեղ ունէր անձնական այնպիսի ծանօթներ, չըսեմ բարեկամներ, որոնց սրտին ամէն մէկ ծալքերը իրեն ծանօթ էին, որոնք անձնական, նիւթական ո՛չ մէկ շահ չունէին, չէին կարող ունենալ այդպիսի ոճրագործ կուսակցութեան մը մօտ գործակից ըլլալու, որոնք ամբողջ իրենց կեանքի ընթացքին, ինչպէս շատ շատերը, իրենց անձնական աշխատանքովը ապրեր են, զիտէր թէ կուսակցական ոչ մէկ անհատը անձնական շահի հաշիւ չէ ունեցած, և ամէն մէկը ամէնէն առաջ պիտի ծառանար կատարուող ոճիրին դէմ :

Բայց էականը ճշմարտութիւնը որոնելուն մէջ չէր :

Մինչև և Հայրենիքի վերերեւուածը, Շահնազար ո՛չ միայն ծանօթ ու համակարծիք էր Դաշնակցութեան այն հաւատաքին ու նպատակին թէ այս երկրին փրկութիւնը և հայ ժողովուրդին դոյութիւնը կախուած է բոլոր տարրերու համերաշխութենէն, ընդհանուր շահերու շաղկապումէն և համագործակցութենէն : Շահնազար ո՛չ միայն ծանօթ ու համակիր էր, կ'ըսենք, այլև ստիժ էր ներկայացած, ուր նմանօրինակ դաշինքներ կնքելու բանակցութեան համար իրեն պաշտօն յանձնուած էր :

Ամէն մէկ բարեխիղճ, ամէն մէկ տրամաբանական հետեւողականութիւն ունեցողի համար՝ բարեբաղդ իրողութիւն մը պէտք է համարուէր Գաշնակցական-Իթթիհատեան համաձայնութեան զուգադիպութիւնը Պատրիարքի հրաժարականի օրերուն, և պէտք է հետեւցնէր որ այդ համաձայնութիւնը կարող է նպաստաւոր ազդեցութիւն ունենալ բանակցութիւններու և յարաբերութեանց վրայ, Երկրի ընդհանուր շահերուն համապատասխան և այդ շահերուն անուշով կղամ հրաժարականի խնդրոյն նպաստաւոր լուծում տալու տեսակէտէն: Քիչ ու շատ խելք, միտք, դատողութիւն ունեցող բարեխիղճ մարդը առանց քաղաքագիտական նրբութիւններու կարօտ ըլլալու, այս բնական խորհրդածութեամբ պիտի ծափահարէր, պիտի շնորհաւորէր յայտարարուած համաձայնութիւնը և ազգային-ժողովրդական հոգեբանութեան, հակումներուն համապատասխան ըլլալը պիտի հաստատէր՝ սրահանջելով, սակայն, որ սպասուած արդիւնքը դրականապէս, շօշափելի փաստերով ապացոյցներ տայ:

Բայց ո՞ւր էր առողջ դատողութիւնը, բարեխիղճութիւնը՝ որ քաղաքացիական այդ տարրական սարտականութիւնը կատարէր Հայրենիք:

Մարդոց հարկաւոր կղամը այդ չէր:

Պէտք էր ստել ու դաւադրել, վարկարեկել:

Եւ Հայրենիք հարցուց մեզի թէ «Համաձայն էք Պատրիարքի հրաժարականին թէ ո՞չ»: Հայրենիք շատ լազիտէր որ հրաժարականի առիթ կողմ հարցերը վաղճւց յարուցուած ու պաշտպանուած էին ու կը պաշտպանուին Ազատամարտի մէջ, Գաշնակցութեան շարքերուն մէջ, և եթէ անպատեհ համարուէր հրաժարականը՝ այնպէս ալ կ'արտայայտուէինք: Ո՛չ միայն այդպիսի ար-

տայայտութիւն չէր տեղի ունեցած, այլև Ազատամարտը միակն էր եղած՝ հրաժարականը իր էութեան մէջ ներկայացնող ու պաշտպանողը:

«Ի՞նչ իրաւունքով յանուն ազգի համաձայնութիւն կը կատարէք» ի հարցումն ալ արուեցաւ: Հայրենիք շատ լաւ գիտէր որ ո՛չ յանուն ազգի հաւնաձայնութեան պայման կարող էր գոյութիւն ունենալ և ո՛չ ալ ունեցած էր. շատ լաւ գիտէր որ սուտ էր ըսածը:

Արեւան զննլի մեղադրանքն ալ նետուեցաւ մեզի դէմ: Ա՛հ, գոնէ արեան անունով այդ ոճիրն ալ չգործէին: Ողորմելիներ՝, դուք որո՞ւ արիւնէն խօսելու և պաշտպան կանգնելու բարոյական իրաւունքը ունիք:

Եթէ տանջուած հայ ժողովուրդը ցաւակից ունեցած է, եթէ անոր սչխարի մորթառումներուն մէջ ընդվզումի արիւնն է հոսած, — որո՞ւնն է եղած այդ արիւնը: Յեղափոխական Կուսակցութիւններու, և մանաւանդ Դաշնակցութեան մօտաւորապէս քսան տարիներու թափած արիւնն է՝ որ ձեզ այդ իրաւունքը պիտի տար: Վաղը, մի՛ արասցէ, վտանգի բոպէն՝ բուն, այս երկրի, այս սառապած ու խոշտանդուած ժողովուրդին ու է մէկ պատահական գալարման մէջ ո՞վ պիտի վերստին թափէ իր արիւնը:

Բայց ո՛չ, այդ սառնձնաշնորհեալ, որոշ տիպի ազգասէրներուն համար կենսականը վտանգն ու ժողովրդական ցաւը չէ, այլ ցաւին վրայ ցաւ աւելցնել, բաւական է որ յաջողին իրենց այս օրուայ մտադրութիւններուն մէջ, ինչպէս խոստովանած էր Բիւզանդիոնը. — «Նորուածել ուժը, քանի որ Դաշնակցութիւնը ուժ կը ներկայացնէ»: Բայց այդ ուժը միշտ անսասան և միշտ աւելի ամբապնդուած, պիտի մնայ անընկճելի. վա՛յ միայն իրենց շահերուն համար, իրենց մտքին ու բարոյական

անանկութեան համար ժողովուրդի բազդին հետ կատակ
ընողներուն :

Ահա՛ թէ ո՛րն է վտանգը ահազանգը հնչեցնողներուն
համար :

Բայց գաղտնիքը դեռ ստոր մէջ չի կայանար :

V

Պատրիարքական հրատարականի բնաւորութեան մա-
սին Հայ Մամուլի խեղաթիւրումին—իրենց կոչման բարձ-
րութեան վրայ կանգնած մնացող բացառութիւնները յար-
գելով—վերջ դրաւ Կեդրոնական Ազգային Վարչու-
թիւնը՝ հրատարակութեան տալով հրատարագրի թարգ-
մանութիւնը :

Այնու ամենայնիւ, Մամուլը և անոր ձայնակիցները
կամ նախապաշարեալները չհեռացան իրենց խտրական
ողիէն, դարձեալ քղանցքի կապուած մնացին, ո՛չ քրն-
նութեան առին հրատարականի բովանդակութիւնը և ձե-
ւը, և ո՛չ ելք գտնելու օրինական ճանապարհի վերա-
բերմամբ տեսութիւններ պարզեցին, այլ շարունակեցին
հնչեցնել կռուի, ծայրայեղութիւններու փողը : Կարծէք
կը վախնային խելօք, լուրջ, օրինական քննադատու-
թիւններով, վերլուծումներով ելք գտնելէ, համապե-
տական, ընդհանուր շահերու և ապագայի ապահովու-
թեան տեսակէտէն բաւականութիւն ստանալէ :

Կարծէք աջ ու ձախ յարձակիլը, անարգելը, («պէտք
է հրատարիլ, պէտք է փրկել Պատրիարքարանը, ևն») չեչտերով կռուի յայտարարութիւններ ընելը՝ հասարա-
կութեան համար բանաւոր կարծիք պատրաստել, առաջ-
նորդել, ճանապարհ հարթել է :

Եւ կը դարձան ժողովրդի սրտի փափուկ թելերուն , կը շահագործեն ժողովրդի զգայութիւնը , իրենցմով զբաղիլ տալու , իրենց թերթին tirager աւելցնելու համար : Կսուի շեփոր հնչեցուցին ու կը հնչեցնեն այդ ողորմելի տարրերը այն պահուն՝ երբ ամէն ժամանակ աւելի խաղաղութիւն ու աշխատանք է նարկաւոր կեանքը վերստեղծելու , աւերակները վերականգնելու , դատարկութիւնները լեցնելու , ուժասպառ , արիւնաքամ եղած ժողովրդին շունչ առնել տալու համար , վերջնական ընաճնջումի վտանգէն ազատ մնալու պայմաններ ստեղծելու համար :

Եւ կուտի դէմ էին այդ նոյն տարրերը այն ժամանակ՝ երբ ընաճնջուող ժողովուրդը իր դահիճներուն դէմ ըմբոստանալէ զատ միջոց չունէր ապրիլ կարենալու համար :

Պատրիարքը Ազգային ժողովին հրաժարական չէր ուղղած , ուստի և Ազգային ժողովին համար անիկա հրաժարուած չէր կրնար նկատուիլ :

Այնքան պետական ու ազգային օրէնքներէ , սահմանադրական կարգերէ ու կանոններէ տղէտ են՝ որ դեռ ո՛չ մէկ անգամ հրաժարականի ձեւին ու հետեւանքի մասին լուրջ ուշադրութիւն ընծայել չկրցան :

Ո՛չ մէկ երկրի մէջ չէ ընդունուած որ հրաժարական տալը՝ հրաժարուած ըլլալ համարուի : Պատրիարքը եթէ մինչև անգամ Ազգային ժողովին հրաժարական մատուցած ըլլար , մինչև հրաժարականին ընդունուիլը հրաժարուած չէր կրնար համարուիլ :

Վարչութիւնը՝ հակառակ Պատրիարքին անձնական կարծիքին , խոշոր պատասխանատուութիւն մը ստանձնած էր , Պատրիարքի հրաժարական մատուցանելու անհրաժեշտութիւնը որոշելով հանդերձ , առանց Լ՛նդհանուր ժո-

զովին տանելու՝ այդ հրաժարականը Բ. Գրան մատուցանել ստալով :

Այս կերպ վարձուէնքին պատճառարանութիւնը պարզուած է, Լ'նդհանուր ժողովի ասջև Վարչութեան զեկուցումով ու հաշուետուութեամբ, որոնց իր հաւանութիւնն էր յայտնած Լ'նդհանուր ժողովը :

Վարչութեան սուսած այդ պատասխանատու քայլը, Բ. Գրան կողմէ Պատրիարքական հրաժարականին մերժուելէն ետք, կ'արդարանայ հետեւանքի մասին Վարչութեան ունեցած լուկեայն վստահութեամբը, և կը ներկայացնէ այն առաւելութիւնը որ, Լ'նդհանուր ժողովի կողմէն զեւ չհաստատուած հրաժարականը անդամնալի մնալու : Ազգային ժողովէն բնդունուելով և կառավարութենէն մերժուելով, հակադրութիւններու, անպատեհութեանց, նոր խնդիր ստեղծելու անսխորթութիւններէն ազատ կը մնայ :

Եկեղեցիին, ազգային իրաւասութիւններէն ու շահերէն որոտացող այդ «ազգասէր»ները այնքան տգէտ են կամ անհոգ դէպի այդ իրաւունքները՝ որ մինչև այս օր ալ ազգային իրաւունքի այդ էական կէտը անտես են թողած, ինչպէս այդ ըրին Աշըղեան Պատրիարքին՝ եթէ չեւ սխալիր նոյն իսկ Ներսէս Պատրիարքին օրով ալ : Ազգային ժողովը բնդունեց անոր հրաժարականը, ուստի անիկա պաղրեցաւ Պատրիարք ըլլալէ, բայց մերժուեցաւ հրաժարականը Համիտէն : Աշըղեան եկաւ շարունակելու պատրիարքական իրաւունքներու գործադրութիւնը : Ազգային Սահմանադրութիւնով Պատրիարք ըլլալէ դադրած անձնաւորութիւնը՝ Համիտի հրամանով Պատրիարք մնայ :

Ո՛չ միայն այս նրբութիւնը, իրաւասութիւնը անտես անուեցաւ, այլ և շարդուեցաւ այն բնդհանուր կա-

նոնը՝ որ բոլոր վարչական իշխանութիւններու համար ընդունուած է: Ազգային վարչութեան գործադիր հեղինակութիւնը կը ներկայացնէ Պատրիարքը: Եթէ գործադիր իշխանութիւնը, ինչպէս ո՛ր և է Մարմին՝ հրատարի և իր հրատարականը ընդունուի իսկ, իրաւունք չունի իր պաշտօնը, պարտականութիւնը լքանելու, մինչև յաջորդին ընարութիւնը, մինչև իշխանութեան նորին փոխանցումը, որովհետև աններելի է վարչական մեքենան կանգնեցնել:

Ահա այս պարագան է որ վարչութիւն և Լ՛նդհանուր ժողով, թիւրիմաց նկատումներով, անտես կ'առնեն և ընդհատման կ'ենթարկեն անյետաձգելի յարտերական խնդիրներ, կը կազացնեն և կը խանդարեն վարչական մեքենան:

Բայց մեր որոշ տիպի «ազգասէր»ներու հոգը, ցաւը այդ չէ: Գաղտնիքը այդ տեղ չէ՛:

Հասարակութեան մտքերը պղտորելու, փաստերը խեղաթիւրելու, ամէն մէկը իր յատուկ յետին մտքերը առաջ քշելու և ցանկութիւններուն հասնելու համար՝ շարժման մէջ կը դնէ եկեղեցիի շահերը պաշտպանելու կոչուած առանձնաշնորհեալները, Ս. Հայրերը: Եկեղեցին կը վտանգուի, Գաշնակցութիւնը, Գաշնակցութիւնը կրօնի դէմ:

Ողորմելիներ. կը կարծէ՞ք թէ կարող էք այսուհետև ալ մրամիաներուն երկար ժամանակ հաւատացնել թէ անձնաւորութիւններն և անձնական գծուծ շահերն են եկեղեցին, կրօնը ու անոր շահերը ներկայացնողները:

Գաշնակցութիւնը՝ ինչպէս մարդկային ուրիշ բնական իրաւունքներն ու օգտութիւնը, կրօնն ալ խղճի օղատութեան իրաւունք համարելով, դէմ է և պայքար կը մղէ ինչպէս բոլոր օղատութեան իրաւունքներու վրայ

գործ դրուող ճնշումներուն, նոյնպէս խղճի ազատութեան վրայ գործ դրուած ճնշման դէմ:

Խղճի ազատութիւնը յարգելով, անոր սպառնացող ճնշումը ո՛ր կողմէն ալ գայ, ճնշողին և ճնշման դէմ պայքարելով, բնական է որ այդպիսի սկզբունքի, դաւանանքի տէր Կուսակցութիւն մը համամիտ չլլար լուսաւորչական, կաթոլիկ, բողոքական, յունադաւան և այլ եկեղեցիներու, կրօններու և կրօնադաւանութիւններու պատկանող հոգեւորականութեան ճնշումներուն:

Դաշնակցութիւնը չի կրնար ընդունիլ ո՛ր և է յարանուանութեան պատկանող հոգեւորականի «արտաքոյ եկեղեցւոյ չիք ազգութիւն» նշանարանը: Հոգեւորականութիւնը՝ իր սեփական շահերուն ու տգիտութեանը ծառայող այդ նշանարանով, պատառ պատառ բրաւ հայ ազգութիւնը. կրօնը համանիշ համարելով եկեղեցիին՝ հարիւր հազարաւոր, միլիոնաւոր հայ արիւնի զաւակներ՝ կենդանի օրերուն խորթացուց, օտարացուց, բուռ մը ժողովուրդի, խեղճուկ գոյութեան մը վերածեց Հայութիւնը: Հոգեւորականութիւնը ո՛չ միայն այդպիսով Ազգութիւնը քանդեց, այլ և իր տգիտութիւնովն ու բարքովը եկեղեցին ալ հարուածեց ու նսեմացուց: Փաստե՛ր կ'ուզէք: — Ձեր խոստովանած ու խոստովանելիքներէն պակաս մնացածը՝ ինչքան ուզէք, պատրաստ ենք լրացրնելու:

Միայն ըստ՛ք, մաքրակրօն, կարճ ու երկայն փէշերով չէրիաթճիներ, դուք ե՞րբ էք պաշտպանած եկեղեցիին շահերը: Ինչո՞ւ կը ստէք, դուք յանցապարտ Մամուլ և անոր պարակից կեղծաւորներ, ըստ՛ք, ինչո՞ւ կը ստէք՝ Դաշնակցութիւնը զրպարտելով, ըստ՛ք, դուք ե՞րբ էք պաշտպանած ժողովուրդին և եկեղեցիին շահերը: Դուք ունեցած էք, տեսա՞՞ծ էք երբեք ընդհանուր վրտանդի, յարձակումի, ճնշումի, բռնութեան հանդէպ աւելի

անկեղծ պաշտպան՝ եկեղեցիի սեփականութեանց և հայ ժողովուրդի համար, քան Դաշնակցութիւնը :

Չեր նմաններուն՝ դարերու անընդհատ սխրագործութիւններու պատմութիւնը մէկ կողմ թողած, 1903ի թարմ փաստը չէ մոռցուած : Ռուսական բռնապետութիւնը իր թափը դրաւ կամ դնել ուզեց եկեղեցական-վանական սեփականութիւնն՝ բու վրայ : Ամբողջ հոգեւորականութիւնը — չնչին բացառութիւն մը դուրս թողած — և անոր նեցուկ «առանձնաշնորհեալ ազգասէրները» յանձնած կամ յանձնելու վրայ էին ամէն ինչ : Յեղափոխական կուսակցութիւնները, մանաւանդ և մասնաւորապէս Դաշնակցութիւնն էր որ ահաբեկեց կալուածները, դրամազուխները յանձնող հոգեւորական ու աշխարհական այդ առանձնաշնորհեալ ազգասէրները . Դաշնակցութիւնն էր որ ահաբեկեց կառավարական կողոպտիչ պաշտօնէութիւնը, որպէս զի չյանձնուին ազգ, սեփականութիւնները, չիրադարձուի Յարիզմի Կոլիցիներէն այդ կարգադրութիւնը, ստիպելով ետ կենալ այդ ոճիրէն, ոտքի կանգնեցուց ամբողջ Կովկասը, իր արիւնը թափեց ո՛չ միայն նիւթական շէնքերու, այլ և կուլտուրական հիմնարկութիւններու համար, ստիպեց Յարիզմը ո՛չ միայն հրաժարիլ այդ ոսնձգութենէն, այլ և վերադարձնել իրաւունքը ազգային վարժարաններու և կուլտուրական այլ իրաւունքներու :

Դաշնակցութիւնը եղած է այնտեղ՝ ուր հայկական տառապանքը գոյութիւն է ունեցած : Իսկ դուք ի՞նչ քրիք, մանաւանդ 15 տարուայ մարտիրոսագրութիւններու օրերուն : Դուք չէի՞ք Բռնապետութեան խնկարկող, փառարանողն ու երկրպագողը . դուք չէի՞ք ո՛չ միայն լսողն ու համակերպողը, այլ դեռ բողոքողները ու նահատակուողները դատապարտող, հալածողները . դուք

չէի՞ք բնաջնջուող ժողովուրդի ու եկեղեցիի Մեծ-Ոճրագործին, Կարմիր Սուլթանին երախտապարտ, ազօթարար, հաւատարիմ պնակալէզները :

Ի՞նչ ըրիք նախրնթաց տարուայ սովի ժամանակ, ի՞նչ ըրիք Ատանայի աղէտին ժամանակ, որու անունով կոկորդիլոսի արցունք թափելով կը շահագործէք վշտի մէջ շուարած ժողովրդին զգացումները : Ձեզմէ ո՞րը տեղէն չարժեցաւ, ո՞րը գնաց իր պարտականութիւնը կատարելու :

Գաշնակցութիւնը չէ՞ր դարձեալ որ տարուեցաւ ամբողջովին այդ աղէտով, փութաց կատարել իր պարտքը՝ հնարաւորութեան չափով, — մարդով, դրամով, գրչով :

Ըսէ՛ք, ողորմելիներ՛ր, ըսէ՛ք, դուք ի՞նչ ըրիք :

Դուք կը լռէք, չէք կարող ըսել :

Մենք կ'ըսենք թէ ի՞նչ . . . :

VI

Մէկ կաթիլ արիւն չունեցողները ձուրումի աղաղակը բարձրացուցին : Ինչո՞ւ . . . — որովհետեւ կուսակցական համաձայնութեան պաշտօնագրին մէջ «Սամանեան Գաշնակցութիւն» ըսուած է եղեր ! : Տառակերներ, տառապաշտներ :

Նոխ՝ այդ ազմկողները եթէ չարամիտ չըլլային, քսան տարուայ կեանքովն ու անձնութիւնամբը ծանօթ և դեռ երէկ նոյն իսկ իրենցմէ փառարանուող կուսակցութեան մը հրատարակութեան տուած վաւերաթուղթին մէկ անպաշտօն և հակասական արտատպութիւնը տեսնելով բնականօրէն պիտի մտածէին . — «Այս տեղ

կա՛մ անգիտակցարար սխալ վերաբրտադրութիւն մը և կամ գիտակցարար խեղաթիւրում ըլլալու է, յամենայն դէպս հետաքրքրական է և պէտք է ստուգել խնդիրը» : Այդպէս չբրին սակայն : Ընողը ուրիշ կերպ ալ չէր կրնար վարուիլ, քանի որ առաջին քայլը չէր ասիկա : Բայց երբ բնագիր թուրքերէնն ալ հրատարակուեցաւ, Հայրենիք՝ ո՛չ միայն իր սուան ու խեղաթիւրումը ուղղելու պարտականութեանը մէջ թերացաւ, այլ և «կ'ըսեն թէ բնագիրն է» ի խնաստով կոտակածի նիւանը սպրդեցուց իր մէկ խմբագրականին մէջ :

Տասակերնէ՛ր ու տառապաշտնէ՛ր : Եթէ մինչև անգամ «Օսմանեան» բառն ալ գտնուէր բնագրին մէջ, այդ պիտի նշանակէր ձուլում : Բովանդակութիւնն է իրականը, էականը թէ տառը : Հայ ըլլալով հանդերձ՝ Օսմանեան չէ՞նք ամէնքս ալ : Բէտաքսիօնի դէմ կուեկու . Սահմանադրութիւնը պաշտպանելու համար կազմուած համաձայնութիւնն է ձուլումը : Ձուլումը այդպէ՞ս կը կատարուի :

Հայրենիքի արտօնատէրը շատ լաւ գիտէր որ Գաշնակցութիւնը միայն թուրքիոյ մէջ չէ որ գոյութիւն ունի . շատ լաւ գիտէր որ Գաշնակցութիւնը ճիւղաւորուած է իր ուժեղ գործունէութեամբ, երեք պետութիւններու՝ թուրքիոյ, Ռուսաստանի, Պարսկաստանի մէջ . ամէնուն շատ լաւ ծանօթ էր այդ երեք երկիրներուն մէջ Գաշնակցութեան սուած զոհերն ու մատուցած ծառայութիւնները՝ համապետական ու ազգային շահերու պաշտպանութեան համար : Շատ լաւ գիտէր Հայրենիք թէ Համիտեան Ռէփիմը ամէն կողմ Գաշնակցութեան ստուերը տեսնելու զաւանցանքն ունէր, թէ Յարիզմը ռուսացման քաղաքականութեան դէմ միակ արգելք Գաշնակցութիւնը տեսնելով կամ ենթադրելով է որ «Գաշնակ-

ցութիւն» անունով պետական ահագին խնդիր մըն է ստեղծեր : Շատ լաւ գիտէր որ ազատագրուած Պարսկաստանի Սահմանադրական նորածին կառավարութիւնը զինքը ինչքան պարտական կը համարէ Գաշնակցութեան : Շատ լաւ գիտէր որ Սոմանեան Սահմանադրութեան կողմնակիցներն ալ հաստատած ու զնահատելով յիշատակած են անոր մատուցած ծառայութիւնը : Շա՛տ լաւ գիտէր որ այդպիսի Կուսակցութիւն մը բառերով , տառերով չի ձուլուիր :

Եւ ինք՝ այդ *arsolusker*, մինչեւ Հայրենիքի վերելումը նոյնը կը խոստովանէր , կը վկայէր , կը ջատագովէր ամէն տեղ , մինչեւ այն աստիճան՝ որ զինքը թիւրիմացութեամբ Գաշնակցական համարողներ ալ կային : Ահա՛ այդ մարդը , եթէ բարեխղճութիւնը կորսնցուցած չըլլար , ամէնէն աւելի վերապահութեամբ պիտի վերաբերուէր սաղսնիկեան անպաշտօն հրատարակութեան խեղաթիւրումին նկատմամբ : Բայց օրուայ շահերը այլ բան կը թելադրէին . և ուստի ինք եզու արձագանգը , իր տեսակի ֆորմիւլով , ապագային սպրդեցնելիք նիւաններու նախերգանքը եզոզ արձագանգը ժառանգակալից «Թիաժակն»ին . . . : Ինք կը հասկնայ մեր ակնարկը , անշուշտ և չստիպեր մեզ հարկաւ բացատրել հանրութեան առջև : Մէկ անգամ ընկնողները հազուադէպ է որ վերականգնելու քաջութիւնը ունենան . յանցանքէն դէպի ոճիր մէկ քայլ է :

Ու կը ծափահարեն զինք Համիտեան բէթիմի երկրբարազունները : Համիտի արեւչատութեան ու վառքին ազօթարար հոգեւորականները՝ որոնց պաշտօնական օրկանը դարձաւ , և այդ կողմէն կարող է պարծենալ թէ ո՛չ միայն կը մրցի Բիւզանդիոնին հետ , այլև կ'անցնի դայն :

Եւ կը շարունակէ Հայրենիք իր ամբօխաւար խոս-

վայոյզ բացազանչութիւնները : Ազգասամարսը մասնա-
նիշ ըրած է Պատրիարքին յայանած հակասամանադրական
միտքերը, — որոնք չեն հերքուած մինչեւ հիմա — , կրօ-
նական ժողովին հակասամանադրական ձգտումները , և
ա՜նա՛ Հայրենիք կը ծառանայ ու կը դռչէ . — «Ազգաս-
ամարսը Ս . Պատրիարքին դէմ » Ի՞նչ մեծ սրբապղծու-
թիւն է եղեր . անխնայադասելին է քննադատուեր : Փո-
խանակընդդիմախօսութեան մէջ սկզբունք , դատողութիւն
մտցնելու , փոխանակ լուսարանելու , փոխանակ վերա-
դրուած մտքերը հերքելու կամ այդ մտքերուն հակասա՜-
մանադրական չըլլալը սպացուցանելու , ամբոխալարու-
թիւնը կ'աշխատի «Ազգասամարսը Ս . Պատրիարքին դէմ»
զրգուումներով ազդել մտքերու վրայ :

Մտքի սնանկութիւնը ի՞նչ նիւթ ու սնունդ կարող
է տալ հասարակութեան : Ջնջեցէ՛ք առոնց գրչի ծայրե-
րէն Գաշնակցութեան անունն ու անոր վրայ արձակուած
օճառի պղպղակները , Ջնջեցէ՛ք ողորմելի չովինիսաական ,
նայ-շիրիարձիակաւ բառերու կուտակումները , ու հասա-
րակութեան միտքը , դատողութիւնը մթագնող սանձ-
արձակութիւնները , — և պիտի տեսնէք թէ ոչինչ կը
մնայ ծածկելու և քողարկելու անոնց մտաւոր ու բա-
րոյակա՜ն սնանկութիւնը :

Մենք չենք պահանջեր , չենք սպասեր , չենք ուլ
բաղձար որ ամէն մէկ քաղաքացի , ամէն մէկ Հայ , ամէն
մէկ Օսմանցի այս կամ այն քաղաքական կուսակցութեան
մտածողութիւններուն մեքենան կամ մեքենական թու-
թակը ըլլայ : Ատիկա ոճիր , մահ կ'ըլլայ մարդկութեան ,
առաջդիմութեան համար . բայց կան հարցեր ուր տա-
րակարծիք ըլլալ անհնար է :

Սահմանադրական երկրի և ժողովուրդներու մէջ
սահմանադրութիւնը , մարդկային անկապտելի իրա-

ւունքները այն ժամանակ են ապահովուած՝ երբ այդ երկրին ու ժողովուրդներու վարչութիւնը յենած է քաղաքական կուսակցութիւններու վրայ և պաշտպանուած է այդ կուսակցութիւններու ուժով :

Եթէ պետական կարգերու համար այդպէս է, ազգային ներքին կեանքի համար առաւել եւս : Այս ճշմարտութիւնը տաննակիտ ամիս շարունակ, առանց բացառութեան, խոստովանուած և փառարանուած էր : Եթէ ճշմարտութիւնները տարուայ այս կամ այն եղանակին փոփոխութեան ենթակայ իսկ համարուէին, այս ճշմարտութիւնը այդ վտանգէն անցեր էր, որովհետև անփոփոխ բոլորած էր տարուայ չորս եղանակն ալ :

Տարիներու դառն փորձը, չափազանց սուղի նստած փորձը վազճուց էր տպացուցեր այդ ճշմարտութիւնը : Ապա ուրեմն, անվիճելի էր որ մենք Հայերս ալ, իբրև Օսմանեան Միութիւնը կազմող տարր մը, մեր իրաւունքներուն պաշտպանութեան համար, պետական օրէնքներու սահմանին մէջ, յենած պիտի ըլլանք ո՛չ թէ անհատի, Պատրիարքի անձնաւորութեան, այլ քաղաքական կուսակցութիւններու և անոնց պաշտպանութեան վրայ :

Պատրիարքին անձնաւորութիւնը շինել կուսք մը, նեղինակութիւն մը ազգային իրաւունքի ու գոյութեան, կը նշանակէ ո՛չ միայն արհամարհել առ հասարակ սահմանադրական սկզբունքները, այլև մեր Ազգ. Սահմանադրութիւնը, ուր ամբողջ նեղինակութիւնը Լ՛նդհանուր ժողովին ու անոր գործադիր մարմինին՝ Ազգ. Վարչութեան է տրուած :

Ազգը Պատրիարքին անձնաւորութեան մէջ կեդրոնացնելը ժողովուրդի կամքն ու գոյութիւնը ջրնջող ձգտումն է եղած, որուն դառն պատուիները քաղած ենք միշտ և մասնաւորապէս Համիտեան շրջանին, որուն

դէմ զո՛հ ենք առւած հարիւր հազարներ, որուն դէմ բո-
լորքած ու ըմբոստացած է ամբողջ հայ-ժողովրդական
զանգուածը :

Ներքին, օրկանական աշխատանքներու մէջ, կրթա-
կան ծրագրի, մեթոտի, առարկաններու, ազգային հիմ-
նարկութիւններու վերակազմութեան և այլ զանազան
հարցերու մէջ՝ կարող ենք տարակարծիք ըլլալ այս կամ
այն դպրոցի աշխարհայեցողութեան, աջ ու ձախ, յետ
ու առաջ, կարող ենք պայքարիլ . բայց ազգային գոյու-
թեան և ինքնուրոյնութեան հարցերու մէջ բաժնուիլը,
զիրար բզկտելը, նոյն գոյութեան ու իրաւունքներու
պաշտպանութեան գրաւական եղող կուսակցութիւնները
հարուածել, վարկարեկել ջանալը, այդ ևս այն ժամա-
նակ, երբ պայմանները չափազանց փափուկ, վէրքերը
անկապ ու անդարման են մնացած — ուրիշ բան չէ, բայց
եթէ ազգային ինքնասպանութիւն, դաւաճանութիւն :

Եւ մենք կ'ապացուցանենք թէ այդ սճիրները որո՞նց
կողմէն, ի՞նչպէս և ինչո՞ւ կը կատարուին :

VII

Համրտեան շրջանին երբ կեանքը անտանկի էր դար-
ձած, երբ ո՛չ միայն քաղաքէ քաղաք, այլև գիւղէ
գիւղ, թաղէ թաղ, մինչև իսկ առնէ առն հազոր-
դակցութիւն կատարելն անգամ արգիլուած, հակողու-
թեան, յատուկ արտօնութեան ենթարկուած էր, երբ
կատարուող սճիրներու և նախսճիրներու դէմ բողոքի
ձայն բարձրացնելն անգամ եղեան կը համարուէր, երբ
գիւղեր ու քաղաքներ կ'ամայանային, բիւրաւորներ կը
տարագրուէին, հազարաւորներ կրօնափոխ կ'ըլլային,
կաթոլիկ կամ Լատին հաւատորմներ, բոլոր յարանուա-

նութիւններու միտինարներ Տէրօջը այգիին մէջ իրենց առատ հունձքը կը քաղէին, երբ կեանքը իր անտանելիութեան ծայրագոյն աստիճանին էր հասած ու սխտեմադիկ կերպով Տաճկահայոց բնաջնջում կը կատարուէր, — ահա՛ այդ ժամանակ, երբ Յեղափոխական Կուսակցութիւններն ու քաղաքական խմբակցութիւնները քաղաքակիրթ աշխարհի առջեւ բողոքի ձայներ կը բարձրացնէին, կատարուող ոճիրները կը նկարագրէին և կը պատմէին, երբ այդ բոլոր դժոխային պայմաններուն մէջ հնար կը գտնէին սահմաններէն ներս սողոսկելու, վրէժի ու ըմբոստացման շարժումներ կը կատարէին, տանջարաններու մէջն անդամ, կոխադան բարձրացած բուկներուն անդամ գահիճներու երեսին կը նետէին ոճրի անարգանքները, բռնապետութեան գահավէժին մէջ կը մարգարէանային աղագայի, այս օրերու յոյսը ապրող ու դալարուողներուն, — ահա՛ այդ ժամանակ, կ'ըսեմ, Պատրիարքարան, հողեւորականութիւն և պղտական Մամուլ՝ միահամուռ կը դատապարտէին Յեղափոխութիւնը և յեղափոխականները, կ'աստուածացնէին Համիտը, երկիրը դրախտ ու հայութիւնը երախտապարտ կը հուշակէին՝ ոչ միայն եկեղեցիի բեմերէն, այլև ամէն տեղ, յայտնի թէ գաղանի ամէն շրջանակի մէջ :

Կոնդակները կը տեղային հլու հպատակութեան : Եւրոպական Գահիճներուն, միջազգային վեհաժողովներուն՝ բռնապետութեան մասին գոհունակութեան պատրիարքական պաշտօնական հաղորդադրութիւններ կ'ըլլային : Կը պնդէին թէ յեղափոխական-քաղաքական կուսակցութիւններու և խմբակցութիւններու բողոքներն ու գործերը Ազգի կամքին ու ցանկութեան հակառակ են . . . :

Ահա՛ թէ ի՛նչ կը նշանակէ Պատրիարք ու Պատրիարքի անձնական հեղինակութիւն :

Ու տեղի ունեցած վերջին ժամանակներու բոլոր աղ-
ուակներն ու խեղաթիւրումները ուրիշ ձգտում չեն կա-
րող բովանդակել՝ բայց եթէ միևնոյն բէթիմին վերադար-
ձը, նոյն դժբաղդ օրերու վերապրումը :

Այս երկրին մէջ մարդիկ անով են աներ ու ապրեր :

Ես ինքս ալ կրած եմ բռնապետութեան շրջանի
դժոխային պայմաններու ազդեցութիւնները, կրած եմ
ֆիզիքական ու հոգեկան ճնշումները, առանց արժանի
գործը կատարած ըլլալու, ենթարկուած եմ մահուան
վճիռներու, ուստի և բմբունելով մարդկային՝ մանաւանդ
դարերու սարկութեամբ ապրող ժողովրդի հոգեբանու-
թիւնը, կ'ընդունիմ թէ ամէն մէկ անհատէ կարելի չէր
սպասել և պահանջել բողոքարկուի քաջութիւնը, ըմբոս-
տանալու հերոսութիւնը, Յեղափոխականի զոհարերու-
թիւնը : Կ'ընդունիմ թէ շատե՛ր ու շատե՛ր իրենց կաշին
միայն կարենալ պահպանելու համար, իրենց կաշուին մէջ
սմբելու, լռելու, զգուշաւոր մնալու, կասկածի չենթար-
կուելու հնարքին դիմել ստիպուած էին :

Կ'ընդունիմ թէ այդպէս սմքած, չեզոքացած, լը-
ռութեան մատնուած, ամէն օր, ամէն բողոք ներքին հո-
գեկան տանջանքներ կրելով հանդերձ, Երկրին մէջ մնալ
ու առկալն ալ բարոյական որոշ ուժ ու առաւելութիւն
կարող է համարուիլ, բայց չեմ կարող, չեմ կրցած ըմ-
բունել որ սեփական կաշին համար, աչք մտնելու հա-
մար, համակրութեան արժանանալու համար՝ ստէին, շո-
ղոքորթէին, «Շնորհիւ վեհապառ Սուրբանին» նախերգան-
քը «ՀԱՅՐ ՄԵՐ»-ի կարգ դասէին, Յեղափոխութեան
մարտիրոսները լուսանքի ենթարկէին :

Չեմ կարող և չեմ կրցած ըմբունել թէ բնաջնջման
այդ շրջանին, ենթադրենք ակամայ լռելու, ակամայ ան-
գործունէութեան դատապարտուածները, պաշտօնական

հանգամանք, պարտականութիւն չունեողները, Եկեղեցիի պաշտարան Հայրերը երեք հարիւր հազարներու Գահճին՝ իրրեւ բարերար, աստուածընարեալ, բարութեան տիպար, ամենողորմ ու ամենագութ —, փառքի ու յաւիտենական արեւչատութեանը համար՝ Հայկական Եկեղեցիի մէջ օրհնութեան ու բարեմաղթութեան արժանայնելը բաւական համարելով, յեղափոխութիւնն ու յեղափոխականները ազգին ու հայրենիին համար իրր անէծք ցոյց տալէ, երբեմն ալ հրապարակով դատապարակէ յետոյ՝ տարին մէկ քանի անգամ երթային նոյն Գահճին պատուանդանը համարելին, ամենահաւատարիմ հպատակութեան և երախտագիտութեան զգացումները յոտս կայսերական գահոյից նուիրէին :

Բացասութիւնները ցանցառ ու միշտ յարգելի են :
Բայց . . . :

Բայց, քանի՛ քանի վարդապետներ, առաջնորդներ իրենց գիրքը, պաշտօնն ու աղղեցութիւնը կը պահէին, կը շարաշահէին՝ իրենց վայել ստիկանական սերտ յարարութիւններու շնորհիւ . . . :

Քանի՛ քանիներ՝ ազգային շրջանակներու մէջ պատճառաւարելը կառավարական շրջանակներու բարեհայեցողութեան արժանանալու ի նպաստ գործածեցին :

Եւ չեմ խօսիր արհեստով ժողովներու, խաֆիէներու մասին :

Այս երկրին մէջ ապրողներու յայտնի է թէ մեկաւ պիտի ի՛նչ թանկագին բազդաւորութիւն կը համարուի, թէ ինչ բազմագիտի միջոցներ ի գործ կը դրուին այդ բազդաւորութեան արժանանալու համար : Ինձ նմաններուն անհնար է մանրամասնութիւններուն ծանօթ ըլլալ ու նկարագրել :

Եղաւ որ, անհաւատալին, աներեւակայելին կատարուեցաւ :

Սահմանադրութիւնը վերջոյտարարուեցաւ :

Տարադիրներն ու յեղափոխականները ազատ մուտք
ունեցան :

Մէկ ակնթարթի մէջ դերերն ու լեզուները փոխ-
ուեցան :

Յեղափոխութիւնն ու Յեղափոխականներն անիծող-
ները՝ դանձոք դրուատողն ու ծախահարողը եղան :

Համիտին օրհներգուները՝ անոր անիծողները դար-
ձան :

Հայրենիքի աւերակները նո՛ր միայն յիշուեցան :

Հայկական մարտիրոսադրութիւնները նո՛ր միայն յի-
շողութեան մէջ ծնան :

Երեմիական ողբերն սկսան :

Բոլորն ալ ազգասէր, բոլորն ալ հայրենասէր, բո-
լորն ալ ազգային դատի սրտապան, հարատահարութեանց
դարձան տանելու ցաւովն ու անհշտը բռնուած :

Բայց բոլորն ալ երէկուան նոյն մարդիկը, նոյն
դէմքերը :

Որո՞ւն հաւատալ . . . : Երէ՞կ կը տռէին թէ այսօր :
Երէ՞կ կը դաւադրէին թէ՛ այսօր :

Կեանքը ցոյց տուաւ որ անոնք կը տռէին, կը սրբ-
բապղծէին, կը դաւադրէին թէ՛ երէկ, թէ՛ այսօր :

Երէկ անիծելն էր դիրքի, սպառօնի, բազդի ար-
ժանանալու միջոցը, ուստի ա՛յն գործ կը դրուէր :

Այսօր օրհները կը համարուի նոյն նպատակին հաս-
նելու ճանապարհը, — անո՛ր կը հետեւին :

Անոնց համար ազգ, հայրենիք, կրօնք, եկեղեցի,
հաւատք, համոզմունք, մաքրութիւն, սրբութիւն, ի-
րենց իմաստովը գոյութիւն չունին : Բառեր են անոնք՝
որ սրտի վրայ չեն գրուած ու չրթունքներու վրայ ի-
մասաւ ունենալէ դադրած են :


Անոնց համար բոլոր ճամբաներն ալ Հոռոմ կը տանին, և Հոռոմը իրենց անձնական գծուծ շահերն են, ուրոնց համար ամէն գոյն կրելը բոլոր դաւանանքներուն յարիլը, ըստ ժամանակի և պայմաններուն այսօր շոյածին, քծնածին վաղը դաւածաննել, ստել, զրպարտելը անզգալի բնական փոխանցումներ են՝ որ կը կատարուին ու պիտի կատարուին :

Ու այդպէս ալ ըրին . . . :

Այդպէս ալ ըրին ճիշտ այն ատեն՝ երբ քաղաքական կեանքը, աղէտները, ազգային պահանջները ամէնէն աւելի Դաշնակցութեան՝ քաղաքական կազմակերպութեան պէտք ունէին, երբ այդ կազմակերպութեան շուրջը բոլորելով, ներքին հարցերու մէջ բաժանումները ընդհանուր ազգային հարցերու ու շահերու հետ չչփոթելով, կազմակերպուած ամբողջութիւն մը ներկայացնելով պաշտպանելու ու պաշտպանուելու պէտքն ունէինք :

Եւ ահա՛ ճիշտ այդ կենսական բոպէին ազգային ամենամեծ դաւածանութիւնը, ինքնասպանութիւնը կատարեցին հասարակական զգացումներէ, պարտականութեան զխտակցութենէ զուրկ թշուառականները, վերըստին լեզու փոխեցին, ի դէմս Դաշնակցութեան, Հ. Յ. կազմակերպութիւններու, կուսակցութիւններու դէմ արշաւանք սկսելով, ուժերը ջլատելու աշխատելով, հասարակական-քաղաքական կեանքը թունաւորելու, անդարմանելիութեան մատնելու համար ո՛չ մէկ սրբութեան չինայելով :

Ի՞նչ պատահեցաւ, ինչո՞ւ այս շրջումը :



VIII

Որո՞նք են այս յանցապարտ սճրագործութիւնը կատարողները :

— Պոլսական Մամուլը, հազուադէպ բացառութեամբ, և հոգեւորականութեան վարկարեկուած տարրը, լռելեայն իրենց հետ գործակից ունենալով հասարակական իրենարկութիւնները իրենց անձնական շահին ծառայեցնող, անոնց մատակարարութիւնը իրենց շահագործումի մենախորհրդարձնող, իրենց գոյութեան ազատանարանը չլինող դասակարգն ու մտքի, սրտի մնանկները :

Տեսանք թէ ի՞նչ է այդ Մամուլը :

1908ի շրջանին, երբ դեռ նոր էր հաստատուած ազատութիւնը, ճանչնալով հանդերձ այդ Մամուլին ուզին ու ծուծը, բոպէ մը միամտութիւնը ունեցանք ենթադրելու՝ որ բանապետական միջնորդութիւնը մէջ կատարուածները՝ զուցէ ակամայ, թէև անարգարանալի, — ազատութեան արշալոյսէն յետոյ՝ մարդիկ խելացութիւնը կ'ունենան յախտենապէս թողուլ ու նոր կեանքի թելադրած աշխատանքի, ուղղամտութեան, քաղաքացիական պարտաճանաչութեան ճանապարհին հետեւիլ :

Այդ միամիտ յոյսով, նախաձեռնութիւնը ունեցանք Մամուլի Միութիւն կազմել տալու համար հուաքոյթի նրաւ իրել : Բացի Բիւզանդիոնէն, բոլորն ալ ներկայացան, արձանագրութիւններ կազմուեցան և որոշումներ տրուեցան : Այդ որոշմագրերէն մէկուն մէջ բոլորն ալ իրենց ստորագրութիւններով հաստատեցին մինչև այն ատեն իրենց բարոյական անկումը : Այդ անկումը չվերանորոգելու, յետագարձ քայլեր ընելու յանդգնողները դատելու համար Մամուլոյ Ատեանի կազմութիւնն ալ որոշ-

ուեցաւ : Բիւզանդիոնն առանձնապէս իր էջերուն մէջ մեղայականը գրեց , Համիտեան բէժիմի յատուկ լեզուին և ուղղութեանը համար :

Կեանքը ցոյց տուաւ որ իրենց դատապարտութիւնը բարոյական պատկերը ստորագրելու ժամանակ ձեռքերնին շղթայացող գրչի վարձկան այդ շահախնդիրները ևս արժանապատուութենէն ալ ո՛րքան զուրկ են , որովհետև խոստովանիլ , խոստանալ , պայմանադրել , ուխտել , ստորագրել և գրժել՝ միեւնոյն չափով սովորական հեշտութիւններ են իրենց համար :

Այդպէս ալ եղաւ : Հազիւ մէկ քանի օր անցած իրարու դէմ ժուռնալճիութեան , շանթաժներու բանակախուր բարձրացնելով , զիրար բզկտել սկսան :

Ճիշտ է որ այնուհետև , այն օրերու թերթերէն ոմանք դադրեցան , նոր անուններ երևան եկան , բայց տարրերը նոյնը մնացին և փոխուածներն ալ համանման փաստեր տուին իրենց բարոյակիցներուն հետ ներդաշնակ ըլլալու տեսակէտէն :

Իրրև հրապարակախօս՝ նոր վերերևեցողներէն մէկը «Միաժան»ն էր , որուն տէր և խմբագիրը Ալզոյին ժողովին պատգամաւոր ևս ընտրուելու արժանացաւ և որուն վաւերացումը սակայն սակախ կը մնայ՝ ազգային դատաճանութեան ծանր մեղադրանքով :

Բայց հետագրքրականը , մանուսնդ բարոյականի չափազանց բնորոշիչն է՝ Միաժանի և Բիւզանդիոնի միջև բացուած «կաշառը դուն ուղեցիր , ևս չուղեցի . ո՛չ , կաշառը դուն ստացար , ևս չստացայ»ի փոխադարձ ամբաստանութիւնն ու բանակախուր :

Այդ ամբաստանութեան մէջ արամարանութիւնը անպայման Միաժանի կողմն է : Բարոյականի չափազանց բնորոշ մասն է Բիւզանդիոնի պաշտպանողականը :

Խնդիրը կը դառնայ դարձեալ տխրահոգի գայթակ-
ղութեանց անսպառ գանձարանին՝ Մաղխականի շուրջը :
Բիւզակնիդն կը խոստովանի թէ «գրամ պահանջեր է,
բայց պահանջեր է՝ հաշիւ հրատարակելու համար» :

Սա բացարձակ խոստովանութիւն է՝ կաշառ պահան-
ջած ըլլալուն : Բայց մարդոց մէջ, Ազգային երեսփոխանի,
հրապարակագրի մէջ բարոյական ըմբռնումները այնքա՞ն
վատասերած են՝ որ մեր ըմբռնած կաշառի իմաստը անոնց
համար վարձի նշանակութիւն է ստացեր, և հետեւորար
զայն հրատարակով խոստովանած միջոցին՝ իրենց համար
այպանելի ոչի՞նչ չեն գտներ :

Հաշիւը Երուսաղէմինն է, այդ հաշուի մէջ ամբող-
ջանուողը Երուսաղէմի մէկ միարանը կամ պատասխա-
նատու պաշտօնեանն է : Հաշուին լուսարանութենէն, ոչ-
լուսարանութենէն օգտուողը կամ տուժողը Երուսաղէմը,
կամ աւելի ճիշտը Ազգն է : Իրատարակագրի, Երեսփո-
խանի պարտականութիւնն է թղթի մը կտորէն անդամ
օգտուիլ՝ ինդրին վրայ լոյս սփռելու համար :

Բայց ա՞հ՝ խմբագիրը, երեսփոխանը կը խոստովանի
թէ ինք գրամ պահանջեց ազգային շահերու լուսարա-
նութեան նպաստելիք տօքիւմաններէն օգտուելու, հրա-
պարակագրի, Մամուլի պարտականութիւնը կատարելու
համար :

Ենթադրենք որ այդ տպագրել տաճարկուած հա-
շիւը՝ ի նպատակամ աննպատակ ազգային շահերու լոյս
պիտի չսփռէր, այլ պիտի ծառայէր միմիայն ամբաս-
տանեալ միարանին, և կազմուած էր ճշմարտութիւնը
քողարկող, խեղաթիւրող կերպով : Այդ պարագան դարձ-
եալ ի նպատակ Ազգին կ'ըլլար և կը մերկայցնէր մեղա-
պարար : Այդ փաստէն օգտուիլ առաւելապէս Հրատա-
րակագրի, Երեսփոխանի պարտականութիւնն էր :

Բայց նոյն խմբագիրը, նոյն հրատարակագիրը, նոյն երեսփոխանը դրամ կը պահանջէ ամբաստանեալէն՝ անոր դէմ փաստեր հրատարակելու համար:

Ո՛ր կողմէն ալ նայինք, ո՛ր կողմէն ալ քննենք, այդ ձեւ պահանջին անունը կաշտոխ է, Կաշա՛՛ք, հրատարակով խոստովանուած:

Բայց Բիւզանդիոն մինակը չէ: Մաքսուտեան հռչակաւոր նամակին մէջ որոշ, յստակ կերպով յայտնուած էր «Ժամանակ»ին կաշառ տրուած ըլլալը: «Մեծ զոհողութիւն պահանջեց: մէկ մասը սուխ» իմաստն ու բովանդակութիւնը ունէր այդ յայտնութիւնը: Քասիմ չուրանար. Բիւզանդիոնի ոճով կը խոստովանի պահանջած ըլլալը՝ պատրուակելով թէ «հաշիւը հրատարակելու համար էր պահանջածը»:

Քասիմ եւս հրատարակախօս ու երեսփոխան է: Բիւզանդ Քէչեան և Քասիմ միեւնոյն դիրքին և պատրուակարանութեան մէջ կը գտնուին, այն տարբերութեամբ՝ որ Քասիմինը աւելի ծանր է:

Գիտենք թէ լրագրութեան մէջ տողերով հրատարակուելիք — դրամով հրատարակուելիքները, — հրատարակի վրայ բնդունուած որոշ սակագին ունին. սակարկութիւնը սակագինէն զիջում կը նշանակէ և անունը զոհողութիւն չէ: Բացի այս, քանի որ Մաքսուտեան նամակին բովանդակութիւնը կը հաստատէ, ենթագրենք բոպէ մը, որ կարենանք հաշտուիլ նաշուի հրատարակութեան հաւար զոհողութիւններ պահանջելու մտքին հետ. բայց այդ նամակին մէջ ըսուած է նաև թէ «մաս մը զոհողութիւն ըրած է», այսինքն տուեր է, իսկ հաշուի հրատարակութիւնը թերթին մէջ չէ եզած՝ այլ միայն ամբաստանեալի պաշտպանութիւնը: Ապա, ուրեմն այդ ստացուած զոհողութիւնը ի՞նչու համար էր:

Սա կաշա՛ն է, բացարձակապէ՛ս կաշառ :

Մինչևեւ այս յայտնութիւնները հրապարակ գալը, Ազգային Ժողովի Երուսաղէմի հաշուական Խորհրդարանական Յանձնաժողովին բերած տեղեկագրին մէջ ցոյց էր տրուած «Մամուլի վճարմունք» անունով ծախքի գումար մը :

Ցարդ ո՛չ ոք, ո՛չ մէկ երեսփոխան չհետաքրքրուեցաւ թէ այդ ի՞նչ Մամուլի գումար է : Վաղճւց, շա՛տ վաղուց Երուսաղէմի զոհողութիւններու հոչակը դոյու-թիւն ունէր հասարակութեան մէջ : Տեղեկագրին այդ մասը՝ մութին մէջ թողուած, պէտք էր հետաքրքրութիւն շարժէր և ստիպէր մերկացնելու այդ գումարին բնութիւնը :

Այս երկրին մէջ հասարակաց վտանգուող շահերուն համար «դէշ մարդ» չըլլալը, իսարեի մաւրահաք ընելը քաղաքացիական առաքինութեան կարգ է անցած, բայց ա՛նա՛ Մաքսուտեանի նամակը լրագրական յարաբերութիւններու, զոհողութիւններու համար եկաւ լոյս տիտելու : Երկրին մէկ ծայրէն միւսը ժողովուրդը, հանրութիւնը ցնցուեցաւ : Այդ նամակը նոյնութեամբ Ազատամարտի մէջ հրատարակուելով, լախտի հարուածը տուաւ :

Այս մասին Լ՛նդհանուր Ժողովը դարձեալ լուութիւն կը պահէ :

Բայց աչքի առաջ պէտք է ունենալ որ Հայրենիքէն յետոյ, Դաշնակցութեան, Ազատամարտի դէմ Պոլսական Մամուլին արշաւանքը սկսաւ ճիշտ այդ հոչակաւոր նամակը հրատարակուելէն անմիջապէս վերջ : Արշաւանքը սկսաւ ճիշտ այն թերթերուն կողմէ՛ որոնք առաջ և յետոյ կապ են ունեցեր այդ անսպառ գայթակղութեան գանձարանի հարցին հետ, որոնք յիշուած են եղեր այդ նամակին մէջ :

Պարզ է, դժուար չէ տեսնել թէ Մաքսուտեան մեքենան ինչն՛ր կը լարէ, ինչն՛ր կը շինէ, սրպիսի ուժեր ի գործ կը դնէ և իր զոհողութիւնները մինչև ս՛ւր կը հասցնէ :

Մաքուր մարդիկ, անկաշառ երեսփոխաններ անմիջապէս Լ՛նդհանուր ժողովէն պէտք է պահանջէին քննութիւն և դատաստան՝ իրենց պատիւը փրկելու համար : Սահմանադրական երկիրներու մէջ այդ կարգի գրաւոր փաստերով ծանր ամբաստանութեան ենթարկուող երեսփոխաններ քննութիւն պահանջելով հանդերձ՝ նախ պարտք կը համարին հրաժարական տալ, հետևեալ պատգամաւորի աթուէն, քննութեան բացարձակ անաշատութեան նպատակու համար .

Բայց մե՞ր մէջ . . . :

IX

Մենք տեսանք թէ Սողիմականները բանակցութեան և սակարկութեան մէջ են եղեր, և երբ Մաքսուտեան նամակի հրապարակումովը պարզուեցաւ զաղանիքը, երբ այդ նամակին հրատարակութիւնը եկաւ վերջնական հարուածը տալու Լ՛նդհանուր ժողովի մէջ Սողիմական պաշտպաններուն, երբ չկրցան արգիլել Յարութիւն Պատրիարքին պաշտօնէ հեռացուիլը ու Տեղապահի ընտրութիւնը, երբ տեսան Վարչութեան անսայթաք հետապնդումը, ամբաստանուած միտքաններէն զլիսուորները Վանքէն դարս բերել տալու համար արուած որոշումը՝ սրուն իրողործումէն յետոյ պիտի բացուէր թալաններու

ամբողջ չափն ու տարածութիւնը, սկսան ի դարձ դնել յուսանաւորական ամենամեծ շարժումը, պաշարուածներու վերջնական ճակատամարտը՝ պաշարողները ճեղքելու և անցնելու համար :

Նորմալ կեանքի մէջ հոյ բնթերցողները մէկ քանի թերթեր միանգամայն չէին ապրեցնէր . հրատարակի վրայ ամենատարածուած թերթը, ամէնէն աւելի փնտուռածն ու կարգացուածը, հետի՛ լուրերու տոպրակ ըլլալէ՝ ըսկըզբունքներ սրարդպին ու սկզբունքի առաջնորդողը, պետական և սոցալային գործերու համերաշխ տեսակէտէն իրաւունքներ ու արդարութիւն պաշտպանողը . հեղինակաւոր թօնով պահանջներ գնողը Ազատամարտը կ'երևէր : Երկու թերթեր իրենց գոյութեան ճգնաժամը կ'անցնէին, և մենք անոնցմէ ստացանք առաջարկներ՝ իրենց թերթերը դնելու, այն է՝ անեցածնին, մամուլ, բաժանորդ և յայտարարութիւններ մեզ ծախելու համար :

«Հայրենիք» Ազատամարտի քառորդն անգամ սպառում չունէր . իր արամողրութեան տակ դրուած դրամադրութիւնը սպառեր էր, հիմն «Հայրենիք»ի հմայքը չէր օգնէր իրեն, ստպարէզէ ևս քաշուելու վտանգը անխուստօրէի էր :

Հին Հայրենիքի հմայքը Շահնազարով չէր կազմուած : Մօտ տասնևհինգ տարուայ մէջ կեանքը աճագին փորձութիւններ, աճագին փոփոխութիւններ և նոր պահանջներ էր դրած, նոր պայքարի արահտան էր բացած : Անոնք՝ որ կեանքի հետ առաջ էին անցեր, և անոնք՝ որ կեանքի նոր ծնունդներն էին, անոնց պայքարի ժամադրաւայրը Ազատամարտն էր եղած :

Երկու ճանապարհ կար, — կամ՝ պայքարողներու շարքերէն օգտուիլ, և կամ՝ ևս մնացողներու, և անոնց բազմերանդներուն հետ դաշնակցիլ : Առաջիններէն պէտք

էր խնդրել ու միեւնոյն ժամանակ հետեւիլ անոնց . մինչ-
դեռ միւսները՝ իրենք էին խնդրողը . որոնց լիարբը կա-
րող էր դառնալ Շահնազար : Առաջիններուն հետեւելով
դերը աննշան մնալու էր և աշխատանքը շատ . իսկ միւս-
ներուն հետ աշխատանքը քիչ և լիարբի դերը անձնա-
սիրութիւնը շոյող կը թուէր . մանաւանդ թէ ատոր
դրդող ու քաջալերողներ ալ պակաս չէին :

Եւ Շահնազար ընարեց հեշտը . փաղաքշակահնր :
Ամէն յոյս կը մնար ուրեմն անցեալին հմայքին շահա-
գործութեան վրայ :

Պարագանները շա՛տ նպատաւոր էին : Ատանայի
աղէտը , Կառավարական-Իթթիհատեան թերութիւններ ,
հասարական սկեպտիկ հոգեբանութիւն , վիրաւորուած
հոգի ու յուզուած արամադրութիւն . . . : Ի՛նչ աւելի
նպատաւոր հոգ՝ շահագործելու այդ արամադրութիւնը
ու անոր ջգտնական ձգտումները , առանց հաշիւ տալու
հետեւանքներու մասին , առանց չափելու , վերլուծելու
չբջտապատող պայմանները : Եւ ի՛նչ աւելի ցնցիչ՝ քան
Բաշնակցութեան դէմ հրապարակ դուրս գալը , անոր
դէմ յարձակողական դիրք բռնելը . . . : Եւ ամբոխը ,
տարիներու ընթացքին միայն անհաշիւ , իննիթ ու խելատ ,
սակաւսսիտեղ լուրերով կերակրուած , գարձեալ հակուե-
ցաւ , տարուեցաւ իր այդ արամադիր նեարդներով , ու
իր զգաղումներուն մէջ զինքը վիրաւորողներ գանելու ,
տեսնելու ենթադրութիւններով :

Ամբոխը ե՛րբ և ս՛ւրտեղ այդ թիւրիմացութիւննե-
րուն , իր իսկ բարեկամ անձնազոհներուն դէմ չէ ծառա-
ցեր իր սեփական դահիճներուն թելադրութիւններով . . . :

Բարերու փորձուած թաքթիքն էր , որուն անգամ
մը ևս գործադրութեան պատիւը ժախտակալ-ակից «Հայ-
րենիք»-ին կը պատկանի : Հետեւանքը արդիւնաւէտ էր .
Հայրենիք սկսաւ փնտռուիլ , կարգացուիլ :

Եւ այս երկրին համար տարօրինակ բան՝ Գաշնակ-
ցականներ, Ազասաւուրս չէին պատասխաններ : Այս լու-
թիւնը երկու բան կարող էր ենթադրել տալ, — կա՛մ
այն է՝ որ բարդուող մեղադրանքներուն մէջ ճշմարտու-
թիւններ կան, և կամ այն է՝ որ Գաշնակցութիւնը ուժ
չունի, անոր համբաւը միայն երեւակայական ուժի ար-
դիւնք է :

Հայրենիք կամ Շահնագար այդ կողմէն ալ զինք
ապահով կը համարէր : Ան երկար տարիներու փորձա-
սութեամբ գիտէր՝ թէ Գաշնակցութիւնը միշտ լու-
թեամբ, միշտ արհամարհանքով է վերաբերուած դէպի
ամէն գոյնի մարդոց լուտանքներն ու խմբանքները :

Հայրենիքի արդիւնաւէտ ազգանշանը իր արծազան-
գըն ու հետեւորդները ունեցաւ : Եւ սո՛ւր բոլոր հին ու
նոր գրչակները, բոլոր շահագործողները գորտային աղա-
զակ բարձրացուցին իրենց ճահիճներէն, անհաշիւ ու
անպատկառ և հասան մինչեւ մասնութիւն :

Ու քիւրաժները սկսան բարձրանալ, միտի թեւա-
դրիչը այդ ամէնուն : Զուտ անձնական, գծուծ, 10 փա-
րայի շահր . . . :

Եւ ասոր համար մի՛նչև մասնութիւն : Այո՛, մի՛նչև
մասնութիւն :

Հասարակական շահերը, բարոյականը հինգ փարայի
անգամ արժէք չունին այդ շահին տուջև :

Փաստերը . . . :

Մեծազորող լուրեր տալու նոյն ախտէն բնուած
թերթերը՝ հրապարակով գրեցին թէ Պատրիարքարանի
Ատանայի պատուիրակութիւնը իր թղթերը օտար հիմ-
նարկութեան մէջ պահելու ստիպուած է. և լուրը կը
արուէր իբրև Պատրիարքարանէ քաղուած : Հետեւանքը
սո՛յն եղաւ որ քիչ մնաց պատուիրակութիւնը Զինուորա-

կան Ասեանին յանձնուէր : Սա եթէ մասնութիւն չէ՛ր ,
հապա ի՞նչ էր :

Ազգային ժողովը դանիակ , բացարձակ զննիակ
նիտա կը գումարէ . յայտարարէ թերթը ցնցող լուրով
թիրամ ունենայ , Ազգային Երեսփոխան կամ Քարտուղա-
րութիւնը բարեջօծարութիւնը կ'ունենան «Օրագիր»ին և
«Լա Թիւրֆի»ին հաղորդելու ա՛յն մանրամասնութիւնները ,
որոնցմէ հաւանաբար ազգային շահեր վտանգուած են և
փաստերը խեղաթիւրուած : Սա եթէ մասնութիւն չէ՛ ,
հապա ի՞նչ է :

Աստուայի Գժօխքին մէջ , ի միջի սյլ բազմադիմի
աղէաներու ու մտախրոսագրութիւններու , կլինելու պա-
տիւներ են բանաբարուած . խակ թերթի թիրաժին ախ-
տէն բանուածները խղճահարութիւնը շունեցան այդ տա-
րաբաղդներուն անուններն ալ հրապարակ դնելու , որպէս
զի այդ թշուառները իրենց ամուսիններուն երեսը տես-
նելու բախտէն ալ զրկուին . ընտանեկան օճախը բարո-
յական կապերէն ալ քակուելով՝ քանդուի :

Թող պատասխանեն , ի՞նչ է այս վարմունքին անունը :

Գաշնակցութեան Ե . Լ՛նդհանուր ժողովն էր գու-
մարուած : Այն Երկրին , այն ժողովուրդին , այն կառա-
վարութեան — որ բարեացակամ սասնջականութիւն էին
տուած իրենց վաղեմի բարեկամ կուսակցութեան — թեր-
թերը ինչ որ հաւաքոյթի մը մասին ակնարկներ ընելով
հանդերձ , քաղաքական առաքինութիւնը ունեցան անուն
չտալու , պարզ ու որոշ չցայտնելու , և սակայն մեր քեր-
քերը , Պորակակն Մաւնուլը ոչ միայն ուշադ ուշմազ սու-
տերով ու խեղաթիւրումներով չբաւականացան , այլև
կենսիկաւախօններով յականէ յանուանէ մատնանշումներ
ըրին . ո՛չ միայն մատնանշեցին , այլև այնպիսի կասկած-
ներ հրաւիրող փրովոքասիօններու ոճ մը գործածեցին , որ

ուսական ոստիկանութիւնը չուշացաւ ատոնցմէ օգտուե-
ու և իր լրտեսներու վճռակը փութացնելու :

Ըսէ՛ք, սա մասնութիւն չէ՛, հապա ի՞նչ է :

«Իրզանդիոն» Անթուանի կողմէ նորնտիր Հայրա-
փետին ուղղուած շնորհաւորական ճառին որոշ մէկ մասը
լազանամիտ ոճով մը յիշատակելէ յետոյ՝ սուսական կա-
ռավարութեան կողկասի մէջ ի գործ դրած հալածանքը
Բաշնակցութեան և Բաշնակցականներու յայտնած այդ
խորհի մտքերուն վերադրելով՝ իրրեւ հալածանքներու
պատճառ ու պատասխանատու Բաշնակցութիւնը կամ
Բաշնակցականները մեղադրեց :

Սա եթէ մասնութիւն չէ՛, հապա ի՞նչ է : Չէ՞ որ նոյն
օճը կը գործածուէր և Համիտի շրջանին :

Բաշնակցութիւնը այնտեղ, կողկասի մէջ, 19 ամիս
կրիւ է մղած սուսական կառավարութեան դրդումով
տաքի կանգնած մահմետական սղէտ ամրոխին դէմ. Բաշ-
նակցութիւնը ինք ևս տաքի է կանգնեցուցած ամրոզջ
կողկասի Հայութիւնը, ետ է խլեր ազգային զանազան
կալուածներ, ստիպեր է սուս կառավարութեան զիջիլ և
թողատրել ազգային վարժարաններու վերաբացումն ու
ազգային կրթութիւնը. մասնակցեր է Լ՛նդհանուր Յեղա-
փոխութեան մէջ ընդդէմ Բանապետութեան, ու այս
ամէնուն բնական հետեւանքով՝ սէաքսիօնի վերադարձի
այս շրջանին, ինչպէս բոլոր այլ բաղմացեղ՝ սուս, լեհ,
Ֆինլանտացի, վրացի, թուրք, և այլն բոլոր մար-
տիկներն ու ազատատէրները՝ Բաշնակցութիւնն ալ,
խինապաշտպանութեան ռճիրը գործած կողկասեան հայ
ժողովրդին մէկ մասն ալ հալածանքի են ենթարկուած
կողկասի մէջ նոյն Բանապետութեան, Յարիզմի կողմէն :
Եւ ս՛ա՛ Բիւզանդիոն կը մեղադրէ Բաշնակցութիւնը և
Բաշնակցականները՝ իրրեւ պատճառ կողկասեան դժբաղ-

դու թիւններուն, աւելցնելով թէ Դաշնակցականները
ըսածներուն ու գործելակերպին հետեւանքով՝ ուս-
կառավարութիւնը բնականաբար պիտի հետեւի իր հա-
լածանքներուն :

Համիտեան շրջանին եւս նոյնը կ'ըսէին Բիւզանդիոն
և ուրիշներ, Պատրիարքարան և բոլոր «Ազգասէրներ»ը :
Անոնք ամէնքը տաճկահայ տառապանքներու պատճառը
և աղբիւրը կը համարէին խռովարարները, չարագործները,
այսինքն յեղափոխականները :

Ի՞նչ տարբերութիւն համիտեան շրջանի Բիւզանդիոնին
լեզուին ու այսօրուայ լեզուին միջև : Էապէս ոչի՛նչ,
միշտ միեւնոյնը : Տարբերութիւնը անոր մէջն է միայն,
որ յեղափոխութեան շրջանին չէին համարձակեր գոնէ
փրովոքասիօններ բնելու, իսկ այժմ, շնորհիւ Մամուլի
ազատութեան, հանդէպ ուսս կառավարութեան՝ Դաշ-
նակցութեան վերաբերմամբ գրգռիչ խմբագրական-
ներ նուիրելէ չեն քաշուիր. և ի հարկէ ուսս կառա-
վարութիւնն ալ նկատի կ'ունենայ այդ ամէնը անոնցմէ
օգտուելու, գուցէ վարձատրելու համար :

Ծիւածան և Բիւզանդիոն այս կէտին վրայ դաշնակ-
ցած հրապարակ եկան : Բիւզանդիոն իր փրովոքասիօն-
ներով, Իթիօհատեան համաձայնութիւնը ներկայացուց
իրբև թէ Դաշնակցութեան համար իր գոյութիւնը, ինչ
զնով ալ ըլլայ, պահելու միջոց մը . իսկ Ծիւածան պա-
հանջեց Դաշնակցականները ենթարկել Լ՛նկերակցութեանց
օրէնքի Կրդ յօդուածին և սերսերիներու օրէնքին :

Մենք այս ամէնը կ'արձանագրենք և չենք մոռնար :

Բայց պատճառները և դերակատարները ասով չեն
վերջանար :



X

Հազարաւոր տարիներու պատմութիւնը թղթատե-
ցէ՛ք, ժողովուրդներու անկումի ու բարձրացումի շըր-
խանները, կեանքը ուսումնասիրեցէ՛ք, ցաւերու և տա-
ւապանքներու էութիւնը և պատճառները վերլուծե-
ցէ՛ք. — կը գանէք պատկերը միեւնոյնը. — Ամբոխը ազէա
ու նախապաշարուած, որը կը շահագործեն անոր աշխա-
տանքովը ապրող տարրերն ու դասակարգերը :

Այդ շահագործողները ըլլան աւատականներ, իշխող-
ներ, դրամատէրեր, կրօնականներ, կալուածատէրեր,
դրողներ, քաղաքագէտներ, ինչ դասի և դասակարգի ալ
պատկանին, բոլորին ալ էութիւնը միեւնոյնն է, եթէ
անոնք արդիւնաւորողներ չեն, այլ շահագործողներ :

Շահագործող է աւատականը, որովհետև իր հայրե-
րու և պապերու յափշտակութիւնով, բիրտ ուժով ձեռք
բերած ընդարձակ հողերը, նուաճած եւ ստրկացուցած
ազգարնակութեան աշխատանքով կանգնեցուցած շինու-
թիւնները կը վայելէ առանց իր կողմէն ո և է աշխատանք
թափելու, առանց անձամբ արդիւնաւորելու :

Շահագործող են այն աւատական իշխողները կամ
բննապետական պաշտօնէութիւնները՝ որոնք իրենց իշ-
խանութիւնը և դիրքը բիրտ ուժով, անխոստովանելի մի-
ջոյներով ձեռք բերելէ յետոյ, իրենց միտքը, խելքը,
աշխատանքը չեն նուիրեր ժողովրդի բարեկեցութեան,
ազգարնակութեան նիւթական ու կուլտուրական զար-
գացումին ի սպաս, այլ իրաւունք կը համարեն իրենց՝
որքան կարելի է շատ մաս վերցնել աշխատաւորի աշխա-
տանքին արդիւնքէն, բազմապիսի միջոյններով որքան

կարելի է շատ ճշել ու իրաւագրկել իր հաճոյքին, կամայականութիւններուն և զեղխութիւններուն ծառայեցնել տալու համար :

Շահագործողներ են դրամատէրերը՝ որոնց դրամադրուինն ալ արդիւնք է աշխատաւորի աշխատանքի, և որոնք միլիոններ ու միլիտոններ կը զիղեն ո՛չ թէ իրենց սեփական աշխատանքովն ու արդիւնաբերութիւնովը, այլ շահագործումով :

Ազգային Հիւանդանոցի, Բերայի կալուածներու, Ազգային կտակներու, Թաղային մատակարարութիւններու քննութիւնները որպիսի՛ զեղծումներ ու շահագործումներ պիտի բանային :

Ու այդ տարրը զգաց թէ կը մօտենայ ժամը այդ քննութիւններուն, կը մօտենայ օրը հաշուետուութիւններուն, և սարսափը արեց :

Պէտք էր բոլոր միջոցները դործ դնել ու ի՛նչ գնով ալ ըլլար, պէտք էր հեռացնել այդ վտանգը :

Շահագործողներ են բոլոր այն կրօնական կամ հոգեւորական կոչուածները, որոնք այդ անունները կը կրեն ո՛չ թէ որովհետեւ այս կամ այն կրօնքին մարմնացումը, հոգիներն են, այլ որովհետեւ քաղաքական կեանքի մէջ արիւղ աւատակամներու, իշխանաւորներու նման կը նըստին ժողովրդի վզին վրայ, տքալ կու տան ընչազուրկ թշուառները աշխատանքի բեռան տակ, որպէս զի իրենք յարիրանան և պարարտանան : Ոչի՛նչ ունին սրտի ու հոգիի հետ առնչութիւն, ո՛չ մէկ բան չեն արտադրեր, չեն ստեղծագործեր, միայն ուրիշին աշխատանքը կը շահագործեն ու կը սպառեն : Կամ տգէտ և կամ անհաւատ դերակատարներ են սեղանի վրայ իրենց պաշտամունքին մէջ՝ որուն կամ չեն հաւատար և կամ չեն հասկնար, որովհետեւ, հակառակ պարագային, եթէ հաւատային՝

չպիտի ստէին, չպիտի գողնային, չպիտի դառէին ու դաւաղրէին, չպիտի առէին, չպիտի թշնամանէին, չպիտի վայելքներու մէջ թաղուէին: Եթէ հաւատային, եթէ սիրտ ու հոգի կրէին, պիտի երթային այն տեղ՝ ուր մարդկային թշուառութիւնը կեանքեր կը զրաւէ, պիտի երթային լացողներու արտասուքը սրբելու, տառապողներուն ցուերը ամոքելու, մերկերը իրենց իսկ զգեստներով ծածկելու, քաղցածներուն հետ իրենց իսկ սեփական պատառը բաժնելու, յուսահատներուն յոյս ներշնչելու, լքուածները քաջալերելու և զանոնք կեանքի ուղին առաջնորդելու:

Բայց անոնք զո՛ւրկ հողիի, սրտի բոլոր այս յատկութիւններէն, ուստի և հոգեւորականութեան, կրօնականութեան հետ էսպէս ո՛չ մէկ ամնչութիւն ունին:

Ու այդ դասակարգն է՝ որ ամօթի, պատկառանքի, անձնասիրութեան, արժանապատուութեան բոլոր զգացումներէն զրկուած, հրապարակային քննադատութիւններէն անզամ չազդուեցաւ, ո՛չ Հայաստանի վերջին սովին ու վերադարձող առանեակ հազարաւոր գաղթական թշուառներու, ո՛չ ալ կիլիկեան արկածեալներու համար նիւթական ճնշին օժանդակութիւն մը ցոյց տուաւ, աղէտի վայրը երթալէ հրաժարեցաւ, ու միայն սոլսական շուայտ կեանքին մէջ պարփակուած մնալով ազդասիրութեան կեղծուոր տղազակը բարձրացուց:

Ահա՛ թէ ինչո՞ւ համար այդ բոլոր հակադիր շահերու տարրերը, դասակարգերը միացան, իրենց ընդհանուր թշնամի, հասարակութեան բարեկամ ու անձնազո՛հ Գաշնակցութեան ու Գաշնակցականներու ղէմ:

Ու գիմեցին վաղեմի, հանրամանօթ բոլոր երկիրներու մէջ միեւնոյն տարրերու և դասակարգերու կողմէ գործ դրուող գործեւակերային: Հազիւ էր սկսեր մերկացու-

մը քողարկուած իրականութեան, եւ ահա՛ այդ մերկացու մնեքը կանգնեցնելու, հասարակաց ուշադրութիւնը ուշադրութիւնը ուրիշ կողմ դարձնելու, խեղաթիւրելու համար՝ կրօնի, եկեղեցիի, բոլոր սրբութիւններու անունով փոթորիկն է որ բարձրացու. դարձեալ շահագործելով նոյն ամբոխին սոգէտ՝ բայց բարի. միամիտ, նախապաշարեալ զգացումները:

Շահագործող են բոլոր այն գրողները, մտաւորականութեան դասին պատկանող համարուածները, որոնք արտաքին շարքը միայն ունին, նման այն վաճառականներուն, առևտրական հիմնարկութիւններուն, որոնք հարբատութեան տէր չըլլալով հանդերձ՝ արտաքին ցոյցերու և կեղծիքներու շնորհիւ՝ հարստութեան համբաւը կը ստեղծեն հասարակութեան խնայութիւնները շորթելու և կուլ տալու համար: Այդպէս ալ էապէս մնանկ մտաւորականութիւնը՝ որուն սիրան ու հոգին եթէ ամբողջովին ապականութիւններով չէ պարուրած, ամէն պարագայի տակ՝ դատարկութիւն ներկայացնելով՝ ոչինչ չարտադրեր. ոչինչ չստեղծագործեր, ոչինչ չաւելցներ քաղաքակրթութեան, առաջադիմութեան աշխատանքի կեանքին մէջ, ու միայն կը շահագործէ ամէն գոյնի և տեսակի մըտածողութեանց արտայայտութիւնները, անկապ, յարափոփոխ, անտեղի ու վատասերած կերպով:

Շահագործողներ են աշխատաւորներէն, արդիւնաբերողներէն, ստեղծագործողներէն դուրս մնացած բոլոր շարքերն ու գասակարգերը՝ որոնց անտեսական, հասարակական դիրքը պայմանաւորուած է աշխատաւորներուն, արդիւնաբերողներուն, ստեղծագործողներուն շահագործման հետ, ոչինչ չինելով, ոչինչ ստեղծագործելով, բայց բոլոր շինուածները, ստեղծագործուածները իրենց սեփական վայելքին յատկացնել, առանձնաշնորհել տալով:

Այդ բոլոր կարգի շահագործողները՝ իրենք իրենց մէջ, մ'չ միայն շարքերով, այլ և անհատապէս, հակամարտ շահերու մրցակիցներ, իրարու տնաքանդներ ըլլալով հանդերձ՝ շահակից, դաշնակից, ներդաշնակ և համերաշխ են՝ երբ խնդիրը կը հասնի ճնշուած, նախապաշարուած, շահագործուողներու դարձնուածը, ընդվզուած արգիլելու և մոլորեցնելու գործին:

Այդպէս ալ եղաւ և տարբեր կերպով չէր կրնար ըլլալ նոյնպէս մեր մէջ ինչպէս միշտ, և այս անգամ:

*
*
*

Միայն Ազատամարտի գոյութիւնը չէր որ խրաչնցուց գրչակներն ու գրչավաճառները — Մամուլի զեղծարար եղևոնագործները: Միայն 10 փարաներու գծուծ շահերը չէին որ մղեցին մտքի ու սրտի վատասերածները կատարուած ու կատարուող սուտի, խեղաթիւրումի, կեղծիքի, զրպարտութեան վաղեմի գործելակերպին: Միայն երուսաղէմն ու Աղթամարը չէին որ նիւթեցին դաւերը, լարեցին մեքենան և գործի դրին բոլոր յայտնի ու անյայտ մուխ ուժերը:

Եթէ սահմանադրութեան վերջայտարարութենէն անմիջապէս յետոյ բռնապետութեան այդ սիրաչօժար երկրպագուները խանդավառ ծափահարողը ներկայացան նոր կարգերուն, իրենց իսկ զօհերուն՝ տարագրուածներուն, յեղափոխութեան ու յեղափոխականներուն, — այդ միայն անոր համար էր՝ որ ուրիշ կերպ վարուիլ չէին կրնար:

Յեղափոխութեան յաղթանակի այդ առաջին օրերուն ու ամիսներուն՝ ազատութեան, յեղափոխութեան կողմը չեղողները, բռնապետութեան հաւատարիմ մնացողները անպայման կ'ենթարկուէին բռնապետի բաղդին: Գոյու-

թեան վտանգը կը ստիպէր կեղծե՛լ, կեղծե՛լ մինչև ստուրաքարչ արժանապատուութեան ուրացումի սատիճան :

Կեանքը չէր կարող տեւել միմիայն խրախճանութիւններով, սօներով ու սօնախմբութիւններով : Բռնապետութեան փլատակները, ուերումները պէտք էին վերաշինուիլ, նոր կեանքը, և աշխատանքը վերստեղծուիլ :

Ու վերաշինութեան, ստեղծագործ աշխատանքի մարդիկ նետուեցան իրենց սաջև բացուած ասպարէզներու մէջ : Ահա՛ այդ օրէն սկսաւ արդէն ներքին, խուլ ընդդիմութեան, ինքնազաշտպանութեան, հակամարտութեան անհրաժեշտութիւնը՝ շահագործող տարրերու համար, որովհետև աշխատանքի տարրերը կը գրաւէին իրենց դիրքերը, վերաշինութեան համար կը քանդէին հրեւոթիւնները, մաքրագործութեան համար կը մատնանըչէին կեղտերը, գործանելու համար կը մերկացնէին զեղծումներն ու շահագործումները :

Անմիջապէս որ աշխատանքները սկսան՝ խուլ հակամարտութիւնը կռուի շեփորը պիտի հնչեցնէր ու հնչեցուց :

Ի՞նչ որ տեղի ունեցաւ և կը շարունակէ տեղի ունենալ պետական կեանքի մէջ՝ նոյնը տեղի պէտք էր ունենար մեր ներքին ազգային մշակոյթի, վարչական կեանքին մէջ : Պետական կեանքի մէջ վերաշինութիւնները իրականացնելու համար՝ Մարտ 31էն, Կիլիկիան Եղեռնէն յետոյ, վերջապէս համոզուեցան՝ որ առանց մաքրագործութեան, հին գործիքներով, հին տարրերով, հնազաշտ ուղեղներով, անընդունակ մեքենաներով կարելի չէ տանիլ ու իրագործել վերաշինութիւնը, ու սկսան դիմել այդ ընտկան ճանապարհին : Նոյնը և մեր ներքին կեանքին համար անհրաժեշտ էր, է և պիտի ըլլայ : Բայց մենք ուշացանք և մեր ներքին կեանքի Մարտի 31ը նոր է որ

ատաջ կու գայ ու պիտի գայ համանման մեթոտով, համանման գործելակերպով, նոյնատիպ գործողներով, իրենց էութեամբը, իրենց ուղեղներով ու մտածելակերպերով հակասահմանադրական տարրերով և ամբոխավարութեամբ:

Չկայ ազգային եկեղեցական-կուլտուրական հիմնարկութիւն մը, — Պատրիարքարան, Առաջնորդարան, Հիւանդանոց, վանքեր, եկեղեցիներ, վարժարաններ, կալուածներ, պարտքեր, առեկիքներ, կտակներ, կտակակատարներ — ուր զեղծումը մուտք գործած չըլլայ, ուր անարժան ուսուցիչ, անարժան տեսուչ, անարժան պաշտօնեայ, առաջնորդ, քահանայ, խնամակալութիւն, հոգարարձութիւն և ժողովական, երէկ կամ այսօր, խըմբովին կամ այս ու այն անհատով՝ իր աւերումը գործած չըլլայ, իր բոյնը դրած կամ դնելու հետամուտ չըլլայ:

Ներքին վերաշինութեան, ստեղծագործութեան կեանքը վերստեղծելու համար կամայ և ակամայ ո՛չ միայն դէմ առ դէմ կանգնած կը դանուխ այդ տարրերուն կամ անհատներուն հետ, ստիպուած կ'ըլլաս մերկացնելու զեղծումն ու զեղծանողը, մաքրելու և վտարելու միջոցներ ձեռք առնել, — այլ և ստեղծել այնպիսի կարգեր որ փակեն դռները զեղծարարներու դէմ, զրկեն հնարաւորութիւնը անոնց շահատակութիւններուն:

Գործը սկսեր էր մանաւանդ կեղբոսէն՝ դանդաղ, աննկատ, բայց հաստատ, հիմնական կերպով:

Ահա՛ այդ սկզբնաւորութիւնն էր որ պէտք էր արդիլիւ, պէտք էր քանդել . . . :

Եւ սկսաւ . . .

Մեր ներքին կեանքի Մարտի 31ի նախօրեակին էինք:



XI

Այո՛, մեր ներքին կեանքի Մարտի 31ի նախօրեակին էինք, համանման գործելակերպով, նոյնատիպ տարրերով :

Մեր նախընթաց յօդուածներու շարքին մէջ փաստացի ազացոյցներով, դերակատարներու մասնանշումներով ցոյց տուինք Պոլսահայ, աւելի ճիշտը Տաճկահայ Մամուլի—բացառութիւնները դուրս թողած—, հոգեւորականութեան որոշ մասի գործ դրած ստութիւնները, խեղաթիւրումները, կեղծիքները, դաւերը և մասնութիւնները՝ վարկարեկելու համար Գաշնակցութիւնը, ծածկելու համար իրենց մտքի ու սրտի սնանկութիւնը, ազատուելու համար իրենց կաշառակերութիւններու պատասխանատուութենէն, արգիլելու համար զեղծումներու մերկացումն ու զեղծանողներու պատժումը, փակելու համար երեսօղիմական Փանաւան, զիժել տալու համար մաքրագործումն ու ազգային հիմնարկութիւններու՝ ներքին կուլտուրական-վարչական կեանքի վերակազմութիւնը :

Դիտեցէ՛ք սր այդ մամուլը, աւելի ճիշտը՝ Մամուլի վեհ՝ անուան անարժան զանգուածը, ամէն մէկը իր բաժնին, իր հասցէին ուղղուած, ապացուցուած կաշառակերութեան, դաւադրութեան և մասնութեան մեղադրանքներէն ո՛չ մէկը իրենց թերթին մէջ ո՛չ յիշատակեցին և ո՛չ ալ անոնց պատասխանեցին : Յիշատակելն ու պատասխանելը հետաքրքրութիւն պիտի արթնցնէր իրենց ընթերցողներուն մէջ փնտուելու մեղադրանքներու էութիւնը և դիմելու մեղադրանքներու ազդիւրին՝ Ազատամարտին, ինչ որ բարոյապէս շատ սուղի պիտի նստէր իրենց : Ուստի, խոհեմութիւն համարեցին լուրջեմը

կուլ տալ, ընդունիլ այդ ամէնը, և սակայն շարունակել իրենց սուտերն ու խեղաթիւրումները, Մամուլի մէջ պակաս թողուածը բերնէ բերան, ականջէ ականջ հասցնելով ու տարածելով . . . :

Մեր նախորդ յօդուածով մենք ցոյց տուինք բոլոր այն տարրերը՝ որոնք իրենց տնտեսական, հասարակական գիրքովն ու մտածելակերպովը էապէս հակասահմանադրական, շահագործող ըլլալով, սակայն իրենց շահերուն բերումով՝ որքան ալ իրենք իրենց մէջ հակամարտ ըլլային, պիտի դաշնակցէին իրարու հետ՝ Դաշնակցութեան դէմ :

Այդ տարրերէն դուրս կայ ուրիշ տարր մըն ալ՝ որ քաղաքական կուսակցութիւն անունը կը կրէ, աւելի ճիշտը քաղաքական կուսակցութեան մը կը պատկանի, հետեւարար նոյն կուսակցութեան ընդհանուր սկզբունքի տեսակէտներէն ու դաւանանքէն ստիպուած՝ պարտաւոր էր, հասարակային շահերու քարձութեան ըմբռնումներով, այս պայքարի շրջանին, կանդնիլ մեր կողմը :

Բայց, չունեցան այդ առաքինութիւնը, քաղաքացիական այդ քաջութիւնը . . . , մանաւանդ բողոքէն, երեւոյթը ըմբռնելու խելքը, ընդունակութիւնը :

«Ինչո՞ւ նախ մեզ չէք ընդունիր համերաշխութեան մէջ» ի բամբասանքներով համերաշխութեան ողբերգու այդ տարրերը վաղճւց, շատ վաղուց, Օսմանեան Սահմանադրութեան վերայտարարութենէն յետոյ ալ չդադրեցան ուղղել իրենց բուրթ սլաքները, դադրեցան կրկնել «գլխէն հօտածներու» լուտանքներ, չդադրեցան իրենց առաջնորդողներով հերքուած ստութիւններուն վերարտադրութիւններէն :

Եւ անոնք ալ դաշնակցեցան միւսներուն հետ :

Դաշնակցեցան, որովհետեւ իրենց կը թուէր թէ

յարձակումը միմիայն Գաշնակցութեան դէմ է : Անյայտութենէն երեւան գալու , դիրքեր գրաւելու համար յարմար առիթ համարեցին օգտուիլ : — Ապացո՛յց թէ ս՛րքան հեռի , անընդունակ են հասարակական երևւոյթները ըմբռնել :

Կսիւր , յարձակումը ո՛չ թէ Գաշնակցութեան , այլ քաղաքական , սահմանադրական կուսակցութիւններու և տարրերու դէմ էր : Եթէ առաջին յարձակման նիւթակայ էր Գաշնակցութիւնը , այդ միմիայն անոր համար էր՝ որ Գաշնակցութիւնն էր նոր կեանքի և աշխատանքի հակադէմ վրայ կանգնողը :

Բայց Բիւզանդիոնն այս բանին մէջ ալ արտայայտուեցաւ : Վախցաւ որ մի գուցէ Գաշնակցութեան տապալուամէն յետոյ Հնչակեանները անցնին դիրքին վրայ և անոնք ալ ստիպուին գործել այն եղանակով , այն մեթոտով՝ որը չի կրնար էապէս հիմնովին տարբերուիլ կուսակցական սկզբունքային-փիլիսոփայական , անտեսական-քաղաքական աշխարհայեացքներով , եթէ միայն անհատները դաւաձաններ չեն նոյն իսկ իրենց պատկանած կուսակցութեան աշխարհայեացքին , ժողովրդատպետական , ուսմկավար սկզբունքներուն :

Զանազան կոտորակներու բաժանուող այդ տիպերն ալ պակաս չեն , որոնք Ազգ . Ժողովին մէջ ու դուրսը լեզու ու գոյն փոխեցին , մինչև փողոցային ստահակութեան դիմելով գողափարը արատաւորելու , հակայեղափոխական արշաւանքին ուժ տալու , կուսակցականութիւնը վարկաբեկելու համար , ինչպէս այդ ըրած էին ու կ'ընէին արտասահմանի մէջ : Այդ վախէն բռնուած , Բիւզանդիոնն համբերութիւն չկրցաւ ունենալ , ինքզինք մատնեց , շտապեց և սկսաւ կծել , հարուածել նաև Հնչակեանները :

Գէթ կուսակցութեան պատուին, ապագային համար կը զգաստանան արգեօք մոլորուածները. — կը կասկածիմ:

Եւ բոլոր այդ դաշնակիցները իրենց ռուսքը ուղղեցին նաև Ազգ. Վարչութեան վրայ, որովհետև դաշնակիցներէն շատերուն շահերը կը վտանգուէին Պատրիարքարանի մէջ, պէտք էին պաշտպանութեան կեդրոնը ուղղել նաև այն տեղ՝ քանդելով Վարչութեան ամրոցը, շինելու, կանգնեցնելու համար նորը՝ ուր հանդիստ պատասպարան կարող էին դանկ ու պաշտպանուիլ:

Եւ բոլորի բերնին ծամոցն է «եկեղեցին, կրօնը, հոգեւորականութիւնը» ըստ Տօքթ. Թորգոմաննի՝ նախկին հայրապետներու արժանի յաջորդները: Դաշնակցութիւնը հակակրօն, հակեկեղեցի, հակակերական և հակազգային չէր ըլլար՝ եթէ Դաշնակցականներ ուժ տուած չըլլային Հայկախան Փանաւնային՝ երեսադիմականերու մերկացումներուն ու մաքրագործումին, եթէ մշտյուցած չըլլային անտեսութիւն և կարգ Աղթամարի մէջ, եթէ Ազգ. Հիւանդանոցի վերակազմութիւնն ու մաքրագործումը օրակարգի մէջ մտցուցած, որոշ ընթացք տուած չըլլային, եթէ «խնամակալութիւն» անունով հակասամանադրական մարմիններու գոյութեան խնդիրն ալ օրակարգի մէջ մտցնելու հետամուտ եղած չըլլային, եթէ Պատրիարքարանէն սկսած բոլոր Ազգ. Վարչական միջոցներու ուղղելու, կարգ ու սահման դնելու ծրագիրը մշակած չըլլային, եթէ պինդ բռնած չըլլային ամենաձանր սամբաստանութիւններու ենթարկուած Առաջնորդ-Արմաշականներէն՝ Դուրեան Թաթուլ և Թորոզ վարդապետները և ուրիշներու կարգը պատրաստած չըլլային:

Միջանկեալ .— Ազգթամարը ունի նաև ուրիշ գաղտնիք մը : Քանիցս ցանկութիւն է յայտնուեր Եկեղեցիի որոշ իշխանաւորներու, որոշ ընտանիքներու Ազգթամարայ Կաթողիկոսական ընտրութեան հարցը ձեռք առնել : Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտուելու յոյսը չունեցողներ, Պոլսոյ Պատրիարքութեան թեկնածութենէն զրկուածներ, Երուսաղէմի նախկին վաղեմի միաբան ըլլալը Յարութիւն Պատրիարքի ներքողականով յիշատակելու և այդ յիշատակութեամբ Տեղապահացուի իրաւունքը զգացնել տուող բայց մուրաշին չհասնողներ՝ իրենց յատուկ ցանկութիւնը ունէին զէթ Ազգթամարի Կաթողիկոսը դառնալու, անբաժան Եկեղեցիի բաժաննալ և յապետութիւնը վերահաստատակու :

Ժամանակաւոր անյաջողութիւնը չէր յուսահատեցներ նպատաւոր, յաջող պայմաններ ստեղծելու, և առ այդ՝ ամէնէն առաջ, Ազգթամարի մէջ հաստատուած կարգն ու անտեսութիւնը քանդելու համար :

Եւ զիտեցէ՛ք, որո՞նք են Ազգային Լ՛նդհանուր Ժողովի մէջ Վարչութեան զէմ անյնքան ողորմելի ու արգահատելի սլաքաբար մղողները, — նոյն Երուսաղէմի Փանաւայականները, նոյն Ազգթամարեանները, նոյն կուսակցականները՝ որոնք իրենց դաշնակիցները ունին մեր յիշած շահագործող տարբերուն մէջ, ազգին (100,000) հարիւր հազար ռակիի յափշտակութեան ներկայացուցիչները, որոնց մասին անխոնկաւորքիւնը ունեցեր էի վաղաժամ կերպով ակնարկներ ընելու :

Դաշնակցութեան, Ազատամարտի և Սահմանադրութեան զէմ մղող կուռի բանակատեղին Ազգային Լ՛նդհանուր Ժողովն եղաւ : Ռմբակոծուող մարտկոցը՝ Քաղաքական Ժողովը, որուն միջնաբերդն էր Կրօն. Ժողովը, որ վաղուց անձնատուր էր եղեր այդ դաշնակիցներուն : Ռազ-

մական հրահրութեան էին Պատրիարքի հրատարականը, Ատանայի Ազէտը, Պատրիարքի սահմաններու գոնացում, Ազգային առանձնաշնորհումներ և Եկեղեցիի—Ազգի շահեր:

Դաշնակցութիւնը հակակրօն, հակեղեցական, հակազգային չէ՛ր ըլլար, եթէ Դաշնակցականներ չխշեցնէին ազգային ցաւերու կեղծաւոր Երեւիային, առանց ո՛ր և է պաշտօնով հարկադրուած ըլլալու, Համբոտեան գարշապարներուն համբոյրներ տեղացնելը, Երլարզի շնորհաութեան այցելութիւնները, եթէ հրապարակ չընէին բարապանի սպանութեան անխղճահարութիւնը:

Ահա՛ Դաշնակցականներու այս բոլոր մեղքերն ու ունիւնները, 10ական փարայի գծուծ շահերն են՝ որ Դաշնակցութիւնը հակակրօն, հակեղեցական, հակազգային կը շինե՛ն . . . :

Կրօնը, Եկեղեցին, Ազգային Առանձնաշնորհումները և Ազէտներու դարմանումի հարցերն են՝ որ ժողովուրդի, ամբողջի զգացմանց թելերը կը թրթռացնեն: Այդ թելերուն պէտք էր դարնել, ու դարկին, ինչպէս դարնուած էր Մարտ 31էն առաջ:

Օսմանեան Սահմանադրութիւնը վտանգելու, բէաքսիօնը յաղթանակելու համար փորձուած գործելակերպն էր՝ ցոյց տալ Շէրիաթը արհամարհուած, անտես առնուած: Օսմանեան Սահմանադրութեան վտանգումը, բէաքսիօնի յաղթանակը ապահովելու համար փորձուած գործելակերպն էր ցոյց տալ՝ որ շէրիաթն արհամարհողը, անտես առնողը, ազգութեանները Իթթիհատականներն են, որովհետեւ դաւադիր յետաշրջականները գիտէին թէ Սահմանադրութեան պաշտպանութեան համար միակ ուժը Իթթիհատ-թէրազգըն է:

Այժմ ալ մեր ներքին կեանքի բէաքսիօնը յաղթանակել տալու, Ազգային Սահմանադրութիւնը ըստ հաճոյս

ապաստանանադրականորէն իրենց շահերուն ու դիրքերուն պահպանութեան ի նպաստ շահագործելու համար՝ կ'իրագործուի նոյն մեթոտը, նոյն միջոցը. — Շերխաթի փոխարէն՝ Հայ Եկեղեցին, իսլամական ազգութեան փոխարէն՝ Հայ ազգային ձուլումը, Իրքիևասի փոխարէն՝ Դաշնակցութիւնը, Շուրաի Իւմևեթի, Թանիլի փոխարէն՝ «Ազատամարտ»ը. Փարլամենթի փոխարէն՝ Հայ ազգին Լ'նդհանուր ժողովը. Ահմէտ Բիգայի, Թալէաթի, Ճաւիթի, Ճահաթի փոխարէն՝ Ակնուէնի, Զարդարեան, Շահ-րիկեան :

Այն ժամանակ ալ, Համիտի գերիշխանութեան, Շէրխաթի ամբողջական կիրառութեան համար կը կազմէին ժողովրդական հանրագրութիւններ, հիմա ալ Պատրիարքի հեղինակութեան և պաշտպանութեան համար կը կազմեն հանրագրութիւններ, կարծէք փարլամենթական մէն մի պատգամաւորի, ազգային մէն մի երեսփոխանի համար զիրենք ընտրող բիւրաւոր քաղաքացիներու և ազգայիններու ձայնը աւելի քիչ նշանակութիւն և արժէք ունի՝ քան մէկ քանի հազարը :

Լ'նդհանուր գծերու մէջ աննշան տարբերութիւն մը կայ միայն : Բիւզանդիոն՝ Մարտ 31էն առաջ, չկրնալով նախագուշակել Մարտ 31ի պետական հարուածը, կը քծնէր, կը շոյէր ու կը պաշտպանէր անպատասխանատու մենաաիրութեան ախտով բռնուած Իրքիևասը : Այսօր նոյն Բիւզանդիոնը կը վարկարեկէ պատասխանատու համերաշխութեան յարած Իթթիհատը :

Կրօնական ժողովի ըմբոստութեամբ, ազգասիրական կռուի շեփորով՝ ներքին կեանքի շօտքն կ'իստով չափ կատարուած էր : Լրացումը կատարուեցաւ Ազգային ժողովի դեկտեմբերի 19ի և յաջորդ նիստերու հակասական ու հակասահմանադրական որոշումներով :

Ինչ եղաւ արդիւնքը :

—Վարչութեան Քաղաքական Ժողովը քաշուեցաւ ու սեղը նորը ընտրուեցաւ՝ որ ստիպուած եղաւ ընդգրկելու և հետեւելու իր նախորդին քաղաքականութեանը, առանց, սակայն, նախորդին հեղինակութիւնը ունենալու :

Կէս դարու ընթացքի մէջ նմանը չտեսնուած աստիճան բարձրացած Ազգ- արժանապատուութիւնն ու Ազգ-Վարչութեան խօսքի ու դիմումի արժէքը նսեմացաւ, իջաւ նախկին մութրացիկի, խնդրողի ստորնացումին և չորս ամիս յետոյ՝ յենուած միմիայն նախորդի արդիւնքներու վրայ, վարչութիւնը ստիպուած եղաւ բերել Լ՛նդհանուր Ժողովի հաւանութեանը ենթարկել Պատրիարքի վերադարձի որոշումը :

Եւ նոյն ընդհանուր Ժողովը՝ անշուշտ իր սխալներու հետեւանքներուն ճնշող ազդեցութեան տակ, ստիպուած եղաւ մեղամաղձոտ համակերպութեամբ հաւանութեան որոշումը տալ :

—Կրօնական Ժողովի Սրբազան հայրերը թէև կորսնցուցին իրենց յոխորտանքը, բայց չեն յուսահատած ու կը շարունակեն իրենց դաւերը ամէն մէկ մաքրագործում վիժեցնելու, ամէկ մէկ վերանորոգում քանդել տալու համար :

—Հայկական Փանամայի՝ Սաղիմական բանակը քաջալերուած Կրօնական Ժողովի Սրբազան ատենապետներէն, կը շարունակեն իրենց ըմբոսաութիւններն ու շահատակութիւնները նոյն իսկ Ազգային Ժողովի հեղինակութեան դէմ :

—Ազգային ամենակենսական խնդիրներ բարձի թողի եղած, կը շարունակուին զեզձումները և կը շարունակեն ակտու գրաւել Փանամայի հերոսները, հետզհետէ իրենց օձիքը կ'ազատեն զեղծարար հոգեւորականները :

Անգամ մըն ալ հրապարակ ելաւ դերերու և դիրքերու այն մեծ տարբերութիւնը՝ որ ամենացայտուն կերպով արտայայտուեցաւ ու կ'արտայայտուի հայկական ու համապետական կեանքի, իրականութեան, վերածնութեան աշխատանքին ու գործելակերպին մէջ :

Պաշտօնական աթոռներ գրաւելը չէ եղեր մեր նպատակը : Կուսակցութիւնը այդ աթոռներով չէ՛ որ քսան տարուայ պայքար է մղեր, այդ տեղերուն մէջ չէ՛ որ իր պատնէշներն է բարձրացուցեր :

Մենք մնացինք ու կը մնանք միշտ մեր դիրքերուն վրայ և մեր առջև կանգնող գաճաճները չէ որ մեզ փախուստի սլախի մատնէին : Համլտական ու Յարական հալածանքներուն կուրծք սուտը չէ՛ որ սլախ փնտռէ թագստոյ : Մենք պէտքը չունինք և Ապրիլի 13ի, սրովհետև Ազատագրող բանակը մենք իսկ ենք :

Փոքրագոյնացեալութեան կոխը համաշխարհային է : Մենք մինակ չենք : Շահագործողներու անկումն ու անդատութիւնը կեանքի անխուսափելի օրէնքն ու վճիռն է : Յազթանակողներու առաջինը մենք չենք և վերջինը մենք չպիտի ըլլանք : Մեր առաջ կանգնող պարմելիներու օձիքը մեր ձեռքին մէջ է արդէն : Վա՛յ իրենց :

XII

Ես բնաւ նպատակ չէի ունեցած և չունիմ բանակրուելի մասնել հակառակորդներու հետ :

Ճշմարտութեան խուզարկուները, ճշմարտութեան մօտենալու ցանկացողները ո՛չ թէ կը բանակուին, այլ կը վիճին՝ երեւոյթները պարզելով, կնճիռները վերլուծելով :

հարցերը սկզբունքի տեսակէտէն քննելով ու հետեւողականութեամբ եզրակացութիւններ դուրս բերելով, փաստերու վրայ հիմնաւորուած :

Հասարակային, տնտեսական, քաղաքական և այլն տեսութիւնները բաժնուած են գիտականօրէն զանազան Գպրոցներու :

Ո՛չ օքէ չէ կարելի պահանջել որ անպատճառ այս կամ այն Գպրոցին պատկանի : Անհատը իր ներքին ձրգոտումներուն, զարգացման, Ըմբռնողութեան, դատողութեան, հասունութեան, խառնուածքին և այլ ազդեցութիւններովը կ'ընդգրկէ այս կամ այն Գպրոցին աշխարհաճայեացքը, կամ հրապարակ կը բերէ նոր տեսութիւն մը, նոր սկզբունք մը : Աշխարհաճայեացքներու և Գպրոցներու այս զանազանութիւնը բնականաբար զանազանութիւն կը ստեղծէ նաև հասարակային կեանքի երեւոյթներուն միջև, իրականութեան վերլուծման եզրակացութեանց և գնահատման մէջ, ինչպէս նաև գործ դրուելիք միջոցներուն և ընթանալիք ճանապարհներուն մէջ :

Ո՛չ միայն տարբեր աշխարհաճայեացքներու և Գպրոցներու պատկանողներուն միջև բնականաբար գոյութիւն ունի և կ'օրհնեայ այդ գնահատումներու տարբերութիւնը, այլ և միեւնոյն Գպրոցին պատկանողներու միջև եւս առաջ կու գան երեւոյթները տեսնելու ընդունակութեան, երեւոյթներէն վեր առնուելիք կէտերու, բնորոշումներու և հետեւաբար եզրակացութիւններու տարբերութիւններ :

Այս ամէնը բնական են, կան ու պիտի ըլլան, և յառաջդիմութիւնը ատոր մէջ է, այդ տարբերութեանց մըրցման արդիւնքն է յառաջդիմութիւնը :

Այդ տարբերութիւնները ունին իրենց ընդհանուր և ստորաբաժանեալ յարանուանութիւնները, — պուրժուա-

կան , ընկերվորական , պահպանողական , ռամկավորական , արմատական , ևւն . :

Քաղաքակրթութեան արժանիքը և պատիւը անոր մէջ կը կայանայ՝ որ այդ բոլորն ալ , իւրաքանչիւր յարանուանութիւն , ամէն մէկ աշխարհահայեացք , ամէն մէկ Դպրոց՝ հետեւանք ազատ մտածողութեան , պայմանաւորուած են իրարու հանդէպ յարգանքով , այսինքն իւրաքանչիւրը կը յարգէ միւսին ազատ մտածողութեան , համոզումներուն իրաւունքը :

Ո՛չ կեանքը , երեւոյթները և պայմանները միօրինակ , միեւնոյն տատիճանի վրայ կը մնան և ո՛չ ալ մտածողութիւնները , դատողութիւնները և եզրակացութիւնները , և հետեւարար անոնցմէ հետեւյուցած սկզբունքները : Այսօրուայ աղատական , արմատական համարուածը՝ վաղը պահպանողական կարգի կ'անցնի : Յառաջդիմութեան անդիմադրելի օրէնքն է այդ :

Ո՛չ ոք չի կրնար այգանել և մեղադրել ուրիշ մը թէ ինչո՞ւ իրեն պէս չի մտածեր , չի դատեր . եթէ այդ տարբերող սկզբունքները և աշխարհահայեացքները համոզմունքի հետեւանք են , ունենալով մէկ առարկայ , — հասարակական կեանքը , և անոր հասարակական բարիքը :

Երեւոյթներու և իրականութեան վերլուծման մէջ՝ հայեացքներու և կարծիքներու տարբերութեանց բաղխումը լոյս կը ցայտեցնէ , եթէ ո՛չ բացարձակ , դէթ մօտաւորագոյն ճշմարտութեան կը մօտեցնէ քննութիւնը և վերլուծումը բազմակողմանի դարձնելով , մէկուն չտեսածը միւսը տեսնելով , մէկուն մեկնել չկրցածը միւսը մեկնելով և պարզելով :

Հայեացքները պիտի բաղխին , կարծիքները պիտի ընդհարուին՝ առանց յետին մտքերու , առանց անձնական միտումներու , մաքուր ու ազնիւ կերպով , ընդունելով

փաստերու էութիւնը, իրականութիւնը այնպէս՝ ինչպէս որ կայ, առանց խեղաթիւրելու: Աս է վիճարանութիւնը սուրածն ու վիճարանութեան պայմանը:

Այդ է քաղաքակիրթ տարրերու, քաղաքակիրթ աշխարհի մէջ կատարուածը, քաղաքակիրթութեան և յառաջդիմութեան սատարը՝ որուն մենք ամէնէն աւելի պէտք ունինք, և որուն մենք կը ցանկանք:

Տարաբազդաբար մեր մէջ կատարուածը այդ չէ: Խօսքի, Մամուլի ազատութեան զեղծումն է, չարաշահումն է, շահագործումն է, որովհետև չեն վիճիր փաստերու և իրականութեան վրայ հիմնուած, այլ երեւոյթները խեղաթիւրելով, սուտերը իրրեւ փաստ ներկայացընելով, ներկայացուած փաստերը ուշադրութեան չառնելով, զրպարտելով, դաւելով, հայոյելով, զրգուումներով և մասնութիւններով:

Այս պայմաններուն մէջ ո՛չ վիճարանութիւն կայ և ո՛չ կարծիքի կամ կարծիքներու տարբերութիւն: Այդ տեղ առարկան՝ կեանքի իրականութիւնը, նպատակը, ճշմարտութիւնը և հասարակական բարիքը չէ՛ և չի կրնար ըլլալ: Այդ պայմաններուն մէջ ենթադրել թէ կարելի է վիճիլ՝ թիւրիմացութիւնները պարզելու, ճշմարտութիւնը որոնելու և ցայտեցնելու համար, — անբնական, անհնար բան է:

Այս պայմաններուն մէջ բանակրուելու ալ չենք զիջանիր, որովհետև նախ որ անօգուտ է, երկրորդ որ ժամովաճառութիւն է: Ապարդիւն սշխատանք, ժամալաճառութիւն չէ՛ մեր ցանկութիւնն ու կոչումը:

Մեր խօսքը անոնց չէր ուղղուած ուրեմն, այլ հասարակութեան՝ որ խեղաթիւրումներու, ստութիւններու և զրպարտութիւններու հանդէպ թիւրիմացութեանց կ'ենթարկուէր: Եւ եթէ անճաւորութիւններ չօչարի-

ցինք, այդ միմիայն անոր համար էր որ «Ազգասէր»ի դիմակի տակ թաքնուածներու դիմակը պատուելով՝ խակահան դէմքերը ներկայացնելու համար ուրիշ ելք չի կար:

Մենք միայն փաստերը հրապարակ դրինք ու մերկացուցինք դառն իրականութիւնը: Այսուհետեւ ալ կը շարունակենք ընել նոյնը:

Ի զսէր փիլիսոփայութեանց և սկզբունքներու անունէն խօսելով մնգի սորվեցնելու յոխորտանք կ'ընեն: Այդ յոխորտանքին «մէջը թաղուելու» սպառնալիքով իրենք զիրենք կը գնահատէին միայն: Ուստի, զրօպարտութեան, խեղաթիւրիւմի, խռովութեան և մատնութեան համար սկզբունքներու անունով և վարդապետութիւններէ ճառելը՝ սրբապղծութիւն է, որոնց մէջ արդէն թաղուած են: Կը ցանկայինք, բայց յոյս չունինք՝ որ վեր կը բարձանան:


Գ Ե Ր Զ



ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ

Ք. ԱՐՉՈՒՄԱՆ

№ 39



[In 504]

A $\frac{I}{9672}$

ԱՐՄԻ ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ ԳՐԱ

ՀՐԱՑԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



I ՇԱՐՔ.—ՄԱՏԵՆԱՇԱՐ ԱԶԳԱԿ

- | | |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------|
| | ՉԲԶ. |
| 1. ԿԱՐՄԻՐ ԼՈՒՐԵՐ ԲԱՐԵԿԱՄԷՍ, Սիամանթօթ, (12 զարհուրեցի զրուագներ՝ Կիլիկիան աղլուէն. է. Ակնունիի տապանագրով) | 3.50 |
| 2. ԸԱԶԻ ԲԷԳ, Վրթանէս Փափագեանի (Վէպ նայ յեղատխտական կեանքէ) | 6.— |
| 3. ՅԵՂԻՆ ՍԻՐՏԸ, Քերթուածներ, Դանիէլ Վարսժանի (Քաղնին վրայ. Կրկէտին մէջ. Գիւցազնազլպեր) | 9.— |
| 4. ՅԱՅԳԱԼՈՅՍ, Ռուբէն Զարդարեանի (Կը բովանդակէ նեղինակին բոլոր զրական էջերը՝ պատկեր, ներսնամ, արձակ բանաստեղծութիւններ, վիպակներ) | 7.50 |

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԵՆ ՈՒՐԻՇ ՀԱՏՈՐՆԵՐ

II ՇԱՐՔ.—ԿԱՐՄԻՐ ՏԵՏՐԱԿՆԵՐ

- | | |
|----------------------------------------------|-----|
| 1. ՄԵՐ ՀԱԻՎՏԱՄՔԸ, Ատոմի | 4.— |
| ՄԱՄՈՒԼԻ ՏՈԿ Է | |
| 2. ԳՐՈՒԱԳՆԵՐ ՍԱՍՈՒՆԻ ԿՈՒՆԵՐԷՆ, զրեց՝ Սուպուհ | |

ԳԻՆ 4 ՂՐՈՒՇ